



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ed. Lippincott
Philadelphia

891.99

2-30

891.99

6 NOV 2011

4-30

Պոլսացիները բոլոր յերկրների միացե՛ք!

u. r.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ԲԱՆՎՈՐ)

3930

== ԲԱՆԴԻՏՆԵՐ ==



3 ԳՈՐԾ. 5 ՊԱՏԿԵՐՈՎ

ԴՐԱԾԵՏԻԿ. ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳՅՈՒՂԱԿ. ԿՅԱՆՔԻՑ

1920—1922

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԼՈՌ-ՓԱՄԲԱԿ ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ
1924 թ. ՂԱՐԱՔԻԼԻՍԱ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- 1. ՌՍՏԱՄ ԲԵԳ. Գյուղի իշխան
- 2. ՅԵԳՈՐ Գյուղի վաճառական
- 3. ՀԵՂԻՆԱՐ Յեգորի կինը
- 4. ՄԱՆԻՇԱԿ » աղջիկը
- 5. ՅԵՂԻՇ Գյուղում աշխատող
գարբին
- 6. ԲԱԴԱԼ Յեղիշի հայրը
- 7. ՄԱՐԻԱՄ » մայրը
- 7. ԳՅՈՒԼԻԶԱՐ » քույրը
- 9. ՂԱԶԱՐ } Դարբնոցում միասին
- 0. ՍԱՀԱԿ } աշխատող բանվորներ
- 1. ՔՅՈՒՎԱ
- 2. ԳԶԻՐ
- 3. ՏԻՐԱՅՈՒ
- 4. ԱՂՍԱԽԿԱԼ
- 5. ԲԱՆԴԻՏՆԵՐ
- 6. Ռստամի յերկու ծառան, սագանդարներ ու Չե-
կիսաներ:



ՆԱԽԵՐԳԱՆՔ

I ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է Ջիլավիխանենց Յեզորի տան բակը՝ Առաջին պատշգամբ. ցանկապատով շրջապատված փոքրիկ պարտեզ:

Ամառվա որ ե:

Տ Ե Ս Ի Լ 1.

ՄԱՆԻՇԱԿ ՅԵՎ ԳՅՈՒԼԻՉԱՐ

Մանիշակն ու Գյուլիգարը ցանկապատի մոտ կսկզբել հարեփան ցնում կռվող ամուսինների խոսակցությունն են լսում:

ՉԱՅՆ. (Խորհում) Յես քեզ ասում եմ ձեռքդ կտրի, թե չե կզամ մազերիցդ կբռնեմ կզցեմ վտաններիս տակը ենքան կտամ, վոր կատկես... լեզուդ դու շատ ես յերկարացրել. հետք խոսել չի լինում...
(այս խոսակցության հետ միաժամանակ լսվում է կանացի լացի ձայն)

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՀԵՂԻՆԱՐ

ՀԵՂԻՆ. Ի՜նչ էք գող կատվի նման կռացել, չափարի տակի մտիկ տալի. քաշվեք գնացեք տուն, կտենան, ամոթա

ՄԱՆԻՇ. Ա մեր, սրանց կռիվը նորից սկսվելա.

ԳՅՈՒԼԻՉ. Մարդու ձեռին եդ խեղճ կնիկը ինչ որո քաշում. շան լողափը թափեց գլխին: Ահուց նրա լեզուն կողմվելա, մարդու առաջ կարում չի թե ձեն հանի: Ան լեզու հեյվանի պես քաշվելա զրադ—կանգնել լաց ըլում... Հեղինար բաջի մեծ կնիկ ես, գնա նրանց բարըշացրու.

ՀԵՂԻՆ. Ինչ հաշիվ ունենք նրանց ընտանեկան գործերում խառնվելու: Հայհոյանք լսելը լավ բան չի, քաշվեք գնացեք ձեր գործին: Յերկու որ չկա դրանց պատկվելը, արդեն շուն ու կատու յեն դառել. հողա դրանց գլխին:

ՄԱՆԻՇ. Ա մեր, նրանց կռիվը քանի գնում, սարսկանումա. գնա իմացի բանը ինչու՞մնա, միջամտի ու նրանց բարըշացրու. հարևանությունը բա ել վոր որվա համարա...

ՀԵՂԻՆ. Յես ձեզ ասեցի, վոր մարդ ու կնիկ կավի մեջ ուրիշը չպիտի խառնվի: Դե վոր ըզենց հետաքրքրվում եք, քաշվեք դրադ, ահանջներդ դինջ կանգնեք հեռվից թամաշա արեք: Զանները դուրս գա. աքլարի նման թող ենքան կռվեն, մինչև վոր կբեզարեն ու տանց մեր քոմագ անելու ել նրանք իրար հետ կբարըշեն: Հողս նրանց գլխին. մարդ ու կնիկ իրար հետ վոր յուր չպիտի գնային, ել ի՜նչի յեն պատկվել, սվ եր դըրանց գլուխը կտրում...

ՄԱՆԻՇ. Դրանք վոր նշանված եյին, իրար հետ շատ սիրով եյին. իրար հետ սաղ որը պատրուշկա արած ման եյին գալի. գեղը տակից գլուխ չափում ու չափչփում եյին... տեսնողը դրանց յերանի յեր տալիս...

ՀԵՂԻՆ. Բա հմի եդ ինչ սե կատուա մեջներովը անցկացել, վոր դրանք ըզենց շուն ու կատու յեն դառել ու իրար հետ յուր չեն գնում: Առավոտը լիսանումա թե չե, ըսենց կանգնում են ու սաղ որը իրար միս դըդգում... Ասենք տղամարդկանց խոսիաթնա. նրանք

նշանակելուց ուրիշ սրտի, ուրիշ մտքի յեն ըլլում, պը- սակվելուց հետո՝ ուրիշ...

ԳՅՈՒԼԻԶ.— Հեղինար բաջին զրուստա ասում. աղամարդիք փիս խասյաթի տեր են.

ՀԵՂԻՆ.— Նրանք նոր վոր նշնվում են, առանցի նշանածի փտը-վոտի առաջ չեն դնում: Ուր՝ վոր ել գնալու ըլին, իրանց նշանածին ել քաշ կտան, կատվի ճուտի նման հեաները ամեն տեղ կտանեն: Նրանց հետ մութ ու խովլաթ տեղերում իրար հետ քաղցը զրիցներ ու մասլահաթներ կանեն: Մինչև իրանց կյանքի վերջը իրար հետ սերով ապրելու խոստումներ կտան... համա հենց վոր պսակվում են թե չե, խասյաթները են սը- հաթը փոխվում. ավամ խոստումներն ու իրանց քաղ- ցըր զրիցներն ու մասլահաթները նրանք ընենց շուտ մոտանում են, վոր կասես սրանք ել են սիրահարված- ները չլինեն: Ը՛հ, հողս զրանց մտքափոխ գլխները...

ՄԱՆԻՇ.— Ամեն աղամարդ հո մի խասյաթի չի ըլլում, ամեր. նրանց մեջ լավնելա ըլլում, վասն ել. նայած ում բախտին ինչ խասյաթի տերա ուստ գալիս:

ՀԵՂԻՆ.— Իրանք դիփն ել մի զալբից դուրս յեկած, մի թո- փից կտրած զիրիլներ են. զրանց լավը չկա. ես հա- սակի կնիկարմատ եմ, մի խելքը գլխին աղամարդ չտեսա, վոր մինչև վերջ իր կնկա հետ սիրով ապրի: Պսակվելուց հետո զրանք դիփն ել քուսնում են ու քոս ճրագի նման ել իրանց աակը լիս չեն առլիս: Իրանք վորտեղ մի սիրուն կնիկ կամ աղջիկ կտեսան՝ կգժվեն ու մտքները կփոխվի, կզան տուն դասդի կը- սիվ, շամաթա կրարձրացնեն, վոր չլինի թե իրանց կնանիքը իրանց ծուռ միտքը հասկանան... Ը՛հ, հողս զրանց աչքածակ գլուխը. զրանք իրանց տանը մի կնկա տեղ տասը կնիկ ել վոր ունենան, զրանց աչքը իլի դուրսը՝ ուրիշի կնկա վրա կլնի...

(Գյուլնագն ու Մանիթակք ծիծաղում են)

ՄԱՆԻՇ.— Ա մեր, դու եղ ինչեր ես ասում...

ՀԵՂԻՆ.— Յես, ինչ վոր զրուստա՝ են եմ ասում. աղամարդ- կանց դուք զեռ չեք ճանաչում. կտրվի զրանց մուռ- տառ խասյաթը. զրանց ձեռքին խեղճ կնանիքը յեսիր են մնացել... զրանք ընենց պտուղներ են, վոր զրանց ահուցը իրանց կնանիքը մի ուրիշ աղամարդու յերե- սի ուզիլ կանգնել մտիկ տալ չեն կարողանում, իսկ իրանց վոր թողնես, սհաթներով կկանգնեն ուրիշի կնկա աչք-ունքին, վրա ու գլխին մտիկ կտան, որե- րով հեաները կուռ-կոի զցած ման կզան, սրիլ-բիլի կանեն... (Մանիթակի ու Գյուլիգար ծիծաղում են)

Դուք ծիծաղեք. ըսենց բաներ յերբ վոր պսակվեք, հետո կիմանաք... Դեռ հլա մի պսակվեք... յես ձեզ հետ են վախտը կխոսամ...

ԳՅՈՒԼԻԶ.— Պսակվելու հմա մենք չենք մտածում: Մեր ինչ ժա- մանակնա, ըզենց բաների հմա մտածենք... (Մանիթակին աչով ե տնում)

ՄԱՆԻՇ.— Ի՛նչ ենք անում պսակվելը, ըսենց ել լավ ենք ապրում:

Պսակվողների գլուխը յեղոտվելա, վոր մերն ել մեղրտավի...

ԳՅՈՒԼԻԶ.— Գժվի հո չենք, զինջ գլուխներս տանենք զալմա- գալի մեջ զցենք...

Մենք մեզ համար անջախ հանգիստ ու ազատ ապ- րում ենք...

(Մանիթակն ու Գյուլիգար Է՛տրուհակ աչով-ուեփով են տնում)

ՀԵՂԻՆ.— Լավ. լավ. ձեռներդ կտրեք. ձեզ ել ենք ճանաչում. զիտենք ինչ պտուղներ եք... Յերեսանց դուք եղ լեղ- վով չեմ ու չում անելը իմանում եք, համա ձեր կըշ- տին վոր մի նշնվելու տղի անուն տալիս են՝ հուշա ելած հորթի նման գժվում եք ու իրար գլխով ընկ- նում... հմիկվան աղջկերքը. ո՛, պա՛, պա՛, պա՛...

Աստված թափի ու ազատի. նրանք ձիւփորին ձիւոց վեր կրերեն...

(ԳՆՈՒՄ Ե)

Տ Ե Ս Ի Լ 3.

ՄԱՆԻՇԱԿ ՅԵՎ ԳՅՈՒԼԻՉԱՐ.

Հեղինարի գծալուց հետո նրանք յերկաթ ժամանակ դեռ ծիծաղում են.

ԳՅՈՒԼԻՉ. — Ախշի, իմ մերս ել մի գլուխ ըսենցա խոսում. հը միկվան ես ջանկը-ջնուլներին նա ել չի հավանում:

ՄԱՆԻՇ. — Ախշի, վոնց վոր իրանք են, նրանք ուզում են, վոր մենք ել իրանց նման չխոսկան հարս-ների պես ձեռներս խաչինք դնենք կըձքնե-րիս, առավոտվանից մինչև իրիկու աղպրիցը ջուր կը-րենք, լվացք անենք, խմոր ունցենք, կով կթենք տա-վարներին խոտ տանք—տեղավորենք, գոմն ըստա-կենք, թրիք դեն ամենք, հանգվորների համար հաց պատրաստենք, տուն դալուց նրանց արեխները հա-նենք, ջուր տաքացնենք՝ նրանց վոտներն ու գլուխը լվանանք ու մինչև նրանց քնելը դոան առաջ սուս ու փուս կանգնենք ու ամենքի առաջ դուր դառնանք... (Վոսքի ձայն Ե լսվում)

ԳՅՈՒԼԻՉ. — Ախշի, սուս արա, հերդ գալիսա, ձենդ չլի... Դե, յես գնացի. մնաս բարով...

ՄԱՆԻՇ. — Գնաս բարով. ախշի Յեղիշին իմ կողմից շուտ բա-րով կանես և կասես, վոր գրածդ նամակի պատասխան-խանը յես հետո կգրկիմ...

(Խոսելով դուրս են գնում)

Տ Ե Ս Ի Լ 4.

ՀԵՂԻՆԱՐ, ՅԵԳՈՐ, ՀԵՏՈ ՄԱՆԻՇԱԿ.

ՅԵԳՈՐ. — Յես քեզ վոնց վոր ասում եմ, դու ընենց ել արա, յես ինչ վոր անում եմ, դու վոչինչ չես հասկանում. քու խելքը գրան չի հասնում: Չուր չեն սակ, վոր կնիկարմատի մազերը յերկարա ըլում, խելքը կարճ. հենց դրա համար ել ձեր խելքը բան չի կտրում. ձեր միաքը ամեն բանի չի հասնում. մի խոսքով գլուխ-ներդ դատարկա...

ՀԵՂԻՆ. — Դրանով դուք մխիթարվում եք ելի... Այ հողս են կնկա գլխին, վոր տասը քեզ պեսներին ջուրը չի տա-նի ու ծարավ հեռ բերի...

ՅԵԳՈՐ. — Յանի դոտի բանն. թե խելքի բանա. եզ խոսքը գիտնականների, պրաֆեսորների քննած ու ասած խոսքա, դա իմ ասած խոսքը չի, վոր դու չհավատաս...

ՀԵՂԻՆ. — Ը՛հ, հողս են պրաֆեսորների, են գիտնականների գլխին, վոր ըզենց աննշան բաների մասին են մտա-ծում ու ըզենց հիմար խոսքեր են ասում... այ մարդ, հեռու մի գնա. տունը մերը, խոսքը՝ մերը. հմի դու ինձանից խելոք, ինձանից հասկացող մարդ ես...

ՅԵԳՈՐ. — Յանի յես վոր չասեմ, դու չես իմանում, վոր յես քեզնից խելոք, քեզնից հասկացող եմ...

ՀԵՂԻՆ. — Ը՛հ, հողս քու խելքով գլխիդ. շատ հասկանալուցդ արդեն յերևումա, թե ինչքան քեղոք բան ես բռնել: (Մանիշակի մեծում Ե)

ՅԵԳՈՐ. — Դե ել մի յերկարացրու. հին գարմանդ քամուն մի տալ. խելքդ հավաքիր գլուխդ և լավ մտածիր, թե վերտեղ, ի՞նչ ես խոսում: Մեյդանումը իշի պոչ չեն կտրի...

ՀԵՂԻՆ. — Դու գուր ես նրանից ծածկում. ինչ վոր սակուս ես պարզ ու տշկարա ասա՝ թող նա ել լսի ու իմանա...

ՄԱՆԻՇ.— Յես արդեն իմացել եմ.

ՅԵԳՈՐ.— Վոր իմացել ես՝ ավելի լավ: Դե հմի գնացեք պատարաստություն տեսեք, վորդի-վորա Ռստամ բեգը կգանա ես որ քեզ համար նշանա բերում.

ՄԱՆԻՇ.— Յես չեմ ուզում. նշնվելու յես մտադրություն չունեմ. Ռստամ բեգը ի դուր տեղը թող մեր տունը չգա...

ՅԵԳՈՐ.— Գու չեմ ու չում անելը ավելնորդա. յես իմ բանը լավ եմ հասկանում: Ա՛ կնիկ, դու ի՞նչ ես կանդնել. յես քեզ ասեցի, վոր գնա պատարաստություն տես. հմի վորդի-վորա Ռստամ բեգը կգա. հարկավորա նըրան պատվով ընդունել...

ՀԵՂԻՆ.— Այ մարդ, դու սկի մտածում ես, թե ի՞նչ եր ես անում.

ՅԵԳՈՐ.— Դե ել նորից մի սկսի գլխիս գելի ավետարան կարդալ. ամեն ինչ արդեն մտածված, վերջացածա. ել ի դուր տեղը բանը չեն յերկարացնի: Գնա պատարաստություն տես, Ռստամ բեգի առաջ ամոթալի չմնանք...

ՀԵՂԻՆ.— Այ մարդ, ախր դա բանա՞, վոր դու ես անում. դրա համար ժամանակին դու ինձ վոչինչ չես ասել. ադ ջկադ համաձայնությունը չես առել, գնացել որ պոռա՞ Ռստամ բեգին խոսք ես տալիս ու տուն հրավիրում...

ՅԵԳՈՐ.— Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել.

ՀԵՂԻՆ.— Յես ուզում եմ ասել, վոր յեթե աղջկադ ուզում ես նշնես, առաջ նրան պտի մի բերան հարցնես, նրա կամքը իմանաս և տեսնես ինքը ձեռնա ուզում.

ՅԵԳՈՐ.— Առանց հարցնելու ել յես արդեն իմանում եմ, թե նա ու՞նա ուզում.

ՀԵՂԻՆ.— Ումը վոր ինքը ուզումա, հենց նրան ել պտի. Յես ընենց գիտեմ, վոր Յեղիշը Ռստամ բեգիցը պատկաս տղա չի...

ՅԵԳՈՐ.— Ա՛ կնիկ, դու գժվել ես ի՞նչա. Յեղիշին յես կամամ. աշխարհիս յերեսին ել մարդ կտրվելա, գնամ ես քոստո դարբնի հետ բարեկամություն անեմ...

Նրա են կեղտոտ, սև յերեսին եմ կարճա, թե՛ նրա են քեամբոտ ու մրոտ ձեռքերիս...

(Մանիշակը յերեսը դարձնում է դեպի ցանկապատը յեկ լաց լինում)

ՀԵՂԻՇ.— Կարվի խոսչաթդ... այ մարդ, յերեսիս կամքին դու ի՞նչի ես հակառակվում... կեղտոտ ու սև ձեռքերը, քեամբոտ ու մրոտ յերեսը մարդու սրտի հետ ի՞նչ կապ սենի... Նրանք վոր իրար հավանում են, իրար սիրում են՝ քեզ ի՞նչա ելել.

ՅԵԳՈՐ.— Ա՛ կնիկ, դու հասկանում ես ի՞նչ ես խոսում. Ռստամ բեգի նման պատվավոր ու պաշտանի մարդուն թողած, Բաղալանց Յեղիշին յես աղջիկ կամամ... հացի տեղ խոտ եմ ուտում, թե՛ գլխիս ձիա քացի ավել... որվա հացի կարոտ փեշաքարի հետ դնամ բարեկամություն անեմ՝ տեսնող-լսողը ի՞նչ կասի...

ՀԵՂԻՆ.— Յերեսես բախտավոր ըլի. նրա սրտի ուղածով ըլի, նրանից զենը թող ձվ ինչ ուզումա՞ ասի... Ռստամ բեգ չի, թեկուզ նրա տեղ Յեղիշն ըլի, սրանում ի՞նչ կա վոր.

ՅԵԳՈՐ.— Գեզ համար վոչինչ չկա. արի ինձ ել մի հարցրու, ե... ախր դու հասկանում ես, դու ճանաչում ես Բաղալանց Յեղիշն ձգա: Մի մարդ, վոր իր ծնված որից աչքա բաց արել, չաքուչ-զնդանից ավել ուրիշ բան չի տեսել. մի մարդ, վոր տարեն տաներկու ամիս աղքատությունից ու չքավորությունից դուրս մի լավ որ ու կյանք չի քաշել ու յես նրան աղջիկ ամամ, վոր առավոտվանից մինչև իրիկու աչքը ճամփի մնա, թե ինչա իր մարդը դարբնոցում սաղ որը փուքսի ու կրակի առաջ արուն-քրտինք պտի թափի ու հազար ու մի նեղությունով, չարչարանքով մի քանի կոպեկ փող աշխատի ու բերի դրանով տուն պահի, կնիկ պահի, յերեսիս մեծացնի... Զե, չե, դուր բանա, ըզենց դատարկ բաները իմ գլուխը չի մտնի... յես վոնց վոր

ասել եմ, ընենց ել կանեմ... վճոված ու վերջացած
բանա...
(Մանթեակը բարձր ձայնով սկսում է լաց լինել)

Հազար տարի ել վոր լաց ըլես, միևնույնա, իմ
վորողումս չի փոխվելու. ասածս ասածա.

ՀԵՂԻՆ.— Այ մարդ.
ՅԵՂՈՐ.— Ձեռք կարի. ես տան մեծը թե յես եմ, յես ըսենց
եմ կամենում, իմ դեմ հակառակվելու դուք իրավունք
չունեք: Ռստամ բեգին յես խոսք եմ տվել, իմ խոս-
տումս ել պտի կատարեմ: Դուք վոր վոչինչ չեք հաս-
կանում, արեք են, ինչ վոր յես ձեզ հրամայում եմ...
(Իսրա է գնում)

Տ Ե Ս Ի Լ 5.

ՀԵՂԻՆԱՐ ՅԵՎ ՄԱՆԻՇԱԿ

ՀԵՂԻՆ.— Անիծվի խասյաթդ...
ՄԱՆԻՇ.— Ամեր, դուք ես ինչ կրակի մեջ եք գցում ինձ
գյուղով խփելիք ինձ միանգամից սպանելիք սրանի-
լով չե՞ր... Ռստամ բեգը հիսուն տարեկանա. նրա մի
վտար արդեն գերեզմանումնա, ինչ եք մտածում, վոր
դուք ինձ տալիս եք նրան. յես նրա հետ վոնց ապ-
րեմ, յես նրան թնչ սրտով սիրեմ... նրա ձեռքին ի
սիրտը կսեանա, իմ որ ու կյանքը կխափարի... (լաց
է լինում)

ՀԵՂԻՆ.— Սե ըլեր են սնաթը, վոր նա սասղ չգար հորդ...
ՄԱՆԻՇ.— Ինչ ուզում եք արեք, յես չեմ գնա. թող կզգե-
վիգս կխեղզվեմ, նրա տունը յես վոտ չեմ գնի... Յե
կբարձրանամ են քարափներինը կզգեմ տակը ին-
կսպանեմ. յես կմեռնիմ... կյանքը անցրած, հիսու

տորեկան պառավ մարդու հետ յես մի որ ել չեմ ապ-
րի... (լաց է լինում)

ՀԵՂԻՆ.— Ինձ վոր ասում ես, ախր յես թնչ անեմ. յես թնչ
հող տամ գլխիս...

ՄԱՆԻՇ.— Յեթե դուք չեք ուզում, վոր սրանից հետո յես ձեզ
մոտ մնամ, յեթե մի կտոր ցամաք հացը դուք
ինձ խնայում եք տալ, յես իմ կամքով կհեռանամ ես
տնից, կզնամ կնկնեմ փողոցները կկորչեմ և դուք իմ
յերեսը ել ուրիշ անգամ չեք տեսնի... (լաց է լինում)

ՀԵՂԻՆ.— Ա. բալամ, ինձ վոր ասում ես՝ ախր յես թնչ անեմ,
իմ ձեռքիս ինչ իրավունք կա: Մի Աստու աչքից ըն-
կած հեր ունես, վոր տասը ինձ պեսներն ու քեզպես-
ները թեկուզ տարիներով նստեն լաց ըլեն՝ մեր ար-
տասունքները միևնույնա, նրա քարացած սիրտը չի
փափկացնի... Ամեն մի բան ինչպես վոր ինքն ու-
զում ա, նա ընենց ել անում ա: Նրա կամքին հակա-
կել չենք կարողանում... Լաց մի ըլի. Ռստամ բեկը
քանի չի յեկել, յես գնամ նորից հորդ հետ մի քիչ
կակուզ խոսեմ, բալբի նրան համոզեմ... (գնում է)

Տ Ե Ս Ի Լ 6.

ՄԱՆԻՇԱԿ ՅԵՎ ՅԵՂԻՇ

Յեկիւր կազվե գոգնոցով, կոճերը կեսած, ձեռքերը կեղտոտ, յերեսը
մրտ մսնում է ռապ կերպով:

ՅԵՂԻՇ.— Մանիշակ. ես ինչեք եմ լսում. դու իմ զրած նա-
մակին չպատասխանեցիր. յես ուրիշ բան կասկածեցի
և ել չկարողացա համբերել, վեր կացա ու ըսենց գոր-
ծը թողի ու յեկա... Մանիշակ, դու ինձ չես պատաս-
խանում. դու ինձ հետ չես խոսում...
Մանթեակը յերեսը ծածկած, ցանկապատի վրա հեկված
լաց է լինում)

Մանիշակ ջան, դու լաց ես լինում... յես տրդեն ամեն ինչ հասկանում եմ... դու չես համարձայնվում և քեզ ուզում են գոռով տան. թող տան տեսնեմ, ինչ պես են տալիս...

ՄԱՆԻՇ. — Յեղիշ ջան, մերոնք տանն են, հանկարծ կգաս, քեզ կտեսնեն՝ փիս բան կպատահի. գնա, քանի չեն յեկել.

ՅԵՂԻՇ. — Վոչինչ չի պատահի, դու անհող կաց.
ՄԱՆԻՇ. — Յեղիշ ջան, դու չգիտես, հերս առանց են ել քու վրտ ես որ բարկացածա ու հմի հանկարծ գա ինձ քեզ հետ խոսելիս տեսնի, տեղն ու տեղը ինձ կըս պանի...

ՅԵՂԻՇ. — Մի վրախի, յես նրան թույլ չեմ տա, վոր նա քու մի մազին դիպչի... ենքան նա քեզ վախեցրելա, վոր սիրտդ մորթված հավի պես թփթփումա... Յե, մեռած չեմ, վոր դու լաց ես ըլում:

ՄԱՆԻՇ. — Յեղիշ ջան, խնդրում, աղաչում եմ գնա, հեռացի քանի չեն յեկել...

ՅԵՂԻՇ. — Մանիշակ ջան, յես քեզ հետ խոսելիք ունեմ. քեզ մոտ յես շատ կարեւոր գործով եմ յեկել, քու կարծիքդ, քու վերջին խոսքը մինչև յես չիմանամ, յես ես տեղից հեռացողը չեմ... Յես քեզնից ուզում եյի հարչակել...

ՄԱՆԻՇ. — Յեղիշ ջան, յես քեզ շատ եմ խնդրում, վոր դու հետ ես որ վոչինչ չխոսաս և վոչինչ չհարցնես... ինձ վոր ասելու ես, ինչ վոր հարցնելու ես, ձեր ֆինչ զարի միջոցով գնա ապաղրի. վնյ, հողը գլխիս, հրես մերոնք յեկան...

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՈՒՅՆՔ. ՅԵԳՈՐ ՅԵՎ ՆԵՂԻՆԱՐ.

ՅԵԳՈՐ. — Ես ի՞նչա նշակում... ի՞նչի համար ես յեկել... քեզ հրավիրել...

ՅԵՂԻՇ. — Ինձ վոչ վոք չի հրավիրել. ձեզ մոտ յես շատ կարեւոր գործով եմ յեկել և ձեզ առանց մի նեղություն պատճառելու գործս վերջացնելուց հետո յես իմ կամքով նորից կհեռանամ...

ՅԵԳՈՐ. — Եդ պատճառաբանությունները դենը դիր և ես բուպիս դուրս գնա, կորի իմ տնից. լակոտ... Քեզ հետ յես վոչ մի գործ չեմ ունեցել և չեմ ել ուզում ունենալ. փուչ կենդանի... դու ինչ իրավունքով ես մտել իմ տունը և եղպես համարձակ կերպով կանգնել և իմ աղջկա հետ խոսում:

ՅԵՂԻՇ. — Կարծեմ նոր չի, վոր յես ձեր աղջկա հետ ծանոթանում եմ և սա առաջին անգամը չի, վոր յես նրա հետ համարձակ կերպով կանգնած խոսում եմ: Ամբողջ գյուղի և ձեզ համար գաղտնիք չե, վոր մենք միմիանց խոսք ենք տվել և վաղուց ա, վոր մենք իրար սիրում ենք:

ՅԵԳՈՐ. — Ձեռք կտրի, լակոտ, մյուս անգամ դու չհամարձակվես իմ ներկայությամբ եդ տեսակ խոսքեր ասելու: Իմ աղջիկը քեզ չի սիրել և չի յել կարող սիրել. զուր տեղը քու գլխից բաներ մի մոզոնի. դե, ել ի՞նչ ես կանգնել. դուրս գնալու համար յես համեցեք չպիտք ե անեմ. դե, հեռացի, դուրս գնա կորի իմ տնից, ել մյուս անգամ դու իմ տունը վոտ չդնես:

ՅԵՂԻՇ. — Յես վատ նպատակով չեմ յեկել քո տունը:

ՅԵԳՈՐ. — Ինձ չի հետաքրքրում քո գալու նպատակը, յես քեզ հրամայում եմ, վոր ես բուպիս դուրս գնաս, կորչես իմ տնից, թե չե մարդ կկանչեմ, շնքիդ տալով, իմ տնից քեզ գոռով դուրս կվանդեն.

ՅԵՂԻՇ. — Կանչիր տեսնեմ ովքեր են քու եդ մարդիկը, վոր պտի գան ինձ գոռով դուրս անեն:

Բճճում եմ Ռասամ բեգի յերկու ծառաները յերկու մեծ խոնջաները արմ մրգերով յել ծաղիկեկով զարդարած. չորս կողմից վառած ումեր կայքրած, մճճում եմ յել սպասում: Ռասամ բեգը մի փոքր ետ ծանր քայլերով արտ փառտ մճճում ե,

Ձվա

Տ Ե Ս Ի Լ 8

ՆՈՒՅՆՔ, ՌՍՏԱՄ-ԲԵԳ ՅԵՎ ՅԵՐԿՈՒ ԾԱՌԱՆ

ՌՍՏԱՄ.— Բարի աջողում, ջիւղվխանենց Յեգոր.

ՅԵԳՈՐ.— Այ ասածու բարին, բարով հազար բարին յեկաք, Ռստամ-բեգ:


ՌՍՏԱՄ.— Յես կարծում եմ, վոր ձեր հարգելի ու պատվելի ընտանիքը անհամբեր սրտով ինձ սպասելիս կլինեք. Ձեզ հայտնի յե, վոր Ռստամ բեգը ճշտապահ և որին հակելի մարդ ա. իր աված խոստման համաձայն, իր նշանակած ժամանակին յեկել և և կարծեմ վոր չի ուշացել:

ՅԵԳՈՐ.— Ռստամ բեկն իր իսկական ժամանակին յեկել և ուշանալու մասին ինչ խոսք. ջիւղվխանենց Յեգորը իր խոսքի տեր մարդ ա. նա վաղուց իր զոնապին անհամբեր սրտով սպասում եր. համեցեք մեր գլխի ու աչքի վրա տեղ ունեք:

ՌՍՏԱՄ.— Այ տղա դուք ինչ եք կանգնել. եզ նվերները տարեք հանձնեք ըստ պահանջվույն:

(Մտաւաները խոնջաները ցանում են մեկը Հեղինարի մոտ իսկ մի-յուսը Մանիթայի մաս. իսկ եղի՞ն ու Ռստամ բեգը ասելով քյումբ ի ար են նայում:

ՎԱՐՔԵԳՈՒՅՐ



ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է Բաղալենց Յեղիշի տան բակը, ցանկապատով չըջապատված: Դեպի աջ Յեղիշի բնակարանն է. մեկ դուռ և յերկու կողմից փոքրիկ լուսամուկաներով. Դեպի ձախ Յեղիշի զարբնոցն է իր բոլոր պարագաներով՝ փուշս, զնդան և այլն, իսկ դեպի խորքը, ցանկապատի մյուս կողմը գյուղի հրապարակն է:

Ամառվա յերեկո յե:

Տ Ե Ս Ի Լ 1.

ՅԵՂԻՇ, ՄԱՀԱԿ, ՂԱԶԱՐ. ՀԵՏՈ ՄԱՐԻԱՄ

Յեղիւր. Մահակը յիվ Ղազարը գործի օտերով կապի գոգնոցներն առաջներովը կապած, բեկիւր կօսած դարբնոցում աւխաում են, Մահակը փուխս ե փչում, իսկ Յեղիւն ու Ղազարը յերկար են ձեծում. յեկեղեցու զանգերը օալիս են. Մարիամը չարապար ձեռին դուրս ե գալիս բակը ձեռքերը բարձրացրած աղօրում

ՂԱԶԱՐ.— յերգում ե.

«Ո՛վ չի տեսել «ազատ յերկիր.

«Թող գա Հայաստան,

«Մալգերիստին ազատ մեյդան

«Իսկ մեզ՝ կախաղան:

«Սատիստվը աշխարհ չափում

«մեր հողն ե ծախում.

«Միամիտների աչքը կապում

«միթամ ազատում:

«Ազատութեան ձեն ե գալիս
 «Սովետի հողից,
 «Ընկեր Լենին ձեն ե տալիս
 «Ռսի լեն չոլից:
 «—Վոտքի էլեք բանվոր, գեղան
 «քչեք դաշնակին.
 «Ու ձեն տվեք յեղբայրական
 «Կարմիր բանակին:

ՍՀԱԿ.— Դու յերգ ես ասում, իսկ Մարիամ բաջին ընդ կանգնել աղոթում ա:

ՂԱԶԱՐ.— Յես իմ աղոթքն արի, նա ել իր աղոթքնս անում. հա՛, հա՛, հա՛...

ՄԱՐԻԱՄ.— Ձան, ով Մայրամ աստվածածին. դու բարեխոս ըլես բոլոր անճարներին ու նեղվածներին...

(Շարունակ յեկեղեցու զանգերը օալիս եճ

Իսկ Մարիամը ձեռքերը բարձրացրած աղոթում է յեվ յեքսք խաչակնում)

ՂԱԶԱՐ.— Եդ տերտերներն ու վարդապետներն իրանց ստեղծած հեքիաթներով ես մեր միամիտ խալխին վոր չխաբել յին, ով ա իմանում թե իրանք սոված մեռնելին. ընչի վրա ուզում եք, յեզ ձեզ հետ գրազ կգամ, վոր մեր Մարիամ բաջին իր եզ յերկար աղոթքից հետ իր բոխչաներում պահած հոգապահուստից մի յերկր կապել վերցրել տանում ա յեկեղեցում խաչհամբուս գցել ու գա:

ՄԱՐԻԱՄ.— Ա, տղա, դե բոլ ա, ինչ ես կպել եզ խեղճ տեղ տերների յախիցն ու ել պոկ չես գալի:

ՂԱԶԱՐ.— Այ նրանց խեղճ վիզը կոտրվի, վոր ձեզ պես միս միտ ժողովրդին չխաբելին, ձեզնից խլած խաչհամբուս յուրներով իրանց փորը չտողացնելին... Մարիամ բաջի, յես քեզ գրուատ եմ ասում, ես մեր խալխը խել չի, յես քեզ գրուատ եմ ասում, ես մեր խալխը խել բանացնի ու մի շարաթ ժամ չգնա, թե եզ սրբաստ տերտերներն ու վարդապետները իրանց փարաջանը

ըը դեն չզպրտեն ու գնան իրանց համար չարչի խըրդասի դյուքան բաց անեն, բա յես շուեն դառնամ ու շան պես հաչամ...

ՄԱՐԻԱՄ.— Ուրեմն քու ասելով յեկեղեցին չարչի խրդասի դուքան ա... Մեղա՛ ասու, մեղա՛ ասու...

ՂԱԶԱՐ.— Չարչի խրդասու դյուքանից ել բեթար տեղ ա ձեր եզ սրբերի տները: Չարչի խրդասին մեր ժողովրդին ենքան չի խաբում, ինչքան եզ անխնամք խաչերն ու սրբերն են խաբում ու թալանում, մի յերկու կոպեկ վոր տալիս ես, չարչի խրդասու դյուքանից, ջհանդագամը, թանգ ա, եժան ա, ելի մի բան ձեռք ես բերում, մի բան առնում ես: Իսկ եզ քանդված յեկեղեցիներն ու վանքերը, թեկուզ բեռներով վոսկի տար ամա միևնույնն ա մի կապեկի բան չես ստանա: Ժողովրդին խաբող ու թալանող ստախոս տերտերներն ու վարդապետները խալխի աչքը հող ու մոխիր կփչեն ու դարտակ ձեռքով ձամբու կղենն:

ՄԱՐԻԱՄ.— Ա, տղա, ախր նրանք ի՛նչ ունեն, վոր մեզ ի՛նչ տան:

ՂԱԶԱՐ.— Դե վոր չունեն, բա ել ո՛ւր են խալխին խաբում: Ժողովուրդը թե վոր իմանա, եզ յեկեղեցիներն ու վանքերն իրանց վոչինչ չեն տալու, դալաթ կանեն ու վոտը ներս չեն դնի: Նրանք կտեսնեն, վոր եզ խաչերն ու սրբերը ուժ ու գորությունից ընկած անպետք բաներ են նրանց յերեսին ել մտիկ չեն տա. նրանցից ել յերբեք ոգնություն ու փրկություն չեն սպասի:

ՍՏՀԱԿ.— Տերտերներն ու վարդապետները, ախպեր, մեղավոր չեն. մեր ախմախ ժողովուրդնա մեղավոր: Բա նրանք վոր ախմախ չլինեն եսքան տարի քու են, չեն տեսնում, վոր եզ խաչերն ու սրբերն իրանց դուռը գնացող, իրանցից բան խնդրողներին վոչինչ չեն տալիս:

ՂԱԶԱՐ.— Եզ խելոք խաչերն ու սրբերը ժողովրդից մենակ

առնելն են իմանում. տալու մասին նրանք սկի չեն ել մտածում...

ՄԱՐԻԱՄ.— Մեկն ինձ հարցնող ըլի, քեզ մոտ ինչի յեմ կանդնել. քեզնից լավ բան հո չեմ լսելու. մերդ սուտ չի ասում, վոր դու հերետիկոս ես դառել. ասաված չես ճանաչում...

ՂԱԶԱՐ.— Յես մեղավոր չեմ, այ Մարիամ բաջի, Յեղիշն ու մեղավոր. յես ասոված ապաշտ, յեկեղեցասեր մարդ եյի. սա ինձ խելքից հանեց. դիփ սրա մեղավորությունն աս...

ՄԱՐԻԱՄ.— Պակաս պտուղն ել դա չի: Դուք յերեքով ել մեկդ մեկուց վարակվել եք... մեկդ միուսից բեթար գժեր եք... ձեզ հետ գլուխ դնել խոսալը չարժի...

(գնում է)

Տ Ե Ս Ի Լ 2.

ԵՂԻՇ. ՍՀԱԿ և ՂԱԶԱՐ

ՂԱԶԱՐ.— Գնա, այ Մարիամ բաջի, գնա, թե չե քեզ ել կվարակենք. մենք վարակվել ենք պարծել... արա, Յեղիշ քեզ ինչա պատահել. ինչի չես խոսում. եսոր քու պրուժիներդ կասես բոշացելա: Քու թհար-թհուրիցդ յերևումա, վոր քեզ ինչ վոր բանա պատահել և դու մեզնից ծածկում ես:

ՍՀԱԿ.— Ուր վոր եր դուրս գնաց յեկավ, սրա քեֆը ըսենց խառնված եր:

ՂԱԶԱՐ.— Ախր բանը ինչո՞ւմա, մեզ ել ասա, հասկացրու: հետո քիթ ու՞մութդ ըղենց քաշ արա.

(Յեղիթը լուռ է)

Արա, տնաքանդ, ջվալի ըոսելս չեն պատուում. քեզ բան եմ հարցնում, ջուղար տուր: Ինչ ես նորահարս

նման լալվել ու պապանձվել...

ՅԵՂԻՇ.— Զիվալխանենց Յեգորի աղջկան նշում են...

ՂԱԶԱՐ.— Ըղենց ասա ե. հմի գլխի ընկա, թե բանը ինչու՞մա: Դու ինձ են ասա, հաստատ իմացել ես. բալքի հենց սուտա: Բալքի աղջկա տերը դասըղի ըղենց ձենա գրցում, վոր իր աղջկա համար մուշտարի չաղացնի:

ՅԵՂԻՇ.— Ինչ ես գլխիցդ շաշ-շաշ դուրս տալի... մասխարութենի ժամանակ ես գտել... իմ սրտին ել մտիկ ե... դանակ խփեն արուն չի դուրս գա...

ՍՀԱԿ.— Ձե, սա լուրջ բանա յերևում...

ՂԱԶԱՐ.— Դու են ասա, ի՞նչ վրա են նշում. եդ ուզող շան տղեն ճվա.

ՅԵՂԻՇ.— Ռստամ բեգնա. ուրիշ ել ճվ կհամարձակվի...

ՂԱԶԱՐ.— Արա, նա իմ հորս յաշին մարդա, եդ տնաքանդը ինչա մտածում, վոր են ջահել աղջկան ուզումա. կամ թե չե Զիվալխանենց Յեգորը դրուստ վոր գժվել հո չի, գեղում մարդը գլխին կտրվում, վոր եդ ջահել, ազապ աղջան վորքեարի մարդուս տալի.

ՅԵՂԻՇ.— Դու փող ասա, վորքեարին ու ազապը ճվա հարցընում... Ռստամ բեգի կարողությունը շատերի աչքնա քոռացրել. նրա կամքին հակառակվելը չե թե մենակ Զիվալխանենց Յեգորը, մեր գեղումը մեկն ելա չի համարձակվի... Մենակ մենք ենք, վոր թեկուզ արդար ել ինենք, գլխներին կտան ու կլոցենեն:

ՂԱԶԱՐ.— Յես կխոսամ, տեսնե՞վ ճվա ինձ լոցնում: Հրես գնում են Ռստամ բեգի գլխումը տամ, հարսնացուն ձեռքիցը խլեմ...

ՅԵՂԻՇ.— Ռստամ բեգը հարստության տեր, գյուղի պաշտանի, աղա մարդա, նրա գլխին տալը ենքան ել դու հեշա բան չգիտենաս:

ՂԱԶԱՐ.— Դյուղի պաշտանի չե, թեկուզ գյուղի թագավորը ըլի, նրանից յես չեմ վախենում... հրես գնում եմ նրա կուշտը...

ՍՀԱԿ.— Յես ել եմ գալի...

ՂԱԶԱՐ.— Արի...
(Ղազարն ու Սեակր կառվի գոգնոցը հանում են օպր-
տում մի կողմ)։

ՅԵՂԻՇ.— Գառաւորն հազար ձեզ պեաներն ել վոր գնան, նը-
րան վոչինչ անել չեն կարող։ Ռստամ բեգը մեր գյու-
ղի էշխաննա, մեր գյուղի տերն ու տիրականը... նա
ինչ վոր հրամայի, նրա սիրտը ինչ վոր կամենա,
որենքա, պտի կատարվի...

ՂԱԶԱՐ.— Ըտենց որենք մեր դաֆտարում չի գրված...

ՅԵՂԻՇ.— Գրվածա թե չի գրված, նա եգ չի հարցնում. նա
հազար ինձ ու քեզ պեաներին հրամայելով իր կամքը
կատարել կտա...

ՂԱԶԱՐ.— Ինչ ես ասում. խելքի արի. ես են ժամանակները
չի, վոր Ռստամ բեգը իր մատը վոր կողմ բարձրացնի,
մենք ել եշի պես կանգնենք ու զոանք... եգ ժամա-
մանակները թռավ, գնաց... Հմի Ռստամ բեգի ուզած
են եշերը ել չկան, վոր ինքը նստի վրան ու չու ասի...
Լսիր, դու ես բանում սկի մի խառնվի. Մհակի հետ,
մենք յերկուսով կգնանք ամեն ինչ կանենք.

ՅԵՂԻՇ.— Ի՞նչ եք ուզում անել, յես վոչինչ չեմ հասկանում.

ՂԱԶԱՐ.— Ռստամ բեգի նշանդրեքում, մենք ես գիշեր զոնալ
ենք կանչված. գնում ենք.

ՍՀԱԿ.— Նրա հետ մենք քիչ հաշիվ ունենք. պտի մաքրենք...

ՅԵՂԻՇ.— Նա ձեզ տուն չի թողնա վոր մտնեք. ծառաներին
կերամայի՛ շլինքներիդ տալով տնից դուրս կանեն...

ՂԱԶԱՐ.— Թե Աստոծ գլխներին խոտվա կացել՝ մի ըղենց
բան են արել, դու են վախտը թամաշա արա, թե
նրանց գլխին ի՞նչ ոյին ենք կանգնացնում... Նրանց
տունը տակն ու վրա կանենք. քարը-քարի վրա չենք
թողնի... Տնաքանդի սիրտը կնիկա ուզում, թող գնա
իր հասակին մեկը ճարի ու նրա վրա պսակվի. շան
տղի քոփազը ի՞նչա յեկել ուրիշի սիրածի վրա աչք
դրել...

ՅԵՂԻՇ.— Դրանք դատարկ բաներա, իմ աչքի առաջ նրանք

նշանը բերեցին. ես գիշեր յեթե չկարացի մի բան ա-
նել, Մանիշակը ձեռքիցս դուրսս գալու (Լաց ե լիում).

ՂԱԶԱՐ.— Խելքդ հավաքի գլուխդ. տնաշին իգիթ աղա յես,
ինչ են կնգա նման նստել լաց ըլում։ Ասա ինչ ես
ուզում անեմ։ Գնամ ջուրը ընկնեմ. կրակը ընկնեմ.
աստ, յես պատրաստ եմ քեզ համար ամեն ինչ անելու...

ՍԱՀԿ.— Մինչև գիշեր դեռ ժամանակ շատ կա. վոր ուզենանք
շատ բան կանենք...

ՅԵՂԻՇ.— Վոչինչ չենք կարող անել. ուշա.

ՂԱԶԱՐ.— Ուշ չի. դու քու սիրտը մի կոտորի. թեկուզ գիշեր-
վա կեսն ել վոր ըլի, դուզգունը դշի նման վրա կտամ,
քու սիրած Մանիշակին հարամու ձեռքից կխլեմ ե
կրերեմ քեզ կտամ... կնց, լավ բան միտքս յեկավ։

(Մասը դիում ե ախանջիճ ու մտածում)

ՅԵՂԻՇ.— Ի՞նչ, ասում ես գնանք Ջիլավխանենց Յեգորին
փոշմանցնենք.

ՂԱԶԱՐ.— Չե... (մտածում ե)

ՍԱՀԱԿ.— Ասում ես գնանք Ռստամբեգին խփենք շանսատակ
անեմք,

ՂԱԶԱՐ.— Չե, վնչ սպանել, վնչ դես, վնչ դեն. յես ընենց մի
բան պտի անեմ, վոր Ռստամբեգը եգ աղջկա անունը
լսելուց մի վերստ հեռու փախչի։

ՅԵՂԻՇ.— Չեմ հասկանում։

ՂԱԶԱՐ.— Չեր հասկանալու կարիք ել չկա։ Յես ձեզ վոնց
վոր կասեմ, դուք ընենց ել կանեք։

ՍԱՀԱԿ.— Դուք եստեղ յերկար բարակ կանգնել մտածում եք,
նրանք հմի ռվա իմանում աղջկան նշեցին պրծան...

ՅԵՂԻՇ.— Վոր նշեցին դու կարծում ես զրանով ումեն ինչ
կվերջանա։ Յեղիշը բաս մեռած պտի ըլի, վոր նրա
սիրած աղջկան ուրիշը գա տանի։ (գոգնոցը հանում ե
դեմ գցում)

ՂԱԶԱՐ.— Ջան, ջան, քու հոգուն մատաղ, տնաշեն ըտենց
խոսա, վոր ջանս կրակ ընկնի ու վառվի յե. դե հմի
Ռստամ բեգ չե, թեկուզ ոխտը գլխանի վիշապի բու-

նը կմտնեմ ու նրա ռեսուրսը գլուխն ել միանգամից կը տամ կջարդեմ. Դասխոյ, Ռատամբեկ, դասխոյ մենչ հրեսի գալիս ենք քու վային նստենք: Դե ընկեք առաջ. շագո՞ մարշ...
(յերեմով գնում են)

Յ Ե Ս Ի Լ 3

ԲԱԴԱԼ ՅԵՎ ՄԱՐԻԱՄ

Քեզ կամաց-կամաց մրհում ե

ԲԱԴԱԼ.— Ա կնիկ, անգաղիդ բուրդը հանիր, յես քեզ ինչ վոր ասում եմ, դու ինձ լավ հասկացիր: Մինչև վոր աղջկա մտքումը չլսեիր նշանդրեքը ըտենց շուտ գլուխ չեիր գա:

ՄԱՐԻԱՄ.— Նրա միտը քրքրվի, նրա արոււրը կարվի, մտքումը ըտենց բան վոր ունեցելա, ել ինչի եր գուր տեղը խեղճ յերեմիս մինչև որս խարում, նրան խելքի հանում...
ԲԱԴԱԼ.— Տղիտ ինչ վոր անեն, հախնա. յես նրան քանի անգամ ասի, եդ աղջկանից ձեռ քաշի. նրան ուզել մտկիցդ հանիր, ինձ անգաջ չարեց, ասածս նրա բեյ յինը չմտավ... թող հմի քիթը քսի քարերին խելքի հավաքի գլուխը... մեծի խոսք չսողը վորը քարի կտա...

ՄԱՐԻԱՄ.— Վոր ասել ես, նա քեզ լսած պտի ըլեր: Դե վոր չլարել հմի դրա համար խոսելն ել ավելորդա... հմի հարկավորա վերջին անգամ գնալ նրա հոր հետ խոսալ.

ԲԱԴԱԼ.— Յես քեզ բան եմ ասում, ելի դու կանգնում ես քու եշն ես քշում: Ջիլավխանենց Յեգորը Ռատամբեկին թողած քեզ աղջիկ կամ. նրա լիքը տունը, նրա

հարուստ ոջախը թողած քեզ հետ բարեկամութուն կանխ... քեզ եմ հարցնում, ախր դա ըլելու բանա... Ջիլավխանենց Յեգորը խոտա ուտում, թե գլխին խելք չունի:

ՄԱՐԻԱՄ.— Ըտենցա ա մարդ, ըտենցա, դու դրուստ ես ասում...
ԲԱԴԱԼ.— Մարդ իր յորդանի գորա վորս կմեկնի. Ջիլավխանենց Յեգորը մեր թայ մարդ չի. նրա հետ բարեկամութուն անել մենք չենք կարող... յես ընենց ոջաղի հետ բարեկամութուն կանեմ, ընենց մարդու աղջիկ կուզեմ, վոր նրանց տուն մտած վախտը ամենքը իրենց նստած տեղերիցը վեր կենան վտաքի կանգնեն ու ինձ գլուխ տան... Յես ըտենց մարդկանց հետ բարեկամութուն կհաստատեմ, վոր նրանք ինձնով ուրախանան, յես նրանցով... Խնչ եմ անում Ջիլավխանենց Յեգորի աղջիկը. յես ընենց մի համեսա, խոնարհ հարս կբերեմ, վոր ամեն առավոտ քնից վեր կենալուն պես, ձեռքիս ջուր ածի, իրիկնեքը ջուր տաքացնի վտտերս լվանա, ճղված շորերս կարի ու կարկատի... կով կթի, մածուն մերի, բուրդ գդի, թել մանի, գուլպա գործի...

ՄԱՐԻԱՄ.— Ըտենցա ամարդ, ըտենցա. դու դրուստ ես ասում... դե յես մտածում եմ, ընենց անենք, քիչ ել յերեմիս սրտովը ըլի...

ՄԱՐԻԱՄ.— Ա մեր, ինչ եղար, մեր քնացիր: Մինչևեկ հմի ժամը տասն անգամ արձակված-պրծած կլներ. քու խասաթնա ժամից մինչև տուն գալը ճամփին քառասուն տեղ կկանգնես սրա-նրա հետ սհաթներով ծանր ու բարակ մասլահաթ կանես...

ՄԱՐԻԱՄ.— Ախչի ինչա պատահել, ինչ ես շիտթվի. առանց ես

Յ Ե Ս Ի Լ 4

ՄԱՐԻԱՄ.— Ախչի ինչա պատահել, ինչ ես շիտթվի. առանց ես

ՄԱՐԻԱՄ.— Ախչի ինչա պատահել, ինչ ես շիտթվի. առանց ես

ել տեսնում ես սիրաս շուռա եկել, դու ել մի կոնիցն
ես շուռ բերում: Դե. ասա, ել մի լալկի, ասա տեսնեմ
ինչա պատահել:

- ԳՅՈՒԼԻԶ — Կովը նախրիցը տուն չի յեկել:
- ՄԱՐԻԱՄ — Վան, հողը գլխիս. ախչի բա ել ուր. ես կանգնել.
գնա հարևաններիցը հարցրու. նրանց կովերի հետ մը
տած կլինի գոմը:
- ԲԱԴԱԼ — Թե վոր ընդի չի ըլիլ. յես ձեզ հետ են վախալը կը
խոսեմ: (յերեմով գնում են)

Տ Ե Ս Ի Լ 5

ՅԵՂԻՇ, ՂԱԶԱՐ ՅԵՎ ՍԱՀԱԿ.

Ղազարն ու Սոհակը մտրու փափախները գլխներին,
յերեար չուխաներ հագած, խանչալները կապած, բա-
լուղը գլխներովը քաշած. այսպես ծպօլած կերպով Յե-
ղիբի հետ մեկում են բակը:

- ՅԵՂԻՇ — Յես վախենում եմ մեզ տեսնող ըլեր:
- ՍԱՀԱԿ — Մութն ընկելա, ամեն մարդ քաշվելա իր տունը քու-
չում ել սվա ճացել, վոր մեզ ով տեսնի:
- ՂԱԶԱՐ — Փորձներս ըսենց փոխած թեկուզ տեսնեն ել չեն
ճանաչի: Դրանք դարտակ բաներա, լսիր դու ինձ են
ասա Մանիշակին տեսար, նրան հասկացրիր բանն
ինչուսիմ:
- ՅԵՂԻՇ — Նրան ամեն ինչ ասել եմ. մի կես սհաթ հետո նա
դուրսա գալու բախչի դռան առաջ ձեզ սպասի: Լսիր
իսկ յեթե բանա, նա եղ ժամանակին տնից դուրս ե-
կած չլի, բախչի դռանը մոտենաս թե չե, յերեք ան-
գամ կը շվվացնես նա եղ ձենը լսելուն պես են ըո-
պեյին դուրս կգա, իսկ նրանից հետո...
- ՂԱԶԱՐ — Իսկ նրանից հետո հարկավոր չի վոր դու մեզ ասես:
- ՍԱՀԱԿ — Սըսս, մարդա գալի կուացեք չափարի տակ:
(քոյօր կուանում են)

Տ Ե Ս Ի Լ 6.

Գգիրը հարբած փողոցով գալիս յերգելով անցնում է:

- ԳԶԻՐԸ. — «Դիլիջան ֆայտոն դանիտ կանեմ,
«Յար յարո ջան», քեզի մեր տուն տանեմ.
«Յանա յանա ես ել բախտի բան ա...
«Ալ բլուզդ յես եմ, շալ բլուզդ յես եմ,
«Մարոյի կարած բլուզդ յես եմ...
(յերգելով գնում է)
- ՍԱՀԱԿ. — Վեր կացեք, նա գնաց.
- ՂԱԶԱՐ. — Դե. ել սպասելու վախալը չի. գնանք, թե չե հմի-
բլ ուրիշ մարդ կգա...
- ՅԵՂԻՇ. — Գնանք...
(յերեմով գնում են)

Տ Ե Ս Ի Լ 7.

ԲԱԴԱԼ, ՄԱՐԻԱՄ ՅԵՎ ԳՅՈՒԼԻԶԱՐ

- ԲԱԴԱԼ. — Կոտորլի ձեզ պես բաշարմազ խալիքը: Մի կով պա-
հելու յել վոր չնորհք չունեք ել ուր եք ախարհիա
յերեսին սպրոճմ, ել ինչի՞ եք զուր տեղը հաց քոռացը-
նում... քոռանաք դուք, հրես քանի սհաթա նախիրը
եկել ա, դուք նոր եք իմանում, վոր ձեր կովը չկա:
Տեհաք, վոր կովը վախտին չեկավ, ինձ յեկեք իմաց-
արեք. թողել եք կես գլերա դառել դուք նոր եք ա-
սում. ես մթնովը յես հմի ուր գնամ...
(պուրս է գնում)

Տ Ե Ս Ի Լ 8.

ՄԱՐԻԱՄ ՅԵՎ ԳՅՈՒԼԻԶԱՐ

ՄԱՐԻԱՄ.— Հերդ սուտ չի ասում. մարդ իր գոծին ոյաղ պատ
լլի: Ջարդված—բեզարած եկավ նորից գնաց ընկա
չոլերը: Յերանի իմ վոտքս կոտորվել յես ետոր ժա
չեյի գնացել: Ժամն ել գլխիս հարամ ելավ, աղոթքն ել
(լսվում ե աղմուկ, իրաբանցում)

ԳՅՈՒԼԻԶ.— Ա՛ մեր, ես ինչ դալմաղալա, ես ինչ ձեն ու ձունա
ՁԱՅՆԵՐ.— Տարան. տարան վրա տվին տարան...

ՄԱՐԻԱՄ.— Վա՛յ հողը գլխիս, վրա յեն տվել մեր կովը գարել
յես հորդ ինչ ջուղաբ եմ տուլու. թարսի նման Յեղիլ
ել տանը չի:

ԳՅՈՒԼԻԶ.— Կանց, ա՛ մեր, սա կովի դալմաղալ չի. մեր կով
խաթրու գեղն ըսենց իրար գլխով չեր ընկնի... յեկե
ղեցու գանգերն ել տալիս են, սվա իմանում ինչ բան
պատահել:

ՁԱՅՆԵՐ.— Տարան. տարան. յեկան վրա տվին տարան:
(աղմուկ, իրաբանցում)

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՅԵՂԻՇ

ԳՅՈՒԼԻԶ.— Հրեսի Յեղիչն եկավ.
ՅԵՂԻՇ.— Ի՞նչ եք կանգնել ես տեղ. գնացեք տուն: Լսիք,
մեր, յեթե տուն գան և ինձ հարցնեն, կասե
հիվանդա և սաղ որը տնից դուրս չի յեկել...
(գնում ե ներս)

ՄԱՐԻԱՄ.— Հողը գլխիս, սրան անպատճառ մի բան պատահելա

ԳՅՈՒԼԻԶ.— Ել ինչ ես կանգնել ա՛ մեր. ավր ասեց վոր ես տեղ
միք կանգնի: (գնում ե)

ՄԱՐԻԱՄ.— Գնանք... սվ Մարիամ Աստվածածին, դու իմ յերե
խին նահախ խաթից ազատես:

(անախեր բարձրացած աղոթելով ներս ե գնում)
ամբողջ գյուղի ժողովուրդը գիծված: Կան այնպիսիներ
րը, վոր զենք չունենալու պատճառով վերցրել են ռամ
փուր, խաճանդագ, չմախ, նրագ, վառված ֆանարներ
յեկ թյլն այսպես աղմուկով հաճախվում են փոզոց:

Տ Ե Ս Ի Լ 10.

ԲՅՈՒՎԱ, ԳԶԻՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ

ԲՅՈՒՎԱ.— Նրանք շատ հեռուները գնացած չեն ըլի. քիչ վոր
չասպանդ ժած գաք նրանց յեղնա կհամենք, դեն, եր
միք կանգնի, ամենքդ մի կունի վրա գնացեք, կասկա
ծելի տեղրանք ման եկեք. ամեն ծակ ու ծուկ մտիկ
տվեք. մուղայեթ կացեք. աչքից վոչինչ բաց չթողնաք.
դե, գնացեք ել միք ուշանալ...

ԳԶԻՐ.— Բյոխվա ջան, դու արխային կաց. մենք նրան վոնց
վոր ըլի կճարենք, կբերենք. ա խալիս ել ինչ եք
կանգնել, ֆանարավորները թող ընկնեն առաջ:
(գզիր յեկ գյուղացիները գնում են)

Տ Ե Ս Ի Լ 11.

ԲՅՈՒՎԱ, ՏԻՐԱՑՈՒ ՅԵՎ ԱՂՍԱԿԱԼ

ՏԻՐԱՑ.— Հրեսի, Բյոխվան ել ստիա. յես ասում իմ թող
նա յեկ իմանա...

ՔՅՈՒՆՎԱ.— Ի՞նչ կա, ի՞նչա պատահել, խոսքը ի՞նչի մասիննա:
ՏԻՐԱՅ.— Ել ուրիշ ինչի՞ մասին պատի ըլի, մեր գեղումն ըսեն
 բան շատ ժամանակ չեր պատահել: Են հին, մոռա
 ված սովորութիւնը ելի նորից սկսվումա, հարկավոր
 դրա առաջն առնել, եղ խայտառակութիւններին վի
 տալ: Դա անտանելի բանա:

ԱՂՍԱԽԿ.— Մեր Տիրացուն դրուստա ասում. գեղի քոյովան է
 որենքը քու ձեռինա, դու պատի խիստ միջոցներ գո
 դնես, վոր մեր գեղում ուրիշ անգամ ըսենց բան
 չլի, թե չե մեր ջահիլ-ջուհները ըսենցթեհով կփչ
 նան: Դրա համար հարկավորա մտածել:

ՔՅՈՒՆՎԱ.— Յես զարմանում եմ ձեզ վրա, վոր դուք ըսենց մ
 ամիտ-միամիտ խոսումեք: Դուք գիտեք, վոր մեր գ
 դերում աղջիկ փախցնելը ակադան-բարադան մնաց
 սովորութիւննա: Դա վոնչ վերջացելա, վոնչ ել նոր
 սկսվում: Դրան վերջ տալը, յես կարծում եմ, վոր
 իրավունքների սահմանից դուրս բանա. ինձ թվում
 վոր եղ խայտառակութիւնը, վոնց վոր դուք եք
 սում, յեկեղեցական որենքներին ա դուրս գալիս. դ
 րա առաջն ավելի շուտ տերտերներն ու տիրացուն
 րը պտի առնեն, չունքի վոր դուք ձեր յեկեղեցակ
 որենքներով ու ժողովրդի ընդունված սովորութիւ
 ներով ու ձեռներով պատկովների առաջ ընենց դժվ
 րութիւններ եք ստեղծում, վոր կնգա տեր դառնալ
 համար շատ մարդ ստիպվածա ըլում գնալ զոռով ա
 ջիկ փախցնել:

ԱՂՍԱԽԿ.— Յես իմ աստոծը, Քյոխվան շատ տեղին ա ասու
 Մեզնում ընդունված սովորութիւն ա, աղջիկ ու տ
 թե վոր իրար սիրում ու իրար հավանում են, ուզ
 վախտն ել, թե վոր նրանց ծնողները հակառակվ
 են ու չեն տալի, եղ դեպքում պարզ բանա, վոր ն
 րանք աղջկան զոռով պտի փախցնեն:

ՏԻՐԱՅ.— Եղ հաշվով Զիլավխաննց Յեզորի աղջկան փախց
 նողն ո՞վ պտի ըլի:

ՔՅՈՒՆՎԱ.— Ով վորա, նրանց տուն ու տեղին վալաղ որմիննա:
ԱՂՍԱԽԿ.— Ասում են վոր քիչ առաջ նրանց բախչի դռանը բաշ
 լուղավոր, խանչալը կապած, մորթի փափախները
 գլխներին յերկու թուրքեր են յերեացել:

ՏԻՐԱՅ.— Սուտ բան ա. թուրքն եղքան տեղը չեր համար
 ձակվի և սիրտ չեր անի գա հոյի գեղիցը աղջիկ
 փախցնի ու տանի:

ՔՅՈՒՆՎԱ.— Դուք ի՞նչ գիտեք, վոր եղ թուրքի շորով յեկողները
 մեր գեղի տղերքը չլեն: Նրանք դատղի իրանց հա
 գուստը փոխել են, վոր տեսնողը նրանց չճանաչի:

ԱՂՍԱԽԿ.— Քյոխվան դրուստ ա ասում: Իմ կարծիքս Բադա
 լանց Յեղիչի վրաա գնում: Չունքի են առաջներում
 նա նրանց առաջարկութիւն ա արել նրանք նրան
 մերժել են:

ՔՅՈՒՆՎԱ.— Դե վոր ընտենցա, հախնա. թող հմի ճուտը կոր
 ցրած թխցկանի նման ընկնեն քամակիցը յանա-յա
 նա ման գան...

ՏԻՐԱՅ.— Հասած աղջիկը ջահել տղի յերես վոր տեսավ, պրծավ.
 ել նրան պահելը դժվարա: Աղջիկ թափան, նավթի
 ու կրակի որինակի բանա, նրանց յերկուսին վոր
 իրար մոտեցնես թե չե պաժառ կնկնեն ու կրակի պես
 կվառվեն...

ԱՂՍԱԽԿ.— Տիրացուն դրուստա ասում...

ՏԻՐԱՅ.— Զիլավխաննց Եզորի աղջիկը հոր Բադալանց Յե
 դիչին ա տեսնում, նրան ա սիրում. եզուց մի ուրի
 շին կտեսնի ուրիշին կսիրի. գեղի որենքն ընենց ա
 վոր հասած աղջկան տնից դուրս չպիտի թողնեն: Նը
 րանք մինչև իրանց մարդու գնալն ուրիշ տղամար
 յերես չպիտի տեսնան: Ծնողներն ինձ վոր լսեն իրանց
 չափահաս աղջկերանցը պտի գցեն տուն, դռները վրեն
 պինդ կողպեն ու ամանաթի պես պահեն. հենց վոր
 ուզողը դուրս եկավ թե չե, կանիցը բռնեն ու իրանց
 տան թող տանի: (գնում է)

ԱՂՍԱԽԿ.— Ըտենց վոր անեին, ես բանն ըսկի չեր պատա-

հի. 26, մեր տիրացուն խելքը գլխին մարդաւ:
ԳՅՈՒԵՎԱ.— Թող ի սեր աստծո. խելքը գլխին մարդը եսքան
 տարի առանց կնիկ չեր Յնաւ: Խելքը գլխին մարդը
 Ռասամ բեգնա, վոր առանց կնիկ երկու որ չդիմա-
 ցաւ: Տնաքանդը յերկու կնգա գլուխ կերելա, վրա յե-
 րեքն ել ուզումաւ: Եւն տղի քյոփագը վորտեղ մի սի-
 բուն աղջիկ ա տեսնում, գնում նրա յախիցն ա բըռ-
 նում:

ԱՂՍԱԵԿ.— Խոստովանք ըլի, Ռասամ բեգն իր բերանի լազգա-
 թը իմանումաւ: Եւ իր համար ես անգամ լավ փա-
 փուկ թիքա եր ճարել, համա չթողին թե վայելի:
 Գլխումը տվին խեղճի ձեռքը խեցին տարան.

ԳՅՈՒԵՎԱ.— Աչքն ել հանեցին: Յեքա մարդա չի ամաչում ա-
 զապ աղջկերանց քամակիցն ա ընկել: Եւ աղջկանից
 մեծ թոռներ ունի. բա նա գետինը չի մտնում, տես-
 նող-լսողը թնչ կասի:

ԱՂՍԱԵԿ.— Դու են ասա, պառաւված ձին դարի չի ուտում:

ԳՅՈՒԵՎԱ.— Ուտումա, համա կերածը չի մտրում...
 (յերկուսով ծիծաղում են)

Տ Ե Ս Ի Լ 12.

ՆՈՒՅՆՔ ԼԵՂԻՆԱՐ

ԼԵՂԻՆ.— Գյոխվա ջան, վերև աստված ներքև դու, յերեխիս
 խեցին տարան, մի իլաջ, մի ճար արա:

ԳՅՈՒԵՎԱ.— Տանելուց հետո ել յես թնչ կարամ անի. հմի ճվա
 իմանում նրան հըր տարան: Վհը ձորերում թաքցրին
 վհը քարափներում պահեցին... Սատանա չեմ, վոր
 տեղն իմանամ: Նրանց քամակից յես մարդ եմ զրկել:
 Գան տեսնեք թնչ խաբար են բերում...

ԱՂՍԱԵԿ.— Հրեսի նրանք գալիս են:
 (գնացած ժողովրդի մի մասն աղ մուկով հեճ են գալի)

Տ Ե Ս Ի Լ 13.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ

Ա. ԳՅՈՒՂ.— Գյոխվա ջան չգտանք:

Բ. ԳՅՈՒՂ.— Ել տեղ չթողանք, ման եկանք.

ԲՈՂՈՐԸ.— Նրանց իզն ու թողը չկա: Գնալներս գուր ելավ:

ԼԵՂԻՆ.— Հողը գլխիս յերեխես կորավ...
 (լաց ե լիճում)

ԳՅՈՒԵՎԱ.— Ման գալը, կարծում եմ, վոր սրանից ալել չի լի-
 նի: Կաց գզերն ել գա տեսանք: Գուչում կանգնել
 լաց ըլին ալելորդա. ալելի լավա գնանք տուն, մին-
 չև առավոտ վոնց վոր ըլի խաբարը մի տեղից դուրս
 կգա:

ԱՂՍԱԵԿ.— Լավա ասում գնա տուն:

ԼԵՂԻՆ.— Յերեխիս կորցնելուց հետո գնամ տուն ինչ անեմ:
 (լաց ե լիճում)

ԳՅՈՒԵՎԱ.— Մի աղջկա խաթրու գլուխներդ հո չպիտի սպանեք-
 ուր վոր տարած ըլին, կը գա: Զուր տեղը թնչ եք
 վոտ ու ձեռ ընկել... Եդ տանող շան տղեն բալքի
 հենց Ռասամ բեգիցն ել լավ մարդա... Ընենց սուգ ու
 շիվան եք բարձրացրել, կասես աշխարհը գլխներիդ
 քանդվելա:

(աղսախկալի հեճ գնում ե)

ԼԵՂԻՆ.— Յերեխիս կորցնելուց հետո աշխարհն ելա գլխիս
 քանդվել տունս ել ու տեղս ել:

(լաց լիճելով գնում ե)

Տ Ե Ս Ի Լ 14.

ՌՍՏԱՄ, ՅԵԳՈՐ ՅԵՎ ԼԵՏՈ ՅԵՂԻՇ

ՍՏԱՄ.— Վոր հազար տարի մնա, յես չեմ հավատա: Ըդենց

դատարկ մարդկանց խոսքերը իմ գլուխը չի մտնի... (Յեպիթը իրենց սնից դուրս ելապիս. կամաց-կամաց մտնելու մտքովս ինչու և ուրանց խոսակցությունը լսում)

ՅԵԳՈՐ.— Ռստամ բեգ, դու ընենց խոսում ես, կարծես մենք առաջուց գիտեցինք, վոր ըդենց փորձանքա գալու մեր գլխին...

ՌՍՍԱՄ.— Յես ասում եմ, վոր աղջիկդ իր հոժար կամքովս գնացել.

ՅԵԳՈՐ.— Իմ աղջիկը եղ բանը անողը չի: Խաչը թե իմանա նրա զորությունը յես իմանում եմ: Քու մեղադրանքը յես ասում եմ, վոր անտեղիք. իմ աղջիկը ենքան տեղը գժվել չի, վոր հայ մարդուն թողած, թուրքի հետ գլուխ վերցնի ու դնա.

ՌՍՍԱՄ.— Դրանով դու քու աղջկադ կեղտոտ արարմունքն ես ուզում արգարացնել, թե ինձ ես հիմարի տեղ գնում. յես քեզ ասում եմ, վոր քու աղջկա փախցնողը թուրքի չի, հասկացիր...

ՅԵԳՈՐ.— Յեթե թուրք չի, բա ուրիշ ո՞վա.

ՌՍՍԱՄ.— Դու ինձնից լավ ես իմանում, թե ո՞վա.

ՅԵԳՈՐ.— Միթամ նա ըլի... յես չեմ հավատում...

ՅԵՂԻՇ.— Զիլավխանենց Յեգոր, ինչի յես հակառակվում. Ռստամ բեգը սուտ խոսող մարդ չի: Նա մեր գեղի պատվովս պաշտանի իշխաննա: Իր բնավորությամբ նա ամենա օրինակելի մարդնա. նա ինչ վոր ասումա՝ ճիշտա ասում: Նրա ասածներին չհավատարու դու իրավունք չունես: Ենա եղ մարդը ասումա, վոր փախցնողը յես եմ. և վոր ձեր Մանիշակը մեր տաննա, ել զուրկտեղ ինչ եք նրան ուրիշ տեղ ման գալի. մտեք մեր տուն ձեր աղջկան վերցրեք տարեք... թող ձեր նորափեսա սիրալ չկտորվի...

(Լսվում է աղմուկ: Գլխից յեվ գնացած գյուղացիներ մի մասը մտնում են իրենց գեներով ու լապտերներով

ՆՈՒՅՆՔ. ԳԶԻՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.

ՌՈՒՈՐ.— Զիլավխանենց Յեգորի աղջկան գնացինք գտանք բերինք. թող աղջկա տերը դուրս գա՝ մշտուղ տա... (աղմուկ)

ՅԵԳՈՐ.— Ես ի՞նչ եմ ասում.

ՌՍՍԱՄ.— Անգաջներդ բաց, լսիր թե ի՞նչ եմ ասում...

ԳԶԻՐ.— Զիլավխանենց Յեգոր, մուշտուղս տուր, աղջկադ գտանք բերինք.

ՅԵԳՈՐ.— Վճիր տեղից գտաք. վճիր տեղից բերիք.

ԳԶԻՐ.— Ծգնավորի քարի տակ վոտն ու ձեռը կապած գցած եր. գնացինք վերցրինք հեռներս բերինք:

ՌՍՍԱՄ.— Կոց. բա չիմացաք տանողն ո՞վա ըլի.

ՌՈՒՈՐ
ԳՅՈՒՂԱՅ.— Ով վորա, մինչև ընտի տարելա ու ընտիան նրան թողելա ու ինքը փախել...

ՌՍՍԱՄ.— Իա դուք Մանիշակին իրան չհարցրի՞ք, ինքը ի՞նչա ասում.

ԳԶԻՐ.— Ինքը վոչինչ չի ասում: Վախութենից նրա լեզուն կապվելա. ինչքան խոսացրինք՝ ջուղաբ չտվեց, վերցրինք տարանք տուն. դեռ ուշքի չի յեկել—հենց ընենց մեռելի պես ընկածա...

ՅԵԳՈՐ.— Եղ ամեն բանը հեշտա. դուք ինձ եմ ասեք. յերեխես հո չի վախեցել. նրան հո չեն փաստել...

ԳԶԻՐ.— Դրուստն ասած, նրան փաստելը խարաբ չեմ համա...

ՅԵԳՈՐ.— Համա ի՞նչ...

ՌՍՍԱՄ.— Ասա, մի վախի.

ԳԶԻՐ.— Ամոթ չլին տեսիլը, տակի մի փարա շորերը վրիցը հանել եյին...

ՅԵԳՈՐ.— Հհ՛մ...

ՌՍՍԱՄ.— Հը՛մ... ասումես հանել եյին...

ԳԶԻՐ.— Հրամանքես, հանել եյին.

ՌՍՏԱՄ.— Դու քո աչքովը տեսա՞ր, թե հենց ընենց ասումես, հը՞, աչքերդ կհանեմ կաշիդ կմաշկեմ, թե վոր դրուստ չես ասել... (բռնում է կոկորդիցը սխմում)

ԳՁԻՐ.— Դե վոր տեսած չլիմ հո չեմ ասի, ել ինչի՞ յես ըողազիցս խեղտում. (ազաթվում է նրա ձեռքից) ա խալի մենք մեր գործը վերջացրինք:

ԲՈՂՈՐԸ.— Մենք մեր պարտականությունը կատարեցինք. զը նանք, գնանք...

ՅԵԳՈՐ.— Գնացեք. եզուց կգաք. հմի գլուխս քիչ խառնա: (գլուխը ցնցեցրեցր զնում են)

Տ Ե Ս Ի Լ 16

ՌՍՏԱՄ, ՅԵԳՈՐ, ՅԵՂԻԾ ՅԵՎ ՀԵՂԻՆԱՐ

ՀԵՂԻՆ.— Այ մարդ ինչի՞ յես կանգնել. բա դու չլսեցի՞ր, Մանիշակին բերե՞լ են. գնանք տուն, Ռստամբեզ դու եարի. Մանիշակը եկել, քեզ ա սպասում:

ՌՍՏԱՄ.— Ել սրանից հետո թող ձեր Մանիշակը ինձ չսպասի Ռստամբեզը ուրիշի ձեռքից ընկած ծաղիկը չի կոսնա և գետնից չի վերցնի (զնում է):

ՀԵՂԻՆ.— Այ մարդ, ինչ ես չորացած փետի պես կանգնել աղջկադ թողնումա, ի՞նչի ձեն չես հանում.

ՅԵԳՈՐ.— Այ կնիկ, ձեն կա վոր հանե՞մ, անով-տեղով խայտառակվեցինք: Սաղ գեղի առաջ խոսակցության ըրամբասանքի առարկա դառանք:

ՀԵՂԻՆ.— Ախ, աստված ջան, ես ինչ պատիժ ու կրակ ըրիք մեր գլխին:

ՅԵՂԻԾ.— Եդ պատիժն ու կրակը դուք բերիք ձեր գլխին. հարուստ փեսացու, լիքը տուն, հայտնի ոջախ ել փնտրում, գտար, ուրիշ ել ի՞նչ ես ուզում. Ձեռքերս սև, յերեսը քոյմրոտ ու մրոտ դարբնին դու լայն չարիք փեսա ունենաս, փեշաքյար մարդու հետ բա

րեկամություն անել դու չուզեցիր, դու պատիվ չեմաբեցիր. դու խաբվեցիր Ռստամբեզի կարողության, նրա բարձր դիրքին և աղջկանդ բախտն ուզում ելիր կապել մի մարդու կյանքի հետ, վոր նրա մի վրան արդեն գերեզմանումնա:

ՀԵՂԻՆ.— Ինչ վոր քեֆդ տալիսա ասա, դու իրավունք ունես ես փորձանքը վոր մեր գլխին յեկավ, մեղավորությունը սրանն եր. սա վոր ինձ անգաջ աներ, ես խայտառակությունը մեր գլխին չեր գա, հմի յես ինչ հողը տամ գլխիս, վճր կրակն ընկնեմ (լաց է լինում)

ՅԵԳՈՐ.— Յերեխիս անունը կոտրեցին, ոջաղիս պատիվն ու նամուսը ցեխի հետ հավասարեցրին:

ՅԵՂԻԾ.— Ձեր ոջախի պատիվը, ձեր արատավորված աղջկա անունը նորից կվերականգնի, յեթե դուք ուզենաք: Ձեր Մանիշակին, ինչպես առաջ, հիմա յել նույն սըրտով սիրում եմ: Սրտով սիրած ծաղիկն իր ընկած տեղումն ել հոտ կունենա: Իսկ եդ ծաղիկը Ռստամբեզի հոտած քնթին դուր չեկավ: Թույլ ավեք, վոր եդ ծաղիկը յես բարձրացնեմ:

ՀԵՂԻՆ.— Այ մարդ, ի՞նչ ես ասում, Յեղիշը նորից տաջարկությունա անում. նրան դու ի՞նչ ես պատասխանում.

ՅԵԳՈՐ.— Յես, յես եդ առաջարկին դեմ չեմ, իրա կամքնա. ինչպես վոր ինքը կամենումա, թող նրա սրտովը լինի: Յես կարծում եմ, վոր Մանիշակի կամքի հակառակ քան արած չենք ըլի, յեթե մենք հստեղ Յեղիշին մեր համաձայնությունը տանք: Յեթե Ռստամբեզը արժանի չեղավ մեր փեսացուն լինելու, նրա տեղ թող Յեղիշն ըլի. սա նրանից ել ջահիլ, սա նրանից ել լավ. դամաթը քոնն եր, Յեղիշ տար քեզ հալալ... (ձեռքը սեղմում է)

ՀԵՂԻՆ.— Յես գիտեյի, վոր Մանիշակը վերջիվերջո՞ քեզա դամաթ ըլելու: (Յեղիճին համբուրում է) գնամ խնամի Մարիամին ել իմաց տամ (զնում է):

ՅԵԳՈՐ.— Գնա, գիտեմ վոր քու սրտովն ելավ: Լսի՛ր Յեղիշ.

ես գեղումը բարձրացած գիշերվա դալմադալը դու լճ
սած կըլնես. անկարելիա, վոր ես գեղի մեջ կա
մենք կամ դուք թշնամիներ չունենաք:

ՅԵՂԻՇ.— Յես հասկանում եմ ինչ ես ուզում ասել:

ՅԵԳՈՐ.— Վոր հասկանում ես, ավելի լավ: Չարախոս մարդ
կանց բամբասանքներին վերջ տալու համար, ար
հենց ես գշեր ձեզ նշնենք ու ամեն ինչ վերջացնենք:

ՅԵՂԻՇ.— Յես հակառակ չեմ. բայց պաի պատրաստություն
տեսնենք:

ՅԵԳՈՐ.— Հարկավոր չի. դու գիտես, վոր մեր տանը նշան
դրեքի պատրաստությունն արդեն տեսնված էր, նո
րից պատրաստություն տեսնելու էլ կարիք չկա:
(Բապայր կովր ֆեիով փալոցի կողմից բերում է գունր

Տ Ե Ս Ի Լ 17.

ՆՈՒՅՆՔ, ԲԱԴԱԼ. ՀԵՏՈ ՀԵՂԻՆԱՐ. ՄԱՐԻԱՄ ՅԵՎ ԳՅՈՒԼԻԶԱ

(Կյուլիգադի ձեռքին նրա)

ԲԱԴԱԼ.— Հճ... հճ... քյոփոզլու հեյվան. կորչելու վախա ե
գաե՛լ գնա մտի գոմը.

ՅԵԳՈՐ.— Բարի աջողում խնամի Բադալ:

ԲԱԴԱԼ.— (մի կողմը) Ինչ ասաց. խնամի Բադալ...

ՅԵԳՈՐ.— Խնամի Բադալ չլնի կովդ կորե՛լ եր.

ԲԱԴԱԼ.— Կճվս. հա կորել եր, գաա... (մի կողմ) վոչինչ չե
հասկանում: Անպատճառ սա հարբած կլնի...

(Ներսից նրանք դուրս են գալիս) աղջի ճրագը դես
բեր. լիս արա տեսնամ չլնի թե յես սխալվում եմ, յե
ես մարդուն ուրիշի տեղ եմ ընդունում...

ՅԵԳՈՐ.— Դու չես սխալվում. խնամի Բադալ. յես հենց ե
մարդն եմ, ում տեղ վոր դու ընդունում ես... ա
կնիկ, դու քո բանը վերջացրեր թե չես:

ՀԵՂԻՆ.— Մենք մերը վերջացրինք, դուք էլ ձերը վերջացրեք
գնանք:

ՄԱՐԻԱՄ.— Ա. ադա, դու ես ինչ բանի յես: Այ մարդ, բա չես
ասի, մեր Յեղիշը սրանց Մանիշակի վրա նշնվելա,
մենք բեխարար: Ա. ադա, դե էլ ինչ ես կանգնել, նը
շանդրեքդ արի բաշադեյինջ անենք: Բախտավոր ըլեք,
մի բարձի ծերանաք. (համբուրում է):

ԲԱԴԱԼ.— Աստո՛ծ, յերկինք յես ես բանից էլի վոչինչ չեմ
հասկանում... (համբուրում է):

ՅԵԳՈՐ.— Դու հետո կհասկանաս, խնամի Բադալ: Չեր որիոր
դին և խնամի Մարիամին էլ վերցրու գնանք մեր
տուն. ձեզ ընտեղ սպասում են:

ԲԱԴԱԼ.— Դե վոր ասում ես, գնանք:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

II Գ Ա Տ Կ Ե Ր

Բեմը ներկայացնում է Յեգորի տան բակը. Առա
ջին պատկերի դեկորները, Տան ներսում նվազաձայնում,
պար, իսկ բակում կանաչներով ու ծաղիկներով զար
դարված յեվ մի ֆանի սեղ լապտերներ է ֆառ արած:

Տ Ե Ս Ի Լ 1

ՅԵԳՈՐ, ՔՅՈՒՎԱ, ԳՉԻՐ, ՏԻՐԱՅՈՒ ՅԵՎ ԱՂՍԱԽԿԱԼ.

ՔՅՈՒՎԱ.— Յես ձեզ են գլխիցն ասում եյի, վոր Յեղիշը խելոք
տղաս. գեղըցոնց խասիաթը նա իմանում էր. նա գի
տեր, վոր գեղըցու բերանը բամբասանքի համար ար
չինովա բացվում. ես խոսակցությունը նրանք մաս

տակ էյին շինելու ու տարին տասներկու ամիս ծա-
մեն-ծամծմեն: Հենց դրա համար ել իր սիրած աղջը-
կան ուղեց: Թե աղջկա անունը բարձրացրեց և թ-
խոսակցությանը վերջ տվեց: Յանի ըտեհնց չի ա, խալի-

ԱՂՍԱԽԿ.— Ըտեհնցա. ես մեր խալիը վոր մի բանն իմանումս
դնումս սանդը ծեծում ու հետ ծեծում:

ՏԻՐԱՑ.— Մենք իմացել էյինք, վոր անունը կոտրած աղջիկ
իր հոր տանը տարիներով կմնար, իսկ Յեգորի աղջը-
ջկա մուշտարին իրանց դռանը որ առաջ պատրաստ
կանգնածա ըլել, չթողեց թե մի գիշեր վրովն անցնել
հարամու պես եկավ, վրա տվեց ու տարավ...

ԳՁԻՐ.— Բյոխվա, իրավունք տուր մե խոսք ել յես ասեմ:

ԲՅՈՒՎ.— Ասա.

ԳՁԻՐ.— Յես վոր գնում եմ բազար աման տոնելու հենց
թարսի նման կոտրածնա ձեռս ընկնում...

ԲՅՈՒՎ.— Դե բոլա ել մի ասա:

ԳՁԻՐ.— Բյոխվա ջան, յես ծուռ մտքով չեմ ասում. թո
խոսքս թամամացնեմ:

ԲՅՈՒՎ.— Դե լավ ասա տեսնեմ ինչ ես ասում:

ԳՁԻՐ.— Յես են եմ ասում, վոր կոտրած ամանն ել ինձ նը-
ման իր քյոռ մուշտարինս ունենում...

ԲՅՈՒՎ.— Ձենդ կտրի, ախմախ. ենքան լակել ես, վոր խելք
թամամ կորցրել ես. ել վոչ խոսքի տակն ես ճանա-
չում, վոնչ գլուխը. դե, ել ինչ ես կանգնել. գնա կո-
րի, աչքիցս հեռացի... հրես քեզ ասում եմ, վոր ե
մյուս անգամ դու չհամարձակվես իմ ներկայությամբ
ըդենց ախմախ բաներ ասելու... հիմար. անբան ա-
նասուն...

ԳՁԻՐ.— Յես եզ խոսքը են մտքով չասի, վոր զուք նեղա-
նաք...

(Դուրս է գնում)

ՏԻՐԱՑ.— Դե, մենք ել գնանք...

ԲՈՂՈՐ.— Գնանք. ժամանակը ուշա.

ԲՅՈՒՎ.— Մնաս բարով Յեգոր.

ՏԻՐԱՑ.— Աստոծ փոշմանություն չտա.
ԱՂՍԱԽԿ.— Աստոծ մի բարձի ծերացնի.
ԲՈՂՈՐ.— Աստոծ բախտավոր անի.
ՅԵԳՈՐ.— Ծնորհակալ եմ. փոխարենը ձեր վորդոց ըլի...
(Միեչեվ բակի դուռը ցանում հանապահն է դնում)

Տ Ե Ս Ի Լ Զ

ՅԵԳՈՐ ՅԵՎ ՀԵՂԻՆԱՐ

ՀԵՂԻՆ.— Այ մարդ...

ՅԵԳՈՐ.— Ինչ կա, ինչա պատահել.

ՀԵՂԻՆ.— Ռստամ բեգը մարդա ղրկել, քեզ ուզումս տեսնի.
գնա տես ինչա ասում...

ՅԵԳՈՐ.— Նա ինձ հետ ել սրանից հետո ինչ գործ ունի. յես
չեմ հասկանում, ինչի համար է կանչում. ինչա ու-
զում ինձնից. կանչումս ինձ մասխարա գցի, վրես ծի-
ծաղի... գնա ասա եզ պատվից շատ շնորհակալ եմ...

ՀԵՂԻՆ.— Նա քեզ ղրա համար չի կանչում... լսիր ա մարդ,
բանը ուրիշ տեսակ է շուռ գալի. բա չես ասի, սրանք
մեզ խաբել են. մեր գլխին սրանք քյալադ են խո-
ղացել. Մանիշակի փախցնելը սրանց կողմից սարքո-
վի բանա ըլի...

ՅԵԳՈՐ.— Ինչ ես ասում, ա կնիկ. դու գժվել ես ինչա. քեզ
սվ ասեց. դու վթրտեղից եզ իմացար...

ՀԵՂԻՆ.— Քիչ առաջ Ղազարը ըստի կանգնած խոսալիսա ըլել,
Ռստամ բեգի նոքարը լսելա ու խաբարը տարել... ու
հմի դրա համար Ռստամ բեգը քեզ կանչումս. կարծեմ
նա նորից առաջարկություն ա ուզում անի...

ՅԵԳՈՐ.— Ռստամ բեգի ղրկած մարդն սերա, գնա կանչի
նրան ետեղ...

(Մարիտնր գնում է)

Կաց յես ինքս նրա հետ կխոսամ...

(Ինիք նույնպես գնում է)

Տ Ե Ս Ի Լ 3

ՅԵՂԻՇ ՅԵՎ ՂԱԶԱՐ

ՅԵՂԻՇ.— Ղազար ջան, քեզ մատաղ, քեզ լավ պահի, շուրուզ մի արա.

ՂԱԶԱՐ.— Շուրուզս վճրնա. յես քեֆ եմ անում. յես ուխտ եյի արել, վոր քու նշանդրեքովը մի լազաթին քեֆ անեմ. դուշմանի աչքը հանեմ... Յեղիշ ջան, դու հասկանում ես ի՞նչ եմ ասում. դուշմանի աչքը հանեմ. դասխոշ Ռստամբեգ, դասխոշ... հէյ, փափախդ քամին տանի Մանիշակին փախցնող բաշլուղավոր թուրք... Ռստամբեգի ճանկերիցը ես անմեղ վորսը լավ փախցրիք: Հա... հա... հա...

(Այնքան հարթած է վոր հագիվ կարող սնում է վոսֆ կանգնել):

ՅԵՂԻՇ.— Ղազար ջան ախր յես քեզ ասացի վոր ըտենց բաներ մի խոսա... լսող կլինի...

ՂԱԶԱՐ.— Յես հենց ասում եմ, վոր լսեն: Դու մի վախեցի. յես վոր կամ հոգեառ գարրել հրեշտակն եմ, վատ մարդու դոշին կշոքեմ բողազումը հուպ կտամ հոգին կառնեմ... թվ կարա իմ առաջ կանգնել ձեռն հանել, յես ազրահիլ եմ, կրոնեմ դիփունանց թեփրահան կանեմ ու կթողնեմ...

ՅԵՂԻՇ.— Ղազար ջան, դու ազրահիլ ես, դու ամեն ինչ կանես. ախր դու հիմի ընենց բաներ մի խոսա, վոր մի ուրիշը լսած տեղը գա մեզ թեփրահան անի...

ՂԱԶԱՐ.— Դու արխային կաց. մեզ թեփրահան անողը գեռ իրա մոր փորիցը չի ծնվել... ինչա, վոր հարբած եմ ընդուր ես ասում. մի վախի. ինչքան ել վոր հարբած ըլեմ, Ռստամ բեգի նման մի տասը մարդու, ջուղար կտամ. լսիր, եղ բեյնվան, յեփած հնդուհավը դրել եր առաջը վոր ուտի, հանկարծ վոնց ա ըլում, բլուզի միջից

եղ յեփած հավը թեա անում ու մի բաշ դուրս թընչում... ու հմի են խեղճ մարդը նստել վաճա տալի ու իր քաչալ գլուխը քորում... Դասխոշ Ռստամբեգ, դասխոշ, հնդուհավը կամաց կեր վոսկորնեը բողազիդ չմնա.

ՅԵՂԻՇ.— Ղազար ջան, ուրեմն դու ինձ չես լսում...

ՂԱԶԱՐ.— Ղազարին յերբ ես դու բան ասել, վոր նա քեզ չի լսել. ասա, ի՞նչ ես ուզում, գնամ Ռստամբեգին տամ շանսատակ անեմ, նրա տունուտեղը քանդեմ հիմնահատակ անեմ: Ասա, ի՞նչ ես ուզում:

ՅԵՂԻՇ.— Հրես իրանք դուրս են գալի, յես ուզում եմ, վոր դու յել նրանց հետ միանաս, գնանք մեր տուն մինչև լուս նստես, քեֆ անես:

Տ Ե Ս Ի Լ 4

ՆՈՒՅՆՔ. ԲԱԴԱԼ, ՄԱՐԻԱՄ, ԳՅՈՒԼԻԶԱՐ, ՄԱՆԻՇԱԿ, ՍԱՀԱԿ, ՍԱԶԱՆԴԱՐ ՅԵՎ ՀՅՈՒՐԵՐ.

(Սահակը պարելով, իսկ հրանք ծափ տալով մտնում են)

ՍԱՀԱԿ.— Աստված սիրողը թող պար գա.

ՂԱԶԱՐ.— Յես աստված չեմ սիրում, համա վոր ասում ես, պտի պարեմ. (մեջ է րնկնում ու պարում)

Տ Ե Ս Ի Լ 5

ՆՈՒՅՆՔ. ՅԵԳՈՐ ՅԵՎ ՀԵՂԻՆԱՐ.

ՂԱԶԱՐ.— Հմի նորաթը խնամի Յեգորիննա. դե, խնամի ջան, կռնեղ մի բարձրացրու տե՛նանք. սրանց նման դու՛ն ել նազ ու սուղ չանես... ա խալիս ծափ տվեք. խը-

համի Յեգորը պարա գալի:

(Յեգոր լուռ խոստումով դեմով նետում է)

ԲԱԴԱԼ.— Խնամի Յեգորը մենակ չի ուզում պարի. մենք
յերկու հալխորներս միասին կպարենք և ձեզ կաման-
չացնենք: Ձե, վոնց վոր տեսնում եմ, խնամուս չե-
ղացրել են: Ի՞նչա պատահել, խնամի Յեգոր.

ՅԵԳՈՐ.— Յես ձեր խնամին չեմ... Ձեզ պես խաբեբաների
հետ յես բարեկամություն անել չեմ ուզում: Դուրս
գնացեք կորեք իմ տնից:

ՄԱՆԻՇ.— Հայրիկ...

ՅԵԳՈՐ.— Ձենդ կտրի, լիրբ, անզգամ. յես քու հերը չեմ:

ՅԵՂԻՇ.— Ի՞նչա պատահել, չեմ հասկանում:

ՅԵԳՈՐ.— Դու շատ լավ ես հասկանում, իզուր տեղը քեզ չը
հասկանալու տեղ մի դնի:

ՂԱԶԱՐ.— Գինին յես եմ խմել, իսկ իմ տեղ սրանք են հար-
բել:

ՅԵԳՈՐ.— Դե, ել ի՞նչ եք կանգնել, դուրս գնալու համար
յես ձեզ համեցեք չպետք է անեմ:

ԲԱԴԱԼ.— Խնամի Յեգոր դու ես ինչ բանի յես...

ՅԵԳՈՐ.— Եղ խնամի խոսքն ել մյուս անգամ դու ինձ չսպաս:
Յես ձեր խնամին չեմ, քանի շուտա դուք ձեր փա-
սափուսեն հավաքեք, գնացեք կորեք ետեղից, յես
ձեզ ել աղջիկ չեմ տալիս:

ՅԵՂԻՇ.— Ձիլավխանենց Յեգոր, խելքդ հավաքի գլուխդ և
մտածիր թե ինչ ես անում. մեր մեջ արդեն ամեն
ինչ խոսվել, վերջացելա:

ՅԵԳՈՐ.— Ձոռի բան չի, կամքի բանա, յես իմ աղջկան ու-
մը կուզեմ, նրան կտամ:

ԲԱԴԱԼ.— Եղ դու առաջուց պտի մտածեյիր հմի արդեն ուշա,
աղջկադ նշնել պրծել ենք դու հմի յես խելքի յեկել:

ՅԵԳՈՐ.— Նշնել եմ, պսակել հո չեմ, նշանը միշտ ել կալամ
քանդիլ:

ՅԵՂԻՇ.— Նշանը կբանդես, իսկ մեզ իրարից բաժանել դու
չես կարող:

ՂԱԶԱՐ.— Յերկար խոսելն ավելորդա, աղջիկդ քու իրավուն-
քից արդեն դուրսա եկել. նրա տերը հմի ես մարդնա,
նրա իրավունքը որես դենը ես մարդունա պատկա-
նում: Յեղիչ ինչ ես կանգնել, նշանածիդ կունիցը
բունիբ տար ձեր տուն:

ՅԵԳՈՐ.— Վոր թողնեմ կտանի.

ՅԵՂԻՇ.— Յես կտանեմ, տեսնեմ ով չի թողնում. (գնում է
Մանիեակի քեվից բռնում)

ՅԵԳՈՐ.— Ձեող քաշի, սրանից հետո դու իրավունք չունե-
նաս նրան մոտենալու. նրան ուրիշ տեր ունի:

ՅԵՂԻՇ.— Նրա տերը յես եմ:

ՂԱԶԱՐ.— Ձիլավխանենց Յեգոր, խելքդ հավաքիր գլուխդ:
Գլխիս ուղեղը, դու գիտես, վոր ժաժա գալի, կովի
համար տոանց են ել ջանս եսա քորա գալի, կտամ
շանսատակ կանեմ, ջամդաքդ շուն ու գելի բաժին
կղարձնեմ:

ՅԵԳՈՐ.— Ձենդ կտրի, ախմախ. դու ով ես, դու ինչաց՞ես յես
վոր յեկել, գլխիս հարբա-զորբա յես անում:

ՂԱԶԱՐ.— Դու քիչ կաց, հմի կտենաս յես ով եմ: Յեղիչ ջան,
նշանածիդ կունիցը բռնած դուրս արի: Ե՛յ, խնամի
յես, թե ինչ դահրումար ես, դենը քաշվի, ճանապարհ
տուր, նշանածները թող դան անցնեն: (Մանչալը
հսկում է, բայց Մանակը չի քողնում յեվ նա կրկին
իբ սեղն է դնում)

ՅԵԳՈՐ.— Ձիլավխանենց Յեգորը իբ աչքերը բաց ձեզ աղջիկ
չի տա, վոր դուք տանեք:

ՅԵՂԻՇ.— Յես տանում եմ, տեսնեմ ովա ինձ արգելում...
(Մանիեակի քեվից բռնած գալիս է, իսկ Յեգորը դը-
ռան առաջ կանգնած չի քողնում վոր նրանք անցնեն)

ՂԱԶԱՐ.— Յես քեզ ասում եմ թող:

ՅԵԳՈՐ.— Ձեմ թողնի:

ՂԱԶԱՐ.— Յես ասում եմ քու հոժար կամքով ըլի, դե վոր
դու չես ուզում, յես իմը կանեմ: Յես վոնց վոր ըս-
կսել եմ, ընենց ել կվերջացնեմ. (բռնում է Յեգորի կո-

կողմից յեվ դնում ձեզանց քակ) յես վոր կամ, հողեառ
Գաբրիել հրեշտակն եմ, վոր մարդու գոշին կշողեմ,
բողազումը ըսենց հուպ կտամ, հողին կառնեմ:
(հյուսերը խառնվում են իրար)

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՈՒՅՆՔ, ՌՍՍԱՄ, ՔՅՈՒՎԱ ՅԵՎ ԳՁԻՐ.

ՌՍՍԱՄ.— Մրանք ըսենց են աղջիկ նշանում: Քիչ էլ վոր
մենք ուշ գայինք, ես խեղճ մարդուն սրանք սպա-
նած կլինեյին:

ՔՅՈՒՎԱ.— Յեղիշ դուք ես ինչ բանի էք:

ՅԵՂԻՇ.— Մեզ ես տեղը հասցրին: Մենք մեղավոր չենք:

ՌՍՍԱՄ.— Մեղավորը ես մարդնա, վոր սրանց աղջիկ չի ու-
զում տա:

ՅԵԳՈՐ.— Լսիր քյոխվա, դու պաշտոնական մարդ ես. դու կի-
մանաս, ես վոր իմ աղջկան սրանց տալու չլինեմ,
սրանք իրավունք ունեն, գան իմ տնից իմ աղջկան
զոռով տանեն:

ՅԵՂԻՇ.— Դու սուտ ես խոսում. քու աղջիկդ ինքը իր հոժար
կամքովնա գալի. մենք նրան զոռով չենք տանում...

ՌՍՍԱՄ.— Սուտ ես ասում, ավագանի.

ՅԵՂԻՇ.— Ավագակը դու ես, վոր որը ցերեկով ուրիշի տներն
ես թալանում, խեղճ ու կրակ ժողովրդի ունեցած-չու-
նեցածը նրանց ձեռքից խլում-սեփականացնում... հե-
րիք չի եդ ինչ վոր անում ես հիմի յել ուրիշի սիրա-
ծի վրա յես աչք դրել և յեկել տիրանալ ես ուզում...

ՌՍՍԱՄ.— Ձեռք կտրի, լակոտ...

ՅԵՂԻՇ.— Ինձ պես լակոտը քեզ պես աղա-պարոնի ձեռը վա-
ղուց պիտի կտրած ըլեր, վոր տղուկի նման կպել
ես մեր ջանին, մեր արյունը ծծում... մեր սիրտն ու
հողին վառում...

ՌՍՍԱՄ.— Յես քեզ ասում եմ ձեռք կտրիր: Իմացիր թե իմ
հետ ես խոսում... յես քու թայ մարդ չեմ...

ՅԵՂԻՇ.— Ճանաչում եմ. գիտեմ ինչ անխիղճ ու անհողի հրեշն
ես... ինչա, վոր հարուստ ես դու կարծում ես մենք
ամեն ժամանակ կխեղճանանք և թույլ կտանք, վոր
դու մեր գլխին իրավունքներ բանեցնես ու ինչ ուզե-
նաս են անես...

Ձե. մենք քեզ էլ թույլ չենք տա, հերիքա ինչքան
դու մեզ վառեցիր... աղիքներդ եստեղ վեր կածեմ...
խելքդ ռերա գնում... քու ասած մարդկերանցից չեմ,
վոր դնես վտանքիդ տակ վիզս կտրես ու դեն գցես...

ՌՍՍԱՄ.— Քյոխվա, լոցերու նրան, թե չե յես համբերությու-
նից դուրս յեկա...

ՔՅՈՒՎԱ.— Յեղիշ, յես քեզ կարգի յեմ հրավիրում... Յես քեզ
թույլ չեմ տա, վոր դու իմ ներկայությամբ Ռստամ
բեգի նման գեղի պաշտանի մարդուն ըզենց անվայել
խոսքերով անպատվես...

ՌՍՍԱՄ.— Եդ անպատվության համար իր ժամանակին և իր
տեղումը մենք սրանց հետ դեռ կխոսենք... իսկ մինչև
եզ յես առաջարկում եմ, վոր սրանց յերեքին միասին
տանես դատարան...

ՅԵՂԻՇ.— Հարցնելն ամոթ չլինի, մեր վճի հանցանքի և վճի
մեղքի համար ես մեզ դատարան ուղարկում...

ՌՍՍԱՄ.— Ձեր վոտ ու ձեռը յերբ վոր գինջիներով կապած
ձեզ կուղարկեն ուր հարկնա. դուք են ժամանակ
կիմանաք...

Ժողովրդի խաղաղ կյանքն ու հանգստությունը խան-
գարող ձեզ պես գող-ավագակները գեղից հեռու պտի
քշվեն. ձեզ նման խառնակիչ մարդկանց տեղը բանտն
ա կամ աքսորը...

Քյոխվա, ինչ ես կանգնել...

ՔՅՈՒՎԱ.— Ռստամ բեգ, ախր մի պատճառ, մի հիմք պտի տաս,
թե չե...

ՌՍՍԱՄ.— Պատճառն ու հիմքը եմա, վոր սրանք բալլեկներ

են. Հայաստանի հողի վրա վոտ դնելու սրանք իրավունք չունեն... Են արհեստանոցը, վորտեղ սրանք աշխատում են, բալլեիկները իսկական բուննա. ինչ պլաններ ասես, վոր սրանք ենտեղ չեն քաշում... ինչ հեղափոխական խոսքեր ու մտքեր ասես, վոր սրանք չեն տարածում... Որ տուաջ հարկավորա դրանց եղ բունը քանդել... բալլեիկները եղ ողակը ցրելով տալ... Ամբողջ Ռուսաստանը եղ անիծվածները քանդեցին, հիմնահատակ արեցին հերիք չի, ուզում են դան Հայաստանն ել հիմնահատակ անեն. սրանք նրանց կաշաված ագենտներն են, սրանք ծախված մարդիկ են. սրանց վոր մենք ազատ թողնենք, որը տասր մարդու գլուխ կկտրեն, սրանք գլուխ կտրողներ են, սրանք մարդասպաններ են...

ՔՅՈՒՎ.— Ձեր ասածներին չհավատալու յես իբրավունք չունեմ... (Քեոխվաբյան նեանր քառ ե անում վզից յեվ պաեսնեական դիրք բնդուում)

ՌՍՏԱՄ.— Ուրեմն, արա են, ինչ դաշնակցական կառավարության որենքը քեզ հրամայումա:

ՔԵՈՒՎ.— Որենքը ի կատար ածելը իմ պարտականություննա...
Լնիր.

ԳԶԻՐ.— Լսում եմ. (Զինվորական պատիվ ե բռնում).

ՔԵՈՒՎ.— Հայաստանի դաշնակցական կառավարության անունից հրամայում եմ, վոր սրանց ձերբակալես և տանես դատարան... Բալլեիկները կողմից կաշաված ագենտները մեր որենքի դեմ գնացող մարդիք են, նրանք մեր որենքով պիտի դատվեն և նրանցից ամեն մեկը իրանց արժանի պատիժն ստանա...

ՅԵՂԻՇ.— Յեթե մենք դաշնակցական որենքի առաջ մեղավոր ենք, փնաս չունի. տարեք մեզ ինչպես վոր կուզեք՝ դատեք և վորպես հանցավոր-մեղապարտների՝ մեր ձեռք ու վոտը զինջիլներով կապեք ու քշեք բանտ կամ քարտր... բայց նախ քան մեր ենտեղ գնալը, նախ քան մեր ես ձեռք ու վոտը զինջիլներով կապ-

վելը, մենք մեր դատաստանն ըստեղ ինքներս կանենք ու ընենց կգնանք... (Մի ակնթարքում գրպանից դաուլյնր հանում հարձակվում ե Ռուսավ բեգի վրա, դաուլյնով նրան սպանում յեվ դաուլյնր ձեռքին դուրս վազում):

ՄԱՆԻՇ.— Յեղիչ...

ՄԱՐԻԱՄ.— Վայ ինձ. յերեխես կորավ...

ԲԱԴԱԼ.— Տնով-տեղով սիբիրական դառանք...

ՔՅՈՒՎ.— Տո քու շուն, ի՜նչի թողիր, վոր նրան սպանի... որենքի առաջ յես հմի ի՜նչ ջուղաբ տամ... լսիր, յեթե դու նրան չես ճարել և հետո չես բերել, իմացած կաց, վոր որենքի առաջ դու ես պատասխանատուն...

ԴԶԻՐ.— Վայ ինձ. տունս քանդվեց: Ես ի՜նչ կրակի մեջ ընկա... Բռնեցեք. փախավ, բռնեցեք... (Դուրս ե գնում)

ՔՅՈՒՎ.— Որենքի անունից յես ձեզ հրամայում եմ, վոր վոչ վոք թր տեղիցը չի շարժվի... (խանչալը հանում ե ու դուան առաջ կանգնում)

ՂԱԶԱՐ.— Դուք ձեր որենքով խախտիս սպանեցիք, մեզ հողից հանեցիք... (Բռնում ե ֆյոխվին՝ դնում վոսֆի օակ ու մի լավ սնֆում):

Այ քեզ որենք. այ քեզ որենք... դե հմի իմ քամակիցն ել դու արի... վորտեղ դուք Յեղիչին փնտոեք, ենտեղ ել ինձ կգտնեք... (Դուրս ե վազում):

ՍԶԱԿ.— Ես բողոքի պատճառը դու յեղար, սո անհողի, անինսաֆ... (Մի յերկու անգամ խփում ե Յեգորի գլխին ու դուրս վազում: Քյոխվան բնկած սեղից վեր ե կենում օտրերը քափ օալով, գսակը վեցնում ու դուրս վազում)

ՔՅՈՒՎ.— Բռնեցեք եղ ավազակներին. փախան. բռնեցեք... բռնեցեք... (Դուրս ե գնում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է անտառ: Լուսնկա գիշեր է: Յեղիշը իր ավազակային խմբով անտառի այս ու այն կողմում ցրված ծառերի ու թփերի տակ պառկած քընած են: Առաջին պատկերից մինչև յերկրորդ գործողությունը անցել է յերկու տարի:

Տ Ե Ս Ի Լ 1.

ՅԵՂԻՇ ՅԵՎ ԽՈՒՄԲԸ.

(Յեղիշը ֆաթի վրա նստած. գլուխը առել է ավերի մեջ լուռ մտածում է).

ՅԵՂԻՇ.—

Յերկու տարվա իմ հալածական ու թափառական կյանքը ինձ սպանեց... Ամբողջ յերկու տարի տնից տեղից կտրված, բարեկամներից ու հարազատներից զրկված... նրանցից վոչ մի լուր, վոչ մի տեղեկություն... կենդանի յեն նրանք, թե մեռած... կուշտ են նրանք, թե մեռած... (յերկար լուրջությամբ) քունս չի տանում, նստել նույնպես չեմ կարողանում... (Մտախոս վեր է կենում յեվ կամաց-կամաց գնում ղեպի անտառի խորքեր...)

Տ Ե Ս Ի Լ 2.

I. II. III. ՊԱՀԱԿՆԵՐ ՅԵՎ ՀԵՏՈ I ԲԱՆԴԻՏ.

Պահակները հրացանները ձեռքերին գանգառ կաղմերի մեծում են, իսկ I բանդիտը նրանց խոսակցության մասնակի իր ֆնած ձեղից վեր է կենում նստում:

Ա. ՊԱՀ.— Ճրաքները շատ մոտա ցույց տալի, ինչպես յերեվումա գյուղից մենք շատ հեռու չենք.

Բ. ՊԱՀ.— Գյուղին շատ մոտ ըլելը մեզ համար վտանգավոր կլինի. զուր ենք մենք ես տեղն ընտրել...

Գ. ՊԱՀ.— Գիշերը ֆսաս չունի, իսկ ցերեկը յերևի մենք ես տեղ չենք մնա...

Ա. ՊԱՀ.— Ի՞նչ էք վախենում. Յեղիշը ես անտառի ամեն մի քունջ ու պուճախին լավ ծանոթա, յեթե վտանգավոր լիներ, նա մեզ եստեղ չեր բերի: Ամենաապահով տեղը սա է...

Բ. ՊԱՀ.— Զահրումար դառնա ըսենց ապահով տեղը, մարդ չի կարում թե ես կանաչ խոտերի ու թփերի տակ լազաթին պառկի ու մի հանգիստ սրտով քնի... անքնությունից գլուխս քիչ է մնում թե տաքվի...

Ա. ԲԱՆԴ.— Խալիսը եստեղ սովից մեռնումա, դու անքնության դարդն ես քաշում: Եդ տնաքանդ Յեղիշն ել խմբապետի պարտականությունը յեթե իր վրա է վերցրել, մեզ համար նա պտի մտածի, մեզ համար հաց ճարի, թե չե սա կյանքա, վոր մենք ենք քաշում... Սովածառավ ընկել ենք ես չորերը ի զուր տեղը որ մթնացնում... վոնչ կարում ենք թե տուն գնանք, վոնչ կտրում ենք թե ըսենց ահ ու դողի մեջ ապրի... մնացել ենք յերկու սրի արանքում... այ են շները, վոր ընենց հաչում են, նրանք մեզնից հազար անգամ բախտավոր են...

ՊԱՀ.— Ի հարկե բախտավոր են. նրանք վոր քաղցածանում են, ջհանդամը, ելի կարողանում են մի տեղից դեռ գցած վոսկոր դտնել ուտել, իսկ մենք եդ բախտիցն ել զրկված ենք...

Ա. ՊԱՀ.— Ելի դուք սկսեցիք ձեր հին դարմանը քամուն տալ. են գիշերը վոր դուք պահակ էք կանգնում, դուք ձեր դարդերը սկսում էք նորոգել: Յես դարմանում եմ եդ քան վոր դուք տրտնջալու ելիք, կմնայիք ձեր տանը, ի՞նչի դաչաղ ընկաք. իսկ վոր ընկել էք, ջանա

ներդ դուրս գա, պիտի քաշեք... Չե. իսկապես վոր քունդ քեզ նեղումա. դու նրա համար ես ըտենց խոսում, յես քու տեղը կհսկեմ արի դու քիչ քնի դիմի Բ. Չաջի...

Բ. ՊԱՀ.— Չեկիստները հիմի ովա իմանում, վորսկան շներ պես մեր հոտը առել են, նրանք հմի յանա-յանա ընկած մեր քամակիցը ման են գալի. նրանց ահուց մարդ կարձ քնի... աչքդ խուսի արիթ թե չե, մեկ ե տեհար հոգեհան հրեշտակների նման յեկան գլխիդ չե քեցին. դե արի ու նրանց ջուրարը տու... Չե, ավել լավա, նստեք քիչ զրից անենք բալքի քունս չտանի. (Նստում են իրենց խոսակցութունը շարունակում իսկ Ա. բանջիսր ֆնում Ե):

Ա. ՊԱՀ.— Յես վոր ձեզ ասում եյի խորհրդային յերկրում դա չաղություն անելը դժվարա, դուք ինձ չեիք հավատում: Դուք ընենց իմանում եյիք, վոր բալքեվիկներ կառավարությունը մենշեվիկների կամ դաշնակներ կառավարության նմանա, վոր ինչ ուղենաք են անեք... գիշերները գնաք գողություն ավազակություն անեք, ցերեկը գնաք պաղվախներում ու կլուրներում ձեզ համար նստեք քեֆ անեք...

Բ. ՊԱՀ.— Բու ասելով, ուրեմն, խորհրդային յերկրներում գողություն-ավազակություն չի կատարվում... նրան տուրք մարդիք են.

Ա. ՊԱՀ.— Նրանք սուրը մարդիկ չեն, ավազակություն-գողությունը նրանց մեջ ել կատարվումա. բայց եդ բան նրանք են անում, ով վոր խորհրդային իշխանությունը գեռ լավ չի ձանաչում... խորհրդային իշխանությունը չտեսնված ու չլսված որենքներ ունի. նրանց մոտ յեթե լավ ծառայեցիր, անունդ կարմիր տախտակի վրա են գրում. պատկերդ գազեթներում տպում...

(մյուս բանդիսները գլուխները բարձրացնում են)

Գ. ՊԱՀ.— Վեր կացեք, վեր կացեք. հետաքրքիր խոսակցո

թյուն ա սկսվել...

(ամբողջ խումբը, բացի ա. բանդիսից, վեր են կենում մոտենում ու նրանց խոսակցութունը լսում):

ՊԱՀ.— Կնց—եդ կարմիր տախտակ ասած բանը, ուրիշ յերկրներում ել կա, թե հենց մենակ բալքեվիկներ է հնարած բաննա...

ՊԱՀ.— Ուրիշ յերկրներում ել կա, բայց թե ում անուններն են նրա վրա գրում, այ հարցը սրանումնա... Ռուսաստանում Նիկալայի կառավարության ժամանակ եդ կարմիր տախտակի վրա ամենից առաջ հենց իրա Նիկալայի անունն եյին գրում... հետո նրա կնկա անունը. հետո նրա գահը պաշտպանող են քաջ ու հերոս գեներալ-գուբեռնատուրների անունները, ով վոր կառողանում եր հերոսաբար շատ քաղաքներ-գյուղեր եկզեկուցի յենթարկել հարյուրավոր բանվորներ ու գյուղացիներ կոտորել, նրանց կանանց ու յերեխաներին սրի քաշել:

ՈՂՈՐԸ.— Հա, հա, հա... լավ հերոսությունա...

ՊԱՀ.— Սպասեք, միք խանգարի: Բա վրաստանում մենշեվիկները ում անունն են գրում եդ կարմիր տախտակի վրա.

Ա. ՊԱՀ.— Նրանց բանն ել ըսենցա, ով ինչ տեսակ զոչաղություն ել վոր աներ, ով ի՞նչ տեսակ շնորք ել վոր բանեցներ, միևնույնա. կարմիր տախտակի վրա Նոյե ժորդանի անունը պիտի գրվեր, մենշեվիկների մեջ դա արդեն ընդունված սովորություն ե...

ՈՂՈՐԸ.— Եդ ել լավ բանա. հա. հա. հա...

ՊԱՀ.— Բա Աղբրեջանում վոնցա. կարմիր տախտակի վրա նրանք ում անուններն են գրում...

ՊԱՀ.— Աղբրեջանի մուսաֆաթներն ել իրենց մուլաների ու սեյիդների հրամաններով են զոչիների անուններն են կարմիր տախտակի վրա գրում, ով վոր շատ հայր գլուխ Ե կտրում Ե հորերի մեջ շատ հայր դիակներ լցնում...

ԲՈՂՈՐԸ.— Ես մեկը լավ ասեց, հա՛. հա՛. հա՛...

Բ. ՊԱՀ.— Ասենք եղ մուսաֆաթները բացի հայի արյունը ի՞նչ մոդ դռչիներից ու դռչիբաշներից, նրանք ել ուրիշ արժանավոր կամ նշանավոր մարդ ել չեն ունեցել...

ԲՈՂՈՐԸ.— Ըտենցա. չունքի վոր դրանք իրենց շնորքը Շախորի ստանցիումը շանց տվին...

Գ. ՊԱՀ.— Իսկապես վոր կարմիր տախտակի արժան հերոսներն են. հա՛. հա՛. հա՛...

Բ. ՊԱՀ.— Դրանցը վոր ասել ես, Հայաստանինն ել պիտի ասես

Ա. ՊԱՀ.— Հայաստանը ենա դիփդ ել իմանում եք, ել ասելի՞նչ կարիք կա.

ԲՈՂՈՐԸ.— Չե, չե. պիտի ասես. չիլինի վոր չասես...

Բ. ՊԱՀ.— Հայաստանը մեզ շատ ա հետաքրքրում.

Ա. ՊԱՀ.— Դե լավ թողեք ասեմ. Հայաստանում, ինչպես ձե հայտնիա, կարմիր տախտակի հերոսներ շատ կային՝ դրա համար ել դաշնակցական կառավարութիւնը ընտրված եր վոր կարմիր տախտակի յերկու յերեք վրա ջուխտ-ջուխտ անուներ գրել... մի յերեք վարչապետների և վարդապետների անուներն են նրանք գրում, իսկ մյուս յերեսին մավզերիստ վարժապետների ու խմբապետների անուները...

ԲՈՂՈՐԸ.— Ա՛յ դրանք արժանի հերոսներ են... ի՞նչ ենք ասել

Ա. ՊԱՀ.— Չունքի վոր Հայաստանը ազատեցին հայերից հա՛, հա՛...

ԲՈՂՈՐ.— Հենց դռչողութիւնն ել դրանում ա. հա՛, հա՛, հա՛

Ա. ԲԱՆԴ.— Դրանք դիփ դարդակ բաներ ա... ես սհաթս վ մի յերկու հատ տաք-տաք բոքոն ըլեր մի յեմաման ել թանն սպաս, ի՞նչ կխօսեի...

ԲՈՂՈՐ.— Ես տնաքանդն ել հենց մի գլուխ ուտելու համար մտածում...

Բ. ՊԱՀ.— Դուք նոր եք իմանում, վոր ես մարդը բացի փորից ուրիշ մտածմունք չունի.

Ա. ԲԱՆԴ.— Փորի համար մտածմունքը դուք քիչ բան եք կածում... փորի հարցը վոր չլիներ, աշխարհիս յերես

գելն ու գառը միասին կարածեյին. ել վոնչ պատերազմ կլներ, վոնչ ել եսքան խախը ըսենց իրար գըլուխ կուտեյին... Նստել եք դարտակ-մարտակ տակից գլխից խոտում եք... ել չեք մտածում ախը, յերկու որա հաց չենք կերել. ես զահրումար աղիքներս կուչ ա յեկել՝ կպել մեջքիցս... իսկ դուք արխային նստել եք՝ չեք ել մտածում.

Բ. ՊԱՀ.— Մեր մտածելով յանի բան կողմենք...

Ա. ԲԱՆԴ.— Յես զարմանում եմ. եսքան շկոլներ կա, եսքան համալսարներ կա, մարդիկ գնում ուտում են առնում, գիրք են կարդում, գիշեր-ցերեկ խելքներին գոռ են տալի, մի հնար չեն գտնում, վոր մարդ կարենա առանց ուտելու ապրի...

Բ. ՊԱՀ.— Են առաջներում ասում եյին, վոր միթամ թե Ամերիկայում ինչ վոր մի գիտնական ողով ապրելու գյուտը արելա.

Ա. ԲԱՆԴ.— Դու սխալ ես իմացել. նրանք ողով թունավորելու գյուտն են արել...

ԲՈՂՈՐ.— Լավ ասեց.

Գ. ՊԱՀ.— Ամերիկայի գիտնականը իր գլուխը քարովը կտա, իր ոխտը-պորտովը դալաթ կանի ու ըտենց ախմախ բան չի անի...

Ա. ՊԱՀ.— Դրանց թողնես գնան տարիներով գբաղվեն, ավերակներ փորվրեն, գետնի տակից քանդեն յեկեղեցիներ ու վանքեր հանեն: Դուխի, պուդրի, աղեկալոնի պատրաստելու ֆաբրիկաների պլաններ քաշին: Քսան յերկու դյույմանոց թնդանոթներ հնարեն: Յեքա-հայերկու դյույմանոց թնդանոթներ մոզոնեն: Ողջ շամաթ տանկաներ ու անրոպլաններ մոզոնեն: Ողջ թունավորող գաղեր բաց թողնան: Մի խոսքով, լուսավոր յերկրների եղ կրթված հրեշները ժողովրդին կոտորելուց ու խարելուց ավել նրանք ել ուրիշ բանի շնորք չունեն, ուրիշ մի լավ բանի համար նրանք յերբեք չեն մտածի...

ԲՈՂՈՐ.— Դրուստա ասում...

Ա. ՊԱՀ.— Նրանք ինչի կարիքը վոր դու՞մ են, են բանն են հնարում... վայ մեզ, վոր սոխ ու ցորեն ցանելուց ա՛ վել ել մի ուրիշ բանի շնորք չունենք...

ԲՈՂՈՐ.— Ցորեն ու սոխ ցանելը դու կարծում ես պակաս չը՞ նորքա՞... հա՛, հա՛, հա՛...

Գ. ՊԱՀ.— Ձհանդամը, չեն ել թողնում մեր ցանած սոխն ու ցորենը գնանք նստենք՝ մի հալալ ուտենք կշտանանք՞

Ա. ԲԱՆԻ.— Ա՛խ, են չեկիստներին յես ինչ ասեմ, վոր չեն գալիս ստեղ ձեր բոլորիդ սրի քաշում... Արա, բա գու՞ք ինսան չե՞ք, բա դուք ուտել չեք ուղձւմ: Տնաքանդ՝ ներ, թուրք չեք, թե ասեմ՝ որու՞ջ եք պահում... յես ստեղ սովից մեռնում եմ, սրանք նստել են իրանց համար արխային մասլահաթներ են անում... ես անտեր քուճա ել չի տանում, վոր քնեմ՝ բալքի թե ուտելը մոռանամ... (հորից ֆնում է)։

ԲՈՂՈՐԸ.— Ի՛նի. քնի, վոր սովածությունից չմեռնես. հա՛, հա՛, հա՛...

Բ. ՊԱՀ.— Տնաքանդը վեր կացավ մեր խոսակցությունն ել խանդարեց: Մի բան եյի ուզում ասել՝ մոռացա՞... (մտածում է)։

ԲՈՂՈՐ.— Հինց դու ել շուտ-շուտ բանը կմոռանաս.

Բ. ՊԱՀ.— Հա՛, են եյի ասում... կաց, վոր դու ասում ես, ախր չե վոր մենշեկիների և դաշնակիների կառավարությունն ել ժողովրդական եր, բա եդ ի՞նչիցնա, վոր նրանց որենքները սրանց նման չեր...

ԲՈՂՈՐ.— Այ եդ լավ հարցա. թե կարացիր դրա ջուղաքը տալ՝

Ա. ՊԱՀ.— Նրանց կառավարությունը անունով եր ժողովրդական, համա իսկը վոր հաըցնես, Ռուսաստանի Նիկալայի ռեփրմից նրանց որենքները հետ չեր մնում... դեպից-դեպից ամեն տեսակ որենքներ հավաքել-խառնել են իրար աջաբասնդալի նման. իրանց որենքներից սկի իրանք ել գլուխ չեն հանում. նրանցից շատ անգամ իրանք ել վոչինչ չեն հասկանում... Իրանց որենքներից բռնած, ռեզիսի նման մեկը դեան եր քաշ տալի, մեկը՝ գենը... Մեկը մի բան եր ասում,

մյուսը՝ մի ուրիշ բան. վերջի-վերջո են եր դուրս գալիս, վար նույն որենքով մեկը շինում եր, մյուսը՝ քանդում...

Բ. ՊԱՀ.— Եդ նրանիցա, վոր ազատությունը նրանք ուրիշ տեսակ են հասկանում.

Ա. ՊԱՀ.— Ձե, ավելի շուտ եդ նրանիցա, վոր նրանց կառավարության կազմի մեջ ամեն չեչիդի ու ամեն դին ու մասաբի մարդիկ կային. ել տերտեր ասես, ել տիրացու, ել սարգավաք, յեպիսկոպոս ու կաթուղիկոս: Ել վարդապետ, վարչապետ, վարժապետ, խմբապետ: Ել պարուչիկ, պրապրչիկ, փողրաթչիկ: Ել գեներալ, պալկոֆչիկ ու չինոֆչիկ: Սրանք աիփ խառնվել էյին իրար, ել շունը իր տիրոջը չեր ձանաչում. ամենքը իրար, ել շունը իր փառավոր կերպով վրեն նստել էյին. հետները խոսալ չեր ըլում: Աշխարհի տեր ու տիրականը կասես դրանք էյին ու աջ ու ձախ հրամաններ էյին արձակում: Ճիշտա, նրանք ել գող-ամաններ էյին արձակում: Ճիշտա, նրանք ել գող-վազակների քամակից յանա-յանա ման էյին գալիս, համա իրանք պակաս գող-ավազակներ չեյին...

Գ. ՊԱՀ.— Կաց, ուրեմն քու ասելով եդ մենշեկիների և դաշնակիների կառավարությունը ժողովրդական կառավարություն չե՞ր.

Ա. ՊԱՀ.— Նրանց ժամանակ կառավարությունը ուրիշ բան եր, ժողովուրդը՝ ուրիշ, իսկ բոլշեկիները վոր յեկան, եդ յերկու հասկացողությունը միացրին ու մեկ դառավ: Հմի վոր ասում են կառավարություն, եդ նշանակումա ժողովուրդ. ինչ վոր ժողովուրդը կամենումա, կառավարությունն ել են անումա: Կառավարության համար մեծից—պստիկ ամենքը մի մարդու պես կանգնած են. ընդուր ել սրանց կառավարությունը քառասուն հազար աչք ունի: Միտքդ թե վոր փոխեցիր, վոտքդ քիչ ծուռ դրիր, պրծար. են բոպեյին մեկ ել տեհար յեկան գլխումդ սովին տարան դժեղ չեկան... դե տղա յես աքրի ու են աեղից ազատվի...

Բ. ՊԱՀ.— Կանց, քու ասելով եղ չեկա ընկնողները ել չեն արգատվում...

Ա. ՊԱՀ.— Մեղավոր ըլիս ու ազատվես, եղ միկնուունա, թե դասարխանեն վոչխար ընկնի ու առանց մորթվելու սաղ-սալամաթ ելի նորից ընդիան գուրս պրծնի...

ԲՈՒՈՐ.— Վան. եղ տնաքանդները դրուստ վոր գազան հո չեն

Ա. ՊԱՀ.— Գազանից ել բեթար են: Չեկիստներին դուք չեք ճանաչում. դուք չգիտեք նրանք ինչ պտուղներ են: Յես նրանց տեսել, ճանաչում եմ. ո՛... աստված թափի ու ազատի. նրանք մարդու մսից քյուֆտա յեն ծեծում ու տոլմա շինում: Նրանց ձեռն ընկաք՝ պըր՝ ծափ. հոգոցն հանգուցելոց ասելու յեն ու են կյանքի բաշպորտը տան ձեռներդ...

Ա. ԲԱՆԴ.— Արա տնաքանդներ, դուք ել ուրիշ բան չունեք խոսալու. ի՞նչ եք կպել ետ չեկիստների յախիցը ու ել պոկ չեք գալի... դուք ես գիշեր ենքան չեկիստի արուն տվիք, սիրտս արդեն դողա ընկել: Աչքուճա արդեն չեկիստներ են յերևում:

Գ. ՊԱՀ.— Ոոստովանանք ըլի, յես ել եմ դրանցից վախում.

Ա. ԲԱՆԴ.— Կանց, ձեն չհանեք... են քոլը շարժվեց... նրա տակին կասես մարդա նստած. այ տես, տես. են ծառի կտորված ճյուղը չեկիստների են պոպոզավոր գլխարկներին չի նմանում:

ԲՈՒՈՐ.— Ես տնաքանդը դրուստ վոր վախեցելա. հա՛, հա՛, հա՛...

Ա. ՊԱՀ.— Դու՛ զեռ նրանց անունն ես լսել, վոր ըղենց վախում ես, բա վոր իրանց տեսնես՝ ինչ կլնի քու հալը:

Ա. ԲԱՆԴ.— Նրանց յերեսը սատանեն տեսի. նրանց յերեսին յես կարոտ չեմ: Յես ես տեղից շուտով կիտախչեմ քանի գուրխ վրեսա՝ զնամ նրանց ձեռքից. յախես արգտեմ: Աստու չեր Թավրի՛ղը.

Գ. ՊԱՀ.— Թավրի՛ղում չեյի՛ր, ինչի՛ յեկար.

Ա. ԲԱՆԴ.— Յես վոր իմացել եյի, դալաթ կանեյի ու չեյի գա: Յես չեմ հասկանում, Յեղի՛ը ախր ի՞նչ մտածեց, վոր մեզ նորից բերեց ես կրակը: Չե, ինչ ուզումա ըլի՛

յես գնալու յեմ. վիզս ել վոր կտրեք, յես եստեղ մընացողը չեմ. զնամ Թավրի՛ղի են ձվածեղի նման բոքոնները առնեմ տանեմ չայչի-խանում նստեմ՝ փիթի բերել տամ կուշտ փորով մի լազաթին ուտեմ, փորս տոզացնեմ. դուրս գամ Լիլավա, ձեռքերս. դնեմ քամակիս ինձ համար արխային ման գամ... են սեխաշուն չադրաների տակ ծածկված թուրքի սիրուն աղջկերանց ել մի-մի անգամ աչքի տակով նորից մտիկ տամ, բալքի սիրտս փառավորվի...

ԲՈՒՈՐԸ.— Սրա իշտահին թամաշա արեք. հա՛, հա՛, հա՛...

Ա. ՊԱՀ.— Չե, յես ինչպես տեսնում եմ, թուրքի աղջկերանց վրա դու շատ ես սիրահարված: Նրանց սե, խշխշան եղքան սիրտդ կնիկա ուզում, Հայաստանում սիրուն եղքան սիրտդ կնիկա ուզում, Հայաստանում սիրուն աղջկերք դու կարծում ես քիչ կա՛, զնա նրանցից մեկին ուզի, սիրտդ ել կփառավորվի, հոգիդ ել...

Ա. ԲԱՆԴ.— Յես դալաթ կանեմ իմ ոխտը պորտի հետ, Հայաստանի սիրուն աղջկերանց քամակից չեմ ընկնի: Նըրանք խաթալու բաներ են. նրանց ամեն մեկի վրա ձվ ա իմանում, քառասուն հազար աչք կա. նրանցից մարդ խեր կստանա. խեղճ Յեղի՛ը Հայաստանի սիրուն աղջկա համար չի՛, վոր հրես յերկու տարիա դաշաղա ընկել:

Ա. ՊԱՀ.— Իսկ դու ի՞նչ գիտես, վոր Յեղի՛ը հենց եղ յերկու տարվա կորցրած սիրուն աղջկան տեսնելու համար չի ես տեղ յեկել: Եղ ճրագները, վոր երեվումա, դա Յեղի՛անց գեղնա: Սրանից յերկու տարի առաջ Լազարն ու Սահակը Յեղի՛ի նշանդրեքի պատմութ՛յունը, վոր մեզ անում եյին. եղ դեպքը այ դրուստ ես գեղունա պատահել:

Ա. ԲԱՆԴ.— Ըտենց ասա յե՛, հմի գլխի ընկա թե բանն ինչու՛մա: Մեր եստեղ գալն ուրեմն եղ նպատակնա ունեցելք:

Ա. ՊԱՀ.— Յեվ կարողա պատահի, վոր մենք նորից հետ գընանք Պարսկաստան: Եղ արդեն մեր վաղվա կատա-

ընկեր գործի հաշտութիւնը կախված:

Բ. ՊԱՀ.— Դազարի անունը տվիր, Դիլիջանի անտառում Բուշակիկների հետ ունեցած մեր առաջին կռիվը միտք ընկալի: Դուք են վախժար մեզ հետ չկայիք. Յեղիշն էր, Դազարն էր, Սահակն էր, յես էյի, սա էր, (ա. պահակիկ) հետո մի քանի հոգի յեւ քյավառեցի կային, Բալլիկներն էլ նոր էյին մտնում Հայաստան. նրանց հետ մենք կռիւ բռնվեցինք. Դազարն ու Սահակը, նրանց գերի ընկան, իսկ մենք փախանք գնացինք Պարսկաստան:

ԲՈՂՈՐԸ.— Բա դուք նրանցից էլ խաբար չստացաք:

Գ. ՊԱՀ.— Վտաքով գլխով գնացին կորան:

Բ. ՊԱՀ.— Բալլիկների ձեռքից ըտենց տղերք են կորել: Նըրանց տապորնի կամանդը ովա իմանում թե քանի հարուր հազար Դազարի ու Սահակի նման տղերանց գլուխներ կլինեն թոցրած: Նրանց տունը քանդվի, նրանք մարդակեր հրեշներ են. նրանց անունը լսելուց մարդու մազերը բիզ-բիզա կանգնում:

ԲՈՂՈՐԸ.— Նրանք արուն խմող գազաններ են:

Գ. ՊԱՀ.— Նրանց համար մարդու գլուխ կամ սոխի գլուխ, մի հաշիվա:

ԲՈՂՈՐԸ.— Նրանք խիղճ ասած բանը չգիտեն, ցորենի նման խալիսին հնձում են:

Բ. ՊԱՀ.— Յես իմացել եմ, վոր դրանք մարդկանց հարուրներով իրար կողքի շարում են ու մի կողմից սկսում շարքով դիպունանց սրի քաշում, ամենքին կոտորում:

Ա. ՊԱՀ.— Նշանակումա, վոր դուք լավ չեք հասկանում, թե հեղափոխութիւնը ինչ բանա. ճիշտա հեղափոխության առաջի շրջանում, բանվորա-գյուղացիական իշխանութիւնը հաստատելու կռիւ են առաջի որերում, ի հարկե, բալլիկները են չեյին անում, ինչ վոր նրանք հմի են անում. ըտենց էլ պտի ըլեր ուրիշ կերպ էլ լինել չեր կարող. հեղափոխութիւն էր,

կռիւ էր, կռիւ մեջ յերկու հակառակորդ թշնամիներ խառնվել էյին իրար, ով ում պտի խղճար կամ ով ում պտի խնայեր. նրանք մեկը մյուսին ուզում էյին վոչնչացնել:

Բ. ՊԱՀ.— Չնի դու յեւ բալլիկ ես, նրանց միշտ քոմազ ես դուրս գալիս, նրանց արածները պաշտպանում:

ԲՈՂՈՐԸ.— Հը, թե ըտենց բան կա, ասա բռնեք վիզդ թարս կտրենք:

Ա. ՊԱՀ.— Յես նրանց չեմ պաշտպանում. նրանց հակառակորդներից մեկն էլ յես եմ. բայց եզ չի նշանակում, վոր ճշմարտութիւնը չպիտի ասենք: Դուք կարծում եք ուրիշները դրանցից պակաս անորեն բաներ են արել: Նրանց արածները ձեր աչքին չի յերևում: Չանգեզուրում Նոդեը գիտեք ինչերա արել. նրա արածներին դուք խաբար չեք. գիտեք թե քանի հարուր բալլիկների գլուխա նա կերել: Չանգեզուրի տարերիցն ու քարափներիցը նրա կարգադրությամբ արել ենք, թե քանի քանի անմեղներ են վորվել: Տագիտեք, թե քանի քանի թեկ ձորում նրա հրամանով գիտեք, թե քանի քանի անմեղ գոհերի դիակներա փռվել ու հողտովել: Նրանց վարչապետներն ու թթու ազգասեր վարժապետները, փարսապետներն ու թեկաձ անմեղ հրեշ-դուք կարծում եք յերկնքից վեր յեկած անմեղ հրեշտակներ էյին: Թե նրանց խմբապետները մաուզերիստտակներ էյին: Թե նրանց խմբապետներն... Յեթե ճիշտն ուզում եք իմանալ, իսկական արուն խմող գազանները հենց դրանք էյին, իսկ զաշնակցական կառավարութիւնն էդ տեսակ արուն խմող գազաններ շատ ուներ: Նրանցից շատերին, փառք ասուու, դուք ձեր աչքով տեսնում էյիք, թե ինչպես քոս ընկած շների պես թավրիղի պատերի տակ սոված ծարավ թափառում էյին և իրանց կատարած քաջագործութիւնները պարծանքով պատմում:

Ա. ԲԱՆԴ.— Սը՛րս, կարծես ինչ վոր ձեռնա լավում:

(ամեհին իսկույն վեր են կենում, հրացանները վերցնում ձեռները)

ԲՈՂՈՐԸ.— Յեղիշն ուրա, չի յերևում:

Ա. ՊԱՀ.— Սպասեք. տեղներիցդ իրար չգաք, ձեն չհանեք. կարող ե պատահի, վոր ճամփորդներ ըլին. դուր տեղը մենք մեզ կմատնենք. սուս ու փուս կանգնած տեղներից մնացեք. յես կշվկացնեմ, Յեղիշը վորտեղ վոր ըլի, շվկոցի ձենը լսելուն պես կգա: Յերեմ անգամ օվվացնում ե: Անտառի խորքից նույն կերպով օվվոցի ձայն ե լսվում)

Բ. ՊԱՀ.— Եդ պատասխան տվողը Յեղիշը չեր...

ԲՈՂՈՐԸ.— Դրուստա ասում. շվկոցի ձենը դեսիցն եկավ:

Գ. ՊԱՀ.— Հետաքրքիրա ով պտի ըլի:

Ա. ՊԱՀ.— Ով վորա, մեր տեղին ու տված նշանին վալագ մարդա:

Բ. ՊԱՀ.— Ո՞վա իմանում, բալքի հենց ճամփորդներ են:

Ա. ԲԱՆԴ.— Յեթե ճամփորդներ ըլին հետները նրանք հաց կունենան. գնանք նրանց թալանենք. հացը ձեռքներիցը խլենք բերենք ուտենք.

ԲՈՂՈՐԸ.— Ես տնաքանդն ել հենց մի գլուխ ուտելու համարա մտածում:

Ա. ԲԱՆԴ.— Յես չեմ հասկանում քաղցած մարդն ուրիշ ել ի՞նչի մասին կմտածի: Սոված եմ, հասկացեք: Յերկու որա քաղցած շան նման ընկել եմ անտառը հոտոտելով ման գալի, ուտելու բան չեմ ճարում՝ թե ուտեմ. Ամբողջ գիշերը նստել եք դարտակ-մարտակ խոսում: Յեթե ամենքս մի կողմի վրա գնացած, ամեն մի քունջ ու պուճախ ման եկած ըլիյինք, մեզ համար ուտելու մի վորևե բան կճարեյինք, կուտեյինք փորներս նյութ կնկներ դրանով մի բան կհասկանայինք: Թե չե ձեր դարտակ խոսելուց թորա թե յես բան հասկացած ըլեմ. Մինչև ես գտերումար փորը բան չընկնի մարդի գլխում վոչինչ չի մտնի:

ԲՈՂՈՐԸ.— Ես անաքանդն ընենց խոսումա, կասես մենք քաղ-

ցած չըլնինք:

Ս. ԲԱՆԴ. Դուք վոր քաղցած ըլեք, դուք ել ինչպես կմտածեք:
Բ. ՊԱՀ.— Քեզ պես վոր չենք մտածում նշանակումա, վոր մենք կուշտ ե՞նք:

Ա. ԲԱՆԴ.— Ձեր բանը ովա գլուխ հանում. դուք աստվածապաշտ, ժամասեր քրիստոնյա, ճգնավոր մարդիկ եք. ձեր հոգու փրկության համար բալքի ընենց դուք քաձեր հոգու փրկության համար բալքի ընենց դուք քա՛նասուն որ ծոմ եք պահելու, իսկ յես ծոմ պահելու սովորություն չունեմ, հոգուս փրկության համար ել մտադիր չեմ... Յես գեղացի չորան մարդ եմ, արջի պես ուտելուն յես սովոր եմ:

ԲՈՂՈՐԸ.— Սուս արա, հրես Յեղիշն եկավ:

Տ Ե Ս Ի Լ 3.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՅԵՂԻՇ

(Յեղիթը նույնպես գիցված ե: Բեմ մտնելուն պես լսվում ե օվվոցի ձայնը.)

ՅԵՂԻՇ.— Մեկ, յերկու, յերեք... իսկ և իսկ մեր նշանը, դուք բուրդ ես տեղ եք, իսկ մեր գաղտնիքը մեզանից դուրս ե յեկել: Եդ նշանակումա, վոր մեր մեջ մեզ դավաճանող մարդ կա. արժեր, վոր եդ մարդուն իմանայինք և մեր շարքերից նրան դուրս շարտեյինք: Բայց դա հետո կպարզենք և դրա ով լինելը մենք կիմանանք: Դրանով զբաղվելու դեռ հիմա ժամանակը չի: Դե, ել միք կանգնի:

ԲՈՂՈՐԸ.— Ձե. մենք չենք գնա, մինչև վոր չպարզվի և չիմանանք, թե ովա եդ դավաճանը.

Բ. ՊԱՀ.— Ով վորա թող նամարդություն չանի, աղամարդու պես թող սիրտ անի ու դուրս գա մեր ճակատին ասի վոր եդ բանն ինքնա արել: Թե չե, եսքան մարդու

կաց ես թփիցը մի բարակ ճիպոտ կտրեմ նա լավ կը
լինի:
(Մոտեցնում ե քփին: Յեղիբը հանկարծ դուրս ե գալիս
յնվ ասեցանակը նրանց ուղղում):

Տ Ե Ս Ի Լ 5.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՅԵՂԻՇ

- ՅԵՂԻՇ.**— Կանգնիր և ասա, ո՞վ ես դու:
ՂԱԶԱՐ.— Յեղիշ ջան, չխփես, յես եմ.
(ձեռքերը բարձր բռնած կանգնում ե)
- ՅԵՂԻՇ.**— Ղազար ջան, վա՛հ Սահակ ջան դուք եք, վա՛յ յես
ձեր հոգուն մատաղ: (համբուրվում են)
Դե պատմեք, պատմեք տեսնեմ ես յերկու տարի
վորտեղ եյիք: Մենք ՚ձեղ սպասելով աչքներս ջուր
կտրեց: Յես գիտեյի վոր նրանց ձեռն ընկաք, բայց
թե ի՛նչով վերջացավ, ի՛նչ ելաք, ո՞րը մնացիք, յես եղ
չիմացա:
- ՂԱԶԱՐ.**— Յեղիշ ջան, մեր պատմությունը յերկարա. թողնենք
դա մի ուրիշ անգամ կլսես յես քեզ միայն եսքանը
կասեմ, յերբ վոր նրանք մեզ բռնեցին, տարան Յե
րևանու բերդը, յերկու տարի մեզ ենտեղ պահելուց
հետո յերեկ մեզ ազատել և սուր մենք տուն եյինք
գնում:
- ՍՀԱԿ.**— Հենց ենա քաղաքից դուրս եկանք, անձրևը սաս
տիկ բռնեց մտանք մի դալդա տեղ, մինչև վոր ան
ձրևը կտրվեց մենք մեր ճամբեն շարունակեցինք. են
հասել եյինք գյուղի գլուխը անտառի կողմից հան
կարծ մի շվիոց անգաջներս կպավ:
- ՂԱԶԱՐ.**— Են ըոպեյին իմացա վոր դուք եք, ել չսպասեցինք
ճամփեն ձեռքից դուրս գետը:

ՀԱԿ.— Գալիս ենք գալիս, թե պտի գտնենք:
ՅԵՂԻՇ.— Յե՛վ վերջապես գտաք:
(Եվ վացնում ե ամբողջ խումբը վազելով գալիս ե)

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԽՈՒՄԲԸ

- ՈՒՈՐԸ.**— Վա՛հ, Ղազար ջան, Սահակ ջան...
(Բոլորը առանձին բարեվում են յնվ համբուրվում)
- ԲԱՆԴ.**— Տնաքանդներ դուք մեզ սրտաճաք արիք...
ՊԱՀ.— Ահու դողը ընկավ ջաներս. մենք ասինք չեկիսա-
ները յեկել մեզ շրջապատել են...
- ՍՀԱՐ.**— Յեթե չեն յեկել, նրանք շուտով կգան: Ձեզ պե
մարդիկ, ուրիշ յերկրից իրանց վտուր յես հողի վրա
դնում են թե չե, նրանք են ըոպեյին իմանում են...
ՊԱՀ.— Նրանք վոր իմանան զարմանալու չի, զարմանա-
լուն ենա, դուք վո՛նց իմացաք...
- ՈՒՈՐԸ.**— Իսկապես դուք ի՛նչ իմացաք մեր տեղը...
ՂԱԶԱՐ.— Հոգին սուրբը մեզ վկայեց, վոր դուք անպատճառ
ես անտառում պահված կլինեք:
- ԲԱՆԴ.**— Տնաքանդ, բալլեկիները յերկրումն եք ապրում, ելի
դուք հոգին սրբերի անունն եք տալի... Մենք ընենց
իմանում եյինք, վոր Խորհրդային յերկրներում ժամ
գնալը, աստծու, սրբերի անուն տալը արգելվածա...
- ՀԱԿ.**— Դուք շատ սխալվում եք, վոր ըտենց եք կարծում...
Խորհրդային յերկրներում քաղաքացիներին ուրիշ
շատ ազատությունների հետ նրանց խղճի ազատու-
թյուն ելա տված. կուզես աստծուն պաշտիր, կուզես
սատանին, կուզես ժամ գնա, կուզես վանք, ո՞վա քեզ
խանգարում...
- ՈՒՈՐԸ.**— Բա մենք իմացանք բալլեկները յեկել են թե չե,

ՂԱԶԱՐ.— Մուտա. նրանք, ուլքեր վոր դեռ աստծուն հավատում են, խաչերից, սրբերից դեռ չեն կտրվել, առանց քաշվելու, առանց ամաչելու, համարձակ կերպով տեր տերների Ֆարաջից բռնած, հավատացյալ վոչխարների նման, խաչ ու խաչվառններով սուրբ հայրեր ցույց տված ճանփովն են գնում... իսկ նրանք, ուլքեր վոր աստծուն մոռացել են, խաչերին ու սրբերին ու բացել, նրանք ել կոմունիստների փեշիցն են բռնել հեղափոխության ցույց տված սոցիալիզմի և կոմունիզմի ճանփովն են գնում...

ՅԵՂԻՇ.— Եդ ամեն բանը լավ. յերկու տարի մենք ձեզ կորցնելուց հետո, յերբ ձեզ ես որ մենք նորից գտնուենք, ամենքս ուրախանում ենք, իսկ դուք գիտե՞ք վոր մենք ձեզ մեռած եյինք կարծում...

ԲՈՂՈՐԸ.— Դրուստա ասում. Թավրիզում մենք ձեր քելեխ կերանք...

Բ. ՊԱՀ.— Ձեր ողորմութասն ել խմեցինք...

Ա. ԲԱՆԴ.— Ձեզ համար Հաջի Մուրադի չայչիխանում մի տկճորի արձան ել կանգնացրինք, վրան կալրի տառերով գրեցինք,
 «Աստ հանգչին Հայաստանից փախած, հայ ազգից խոռված ու ամենքից մոռացված գող ու ավազակ հայ բանդիտները»:

ԲՈՂՈՐԸ.— Հա, հա, հա... ես տնաքանդը վճրտեղից հնարեց. հա, հա, հա...

Ա. ԲԱՆԴ.— Հա, չմոռանամ ասել, Խորհրդային Հայաստանից ել եդ որը ձեր անունով մի հեռագիր ու մի փշիկից շինած պսակ ստացանք. սև լենթի վրա կարմիր տառերով գրված եր.
 «Հայաստանից տարագրված հայ ազգի գող ավազակ բանդիտներին: Հետո տակին ել ավազակ լացրած. հեղոցն ձեր հանգուցելոց, գորբեգործ ննջեցելոց, հող եյիք հող դառնաք, անիծվեք թ

հետ դառնաք...
ԲՈՂՈՐԸ.— Ես տնաքանդը բանաստեղծա ըլի... հա, հա, հա...
Ա. ԲԱՆԴ.— Քաղցածությունից դուք չեք իմացել, վոր մարդ բանաստեղծ ելա դառնում, գրող ելա դառնում, գող ելա դառնում...

ԲՈՂՈՐԸ.— Հա, հա, հա... լեզուն բացվելա...
Ա. ԲԱՆԴ.— Լսիր Ղազար, մեր եստեղ գալը իմանում ես ինչի համարա. մենք եկել ենք, վոր բալբեկիկներից մանդատ վերցնենք. ձեր վորպիսությունը իմանալու համար, դեպի իվերին յերուսաղեմ մեր կողմից մի յերմար, դեպի իվերին յերուսաղեմ մեր կողմից մի յերկու զեկեգատ ճամփու ղենենք... (բոլոր ծիծաղում են)
 Չունքի մենք իմացել ենք, վոր մինչև բալբեկիկներից մանդատ չվերցնենք, մեզ չեն թողնի են կյանքը ղենանք...

ՂԱԶԱՐ.— Դուք սխալ եք իմացել, աստված վոր իմանաք, թե ձեր ղրկած զեկեգատը բալբեկիկների տված մանդատովա գնացել, նա չեր թողնի վոր իր իշխանության սահմաններում վոտ ղնի, վորովհետև, տերտերների ու վարդապետների ամենահեղինակավոր կարծիքով աստված բալբեկիկների ամենավոխերիմ թշնամինա...
 (բոլոր ծիծաղում են)

Ա. ԲԱՆԴ.— Բալբեկիկները վոր հարուստների ու փորը տոգած բուրժույների հակառակորդներն ու վոխերիմ թշնամիներն են, յես եդ հասկանում եմ. նրանց տեղը ով ուզումա ըլի բալբեկիկների դեմ հակառակորդ վոխերիմ թշնամի կդառնա. զրանում կասկած չկա. մի մարդու ձեռից վոր գնան տունը խլեն, բաղը խլեն, մարդու ձեռից վոր գնան տունը խլեն, նրա հողը խլեն, նրա կովը խլեն, նրա հավը խլեն, նրա ձուտը խլեն, նրա հաքի շորը խլեն, նրա տակի շորը խլեն, նրա իրավունքը խլեն. պարզ բանա, վոր ըսենց երված ու դադված սրտի տեր մարդկանց համար բալբեկիկները բարեկամ լինել չեն կարող... իսկ թե աստվածն ու քրիստոսը, եդ սրբերն ու վարդապետները

ի՞նչի են դրանց հետ թշնամացել, յես եղ չեմ հասկա-
նում: Յես եսքանը միայն իմանում եմ, վոր եղ բալ-
շակիկները շատ տեղ ասուռ իսկական ճամփովն են գը-
նում ու շատ անգամ հենց իրա քրիստոսի ասածներն
են կատարում:

ԲՈՂՈՐԸ.— Դրուստա ասում. ունեվորներից նրանք խլում են
չունեվորներին են տալիս...

Ա. ԲԱՆԴ.— Քրիստոսը, կարծում եմ ասելա, ով վոր յերկու
շապիկ ունի—հանի մեկը ուրիշին տա: Ես մարդիկ
ըտենց ել անում են. ել աստված ինչի պետքա սրան
դեմ թշնամանամ... սա կարծեմ ասուռ համար ել, մար-
դու համար ել դուրեկան բանա... թե սրա համարա ա-
տված քրիստոս, տերտեր, վարդապետ թշնամանում
նշանակումա, վոր դրանք յերկու յերեսանի, խաբե-
փա, կողմնապահ մարդիկ յեն, վոր իրանք ասում յեն
համա իրանց ասածները իրանք չեն կատարում...

Ա. ՊԱՀ.— Եղ դու յես ըտենց կարծում. են հարուստներին
տերտերներին ել մի հարցրու, տես նրանք ի՞նչ են
ասում ե...

Բ. ՊԱՀ.— Նրանց համար անաստվածությունա, տնաքանդու-
թյունա...

ԲՈՂՈՐԸ.— Նրանց ձեռքից խլում են, իհարկե տնաքանդություն
կլինի... հա, հա, հա...

Գ. ՊԱՀ.— Մեկել են չլինի, վոր մեղ խափում են, թե քրիստոս
ասելա, ով վոր ես կյանքում սովածա մնում, ե
կյանքում նա կուշտա ըլելու:

ԲՈՂՈՐԸ.— Թող մենք ես կյանքում կուշտ ըլենք, իսկ են կյան-
քում ջհանդամը թե քաղցած կմնանք...

Ա. ԲԱԴ.— Ձե, յես ձեզ ասեմ. մինչև եղ յերկնքումն ել մի ու
վորուցիա չնկնի, եղ յերկնքի բանը չի դրստվելու:

ԲՈՂՈՐԸ.— Վոր ըտենցա, բալքեվեկներին ղրկենք, նրանք ունի
լուցիա ստեղծելում դոչաղ են.

Բ. ՊԱՀ.— Ընդուր ել ասածու աչքը եղ բալքեվեկներից վախեցի
ա ե... չունքի նրանք ուր վոր գնում են, հեղափո-

խությունը արդեն պատրաստա...
Ձե. դրանց արժի, վոր մի գնան յերկինք բարձրա-
նան:

ԲՈՂՈՐԸ.

Ա. ԲԱՆԴ.

— Նրանք վոր գնան դժողքի ու եղեմի բնակիչները
նրանց տեսնեն, նրանց քարոզները մի յերկու ան-
գամ վոր լսեն, մտքափոխ կլինեն աստծու իշխանու-
թյան դեմ կապտամբվեն, սրբերի ու սատանաների
մեջ գրաժդանակի կռիվ կբացվի. հրեշտակները բունդ
կանեն, դժողքը կքանդեն: Յերկինքը փուլ կգա, աս-
տղերը կթափեն, արևը կխավարի, Քրիստոսին կբռնեն
ու նորից կխաչեն: Աստված Մայրամին հետն առած
Յեվրոպա կփախչի. խառնուրդ նրա տեղը կնստի, վեց
վիլիաթներով միացյալ անկախ հայաստան կհայտա-
բարե... (բոլոր ծիծաղում են): Կերենակուն Յեվրոպա-
յից բերել կտա միսիստրական կաբինետ կկազմի. մե-
ղավորներին կազատի, անմեղներին կբանտարկի, հայր
Աբրահամին քարտուղար կնշանակի, Նոյ Նահապետին՝
գործավար, Մահմեդին՝ թեկնապահ, Մովսես մարգա-
րին՝ գանձապահ, Աթամ ու Յեվին՝ կին-բաժնի վա-
րիչ, Գաբրիլ հրեշտակապետին հիվանդանոցների կա-
ռավարիչ, Քրիստոսին կուսանոցի վանահայր, սաթա-
յեկին լուսավորության և արդարադատության կոմի-
սար (բոլոր ծիծաղում են): Ձե, ես մի բանը լավ չե-
լավ. մինչեվ եղ յերկնքից աստղերի թափվելն ու դը-
ժողքի քանդվելը արժեր, վոր Յեղյա մարգարեի հրե-
դեն կառքով կամ այրուպլանով մարդ բարձրանար ու
էր աչքովը տեսներ, վոր իսկապես եղ ինչ վոր ավե-
տարանում գրվածա, կա՞, գոյություն ունի՞, թե տեր-
տերների ու վարդապետների մոզոնած բաներա...

ԲՈՂՈՐԸ.— Դեսնք թե գոյություն ունի:

Ա. ԲԱՆԴ.— Գոյություն անհնան, ենա կտեսնեք, թե դժողքի
կպրի կարասում մեղավորները ինչպես են լողում, սա-
թայելի հրամանով կրակի վրից նրանք վախեցն ա-
թուրմա թոչում, լաց ըլում. կամ թե չե, արքայու-

թյան մեջ արդարները վճնց են ապրում, ծիծաղում... հրեշտակների ու գյոգալ հյուրի-փերինների հետ վճնց են պաղբուշկի արած եղեմի բուլվարներում բռլթատալի ու հետո նրանց հետները վերցրած վոնց են թաքուն ծղկվում թզի ծառի տակին խովլաթ տեղերը գնում նստում իրար խտտում, սիրաբնուլթյուններ անում... (բոլոր ծիծաղում են):

ՅեղիՇ.— Մեռելների աշխարհով ինչքան հետաքրքրվեցիք բավականա: Դազարն ու Սհակը խորհրդային յերկրունքն են ապրել, նրանք քաղաքից նոր են գալի, հետաքրքիր նորություններ ու տեղեկություններ բերած կըլինեն, թողեք պատմեն լսենք:

Բ. ՊԱՀ.— Յեղիշը ճիշտա ասում. թողեք պատմեն տեսնենք Հայաստանի մայրաքաղաքում ինչերա կատարվում: Տեսնենք բաղեվիկները ելի առաջվա նման քանդում են, թե նրանք սկսել են շինել...

Ա. ԲԱՆԴ.— Քանզելում նրանք շատ զոչաղ են... նրանց վոր թողնեն կոնան Բեռլին, Պարիս, Լոնդոն մի որում կըքանդեն... (բոլոր ծիծաղում են):

Ա. ՊԱՀ.— Հենց մի գուլս դուք չպիտի խոսաք, թողեք քիչ ուրիշը խոսա...

ՅեղիՇ.— Դե պատմիր տեսնենք ինչեք ասում. (յերկաբ լուրջյուն):

ՂԱԶԱՐ.— Յես ձեզ ամենից առաջ պետք է ասեմ, վոր դուք ձեր եղ զենքերը հավաքեք տանեք հանձնեք կառավարության և գնացեք ամենքդ ձեր տները... Հերիքա ինչքան տնից-տեղից դադարգյուն ընկած, սար ու քար թափառելով ման եկաք: Հերիքա ինչքան թե ձեզ և թե ուրիշներին անհանգստացրիք... Դուք լավ իմացեք, Խորհրդային իշխանությունը ձեզ թույլ չի տա, վոր դուք մինչև վերջ գողություններով ու ավագակություններով պարապեք: Նրանք կգան և կհետեվեն ձեզ ամեն մի քայլափոխում... կկռվեն ձեզ հետ, ուր վոր ել գնաք...

ԲՈՂՈՐԸ.— Թող գան. կռվից մենք չենք վախենում...

Բ. ՊԱՀ.— Կռվի մենք սովոր ենք...

ՅեղիՇ.— Նրանց դեմ կռվելու համար, հարկավոր ուժն ու զենքը մենք ել ունենք...

ՂԱԶԱՐ.— Եղ զենքերովը չի, վոր նրանք ձեր դեմ կռվում են և ձեզնից ուժեղներին միշտ հաղթում են... դեսից-դենից մի քանի հոգի հավաքվել եք, մի քանի զոռադա հրացան վերցրել ձեռքներդ, Խորհրդային իշխանության դեմ կռվի եք դուրս յեկել: Ամբողջ Յեվրոպան իրանց կատարելագործված զենքերով, իրանց պարախոդաներով, իրանց պուլեմյոտներով, իրանց այրուլաններով, իրանց ինչ արին, վոր դուք ինչ անեք: Թեկուզ տեղներովդ մի կրակ դառնաք, ախար դուք ինչ կարող եք անել...

ՄՀԱԿ.— Դադարը սուտ չի ասում. խելքներդ հավաքեցեք գըլխներդ, գնացեք ձեր դործին: Նրանց դեմ կռվելու ինչ միտք կա, կամ ինչ նպատակ: Իզուր տեղը ինչի ինչ ձեր կյանքը վտանգի մեջ դնում: Մի բան, վոր նրանք ձեզնից ուժեղ են և դուք նրանց վոչինչ անել չեք կարող...

ԲՈՂՈՐԸ.— Նրանք ել մեզ վոչինչ անել չեն կարող...

Բ. ՊԱՀ.— Մեզնից ամեն մեկը իր դերբում նստած քառասուն հազար մարդու ջուղաբ կտա...

Ա. ԲԱՆԴ.— Շամիլը Դաղստանի լեռներում ոռսաց գորքի դեմ քսանըճինգ տարի կռիվա արել ու չի հաղթվել: Մեր Յեղիշը բա Շամիլի չափ ել խելք չունի, թե մեր ես անտառներն ու լեռները Դաղստանի լեռներից պակաս ունի... Մի թամաշա արա ե... Դիամբություններ ունի... Մի թամաշա արա ե... Դիամբություններ, Լոռվա են անալիշանի, Շհալվի ես անտառները, Լոռվա են անառիկ սարերն ու ձորերը, Ալագյազի են լեն ու բոլ փեղբը քառասուն հազար մեզ նմաններին կպահեն ու կպաշտպանեն...

ՂԱԶԱՐ.— Ալագյազն ել, Մասիսն ել, Լոռվա սարերն ու ձորերն ել, Դարաքլիսի ու Դիլիշանի անտառներն ել ձեզ պա-

շտպանելու համար անգոր են... Թեկուզ դուք ինչ ուժերով ու զինքերով ել վոր զինված ըլեք, թեկուզ ինչ տեսակ անառիկ ու անմատչելի դիրքերում ել վոր դուք պահված ըլեք, միեմնույնա, դուք նրանց ձեռքից չեք ազատվելու, նրանց դուք չեք հաղթելու... Բանվորա-Գյուղացիական իշխանության որենքներով, Խորհրդային յերկրի խաղաղ կյանքն ու շինարար աշխատանքը խանգարող գողերն ու ավազակները վաղ թե ուշ, միեմնույն ա, պտի բռնվեն և բոլորը սպանվեն-կոտորվեն... դա արդեն վորոշված և վճռած բանա... Լսիր, Ղազար ջան. Բանվորա-Գյուղացիական իշխանության որենքներին յես ծանոթ չեմ, Կոմունիստական կուսակցության գաղափարներին ու ծրագրերին յես տեղյակ չեմ... բայց շատերից լսել և իմացել եմ, վոր Խորհրդային իշխանությունը բանվորներին և չքավոր գյուղացիներին համար ազատություն և հանգստություն բերող կառավարությունա... իսկ Կոմունիստական կուսակցությունը՝ բանվորներին և խեղճ ու կրակ աշխատավորներին շահերն ու իրավունքը պաշտպանող կուսակցությունա... և յես կարծում եմ, վոր Խորհրդային իշխանության որենքներին և Կոմունիստական կուսակցության ծրագրին հակառակ բան կըլինի, յեթե նրանք ամեն մի գող ու ավազակի կբռնեն և կսպանեն... Գողերին ու ավազակներին կոտորելով ու սպանելով գողության ու ավազակության առաջը չի առնվում, և վոչ ել եզ կերպ եզ խնդիրնա լուծվում... Յեթե նրանք իսկապես ժողովրդի անուխից են խոսում, գյուղացիների և բանվորների իրավունքներն ու շահերն են պաշտպանում, ախա չե՞վոր մենք ել բանվորներ ենք, չե՞վոր մենք ել գյուղացիներ ենք...

ԲՈՒՆՈՐԸ.— Յղիշը դրուստա ասում, մենք բոլորս ել բանվորներ ենք, մենք բոլորս ել գյուղացիներ ենք...

ՂԱԶԱՐ.— Դուք բոլորդ ել վոր բանվորներ եք, դուք բոլորդ ել

վոր գյուղացիներ եք, դուք եզ գիտեք, իմանում եք-բայց դուք են ել պիտի իմանաք, վոր բանվորա-գյուղացիական իշխանության բոլոր որենքներն ու կանոնները ամենից առաջ հենց դուք բանվորներդ ու գյուղացիներդ պտի պահեք ու պաշտպանեք... իսկ դուք եզ անձում եք... չեք անում: Յես ձեզ հարցնում եմ, ինչի՞ համար եք դուք եզպես զինվել, ինչի՞ համար եք դուք ձեր տուն ու տեղը թողել հավաքվել ես տեղ. դուք եզ չեք իմանում, և են ել չեք իմանում, թե ում դեմ եք զինվել և ռվա ձեր բարեկամն ու թըշնամին... դուք միայն լսել եք, վոր բանվորա-գյուղացիական իշխանությունը ձեզ համար ազատություն ու հանգստությունա բերել, իսկ եզ ազատության ու հանգստության համար դուք գաղափար չունեք... դուք լսել եք, վոր Կոմունիստական կուսակցությունը բանվորներին ու աշխատավորներին իրավունքներն ու շահերնա պաշտպանում, իսկ եզ իրավունքներին ու շահերին մասին դուք տեղյակ չեք...

Ա. ԲԱՆԴ.— Կաց. եզ որհնված մեղուկիցը կասես հացի հոտա գալի... (Ղազարի կողքից օտարակը հանում է ու դնում առաջը): Դու թո խոսքը շարունակի, յես քեզ լսում եմ, իմ անգաջը դետնա: Համա խոստովանք ըլի, լավ ես ճառում... Տնաքանդ, ընենց խոսում ես, կասես Հայր Աբրահամու գառն ես. մեզ հետ զաչաղություն, ավազակություն չես արել...

Բ. ՊԱՆ.— Դրուստա ասում, ինչ վոր մենք ենք, են ել դու ես արել...

Գ. ՊԱՆ.— Դու մեզ հետ յեղած ժամանակ քիչ ճանվորթներ ես թալանել...

Ա. ԲԱՆԴ.— Գողություն, ավազակություն անելը թե վոր վատ բանա, դու ինչի եյիր անում... իսկ անելուց հետո ել մեղքդ փեշերիցդ թափ ես տվել, սուտ ճգնավորի նրման, յեկել խալխի գլխին գելի ավետարան կարդում: **ԲՈՒՆՈՐԸ.**— Հարցնելը ամոթ չլինի, աղածներդ ես մոռացել, թե

քյոհնա խասյաթդա փոխվել...

ՂԱԶԱՐ.— Ճիշտա, իմ խասյաթսա փոխվել, յերկու տարի ուղղիչ տնում մնալուց հետո, ինչ տեսակ խասյաթ ել վոր ունենայի. պտի փոխվեր... Նրանց գրադարան-ընթերցարանը, նրանց ամեն լեզվով ու ամեն տեսակ գազեթներն ու ժուրնալները, նրանց կազմակերպած դասախոսություններն ու ներկայացումները մարդու խասյաթն ել կփոխեր, սիրտն ել ու հոգին ել... Խորհրդային յերկրի ուղղիչ տները Նիկալայի կամ դաշնակների ժամանակվա մութ ու խոնավ բանտերը չի, վոր բանվորները տարիներով սոված-ծարավ տանջվում էյին ու փթում... Ամիսներով նըրանք պարզ ողը դուրս գալու, արեւի պայծառ լուս տեսնելու կարոտ էյին մնում... Նրանք ամբողջ տարիներով կամերների չոր ու ցամաք կուշետկաների վրա ընկած գշեր-ցերեկ կարտ էյին խաղում ու դուամարբազություն անում: Նրանք թղթի ու գրքի յերես յերեք չէյին տեսնում: Նրանք ընկերական մի քաղցր խոսք չէյին լսում: Նրանք սովոր էյին բանտապետի ու նաղդիրատելի անվայել խոսքերն ու հայհոյանքները լսել և նրանց անտեղի ծեծն ու նախատինքը տանել...

Ա. ԲԱՆԴ.— Յես գարմանում եմ. դե վոր ետքան լավ տեղ եր, կմնայիք, ել ինչի՞ յեկաք...

ՍՀԱԿ.— Յեկել ենք, վոր ձեղ ել տանենք:

ԲՈԼՈՐԸ.— Մենք շնորհակալ ենք. չենք գալիս:

Բ. ԲԱՆԴ.— Եստեղ գնացողները գշեր ցերեկ աստված են կանչում, աղոթք են անում, վոր շուտով դուրս գան ազատվեն, իսկ սա յեկել մեզ հրավիրումա, վոր մենք մեր վտաքով գնանք ընկինք աղվեսի թալակը: Խելք չի բա ինչ գահրումարա... (բոլոր ծիծաղում են): Ես ինչ վոր սրանք ասացին, դուք հավատում եք. յես իմ աստոծը, սրանք իրանց ասածներին սկի իրանք չեն հավատում... (բոլոր ծիծաղում են): Եսքան լավ տե-

դից թե վոր գալիսին. ես գահրումար մեշոկի մեջ մի կտոր հաց կդնեյին, դարդակ վեր են կացել, կասես խաբար են բերել... (բոլոր ծիծաղում են):

ՅԵՂԻՇ.— Ղազար ջան, քու ասածներին չհավատալու, յես իրավունք չունեմ, յես քեզ նոր չեմ ճանաչելու: Իհարկե, դուք ձեր աչքով տեսածներն եք պատմում և հավատում: Բայց մենք ել քանի վոր աչքով չենք տեսել, մեր ականջներով լսածներին յենք ուզում հավատալ: Կան մարդիք, վոր դրանց մասին մեզ ուրիշ բան են ասում...

Ա. ԲԱՆԴ.— Հարցնելը ամոթ չլնի, դրանք տապորնի կամանդ չունեն...

Բ. ՊԱՀ.— Նրանք մարդկանց իրար կողքի չեն շարում տապորով տալի գլուխները թոցնում...

Գ. ՊԱՀ.— Նրանք մարդու մսից քյուֆթա չեն ծեծում դումա շինում...

Ա. ԲԱՆԴ.— Ասում են, վոր դրանք ոխտը գլխանի վիշապի տեսք ունեն...

Բ. ՊԱՀ.— Ասում են, վոր դրանք մարդու մսով ու արյունով են կերակրվում...

Գ. ՊԱՀ.— Ասում են, վոր Հայաստանում ել մարդ չի մնացել, դիփին կոտորել են... (Ղազարն ու Սեակը ծիծաղում են):

ՂԱԶԱՐ.— Ել ուրիշ բաներ չեն ասում:

ԲՈԼՈՐԸ.— Եդ ասածները քիչա, վոր ելի ասեն:

ՅԵՂԻՇ.— Հո լսեցիք, մեզ եղպես են ասել, մեզ կողպես են հավատացրել...

ԲՈԼՈՐԸ.— Յեղիշը դուռտա ասում. մեզ եղպես են ասում, մեզ կողպես են հավատացնում...

ՂԱԶԱՐ.— Եդ ասողներին դուք սկի հետաքրքրվել եք ճվքեր են: Ձեղ եղպես ասողները նրանք են, վոր Հայաստանը կովի բուն էյին դարձրել, և յերկու հարեվան ժողովուրդ իրար թշնամացրել, իրար մորթում, իրար կոտորում էյին: Եդ ասողները նրանք են, վոր իրանք պաղպամենտում նստած ճառում էյին, իսկ քյալազյոզ

վունք չունեիր նրա կամքին հակառակվելու, նրա առաջ ձայն ծպտուն հանելու: Նրանց որենքով Ռըստամբեգի նման, ժողովրդի արյունը ծծող տգրուկը, վաշխառուն գյուղի պատվավոր, պաշտոնի մարդու անունն ու պատիվն եր վայելում. իսկ յես, վոր առավտից մինչև իրիկու կրակի ու զնդանի առաջ արուն-քրտինք եյի թափում, իմ հալալ աշխատանքով ապրում, ետր յես իմ տան ու տեղից կտրված, սիրածիցս զրկված, գող ու ավագակի կեղտոտ ու արատավոր անունն եմ վայելում... (գլուխը յերկու ձեռնով ավերի մեջ առած արտասվում է)

ՂԱԶԱՐ.— Յեղիշ ջան սիրտդ մի կտորի... եղ բոլորը անցել գընացելա... Մեզ տանջող ու ճնշող որենքները քանգվել, խորտակվելա... Հիմա աշխատավոր ժողովուրդը իր գլխի ու իր իրավունքի տերնա... (յերկար լուռքյուն): Յեղիշ ջան, ղե հմի մենք գնում ենք գյուղը. ի՞նչ ես ասում, ասա...

ՅԵՂԻՇ.— Յես վոչինչ չունեմ ասելու...

ՂԱԶԱՐ.— Դե լավ, վոնչ ասա և վոնչ ել լաց յեղիր... գնալուս պես կգնամ ծնողներիդ կտեսնեմ, ու ինչ վոր հարկավորնա յես նրանց հետ կասեմ, կխոսեմ... Իսկ թե Մանիշակի համար ես մտածում, նրա կարոտն ես քաշում, դրա համար ել հալբաթ մի բան կանեմ... (արտասուներ խեղդում է յե ալիս չի կարողանում օտրուկակեի. արտասուներ սրբելով Սհակի հետ վեր են կենում յեվ լուռ հեռանում):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է նույն անտառի մի այլ տեսարանը: Արևը նոր սկսում է մայր մտնել: Բացի Յեղիշից և Բ. պահակից խմբի մյուս անդամները շրջան են կազմել իրար կողքի նստել. Ա. պահակը պատմում է, իսկ մյուսները լսում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Ա. և Գ. ՊԱՀԱԿ, Ա. ԲԱՆԴԻՏ ՅԵՎ ԽՈՒՄԲԸ

Ա. ՊԱՀ.— Հոկտեմբերյան Հեղափոխության տոնի որն եր, ետ որը ամբողջ քաղաքը կարմիր դրոշակներով զարդարված եր. քաղաքի մեծ փողոցներում, պետական թատվան կոմունարների այգում մեծ միտինգներ եր կազմված: Լենինի, Տրոցկու և մի քանի հայտնի կոմունիստների նկարներ պատերից քաշ եյին արել. խալիչաներով բալկոնները զարդարել եյին... մեկ ել են տեսա, բալկոնները զարդարել գրա մեզ, բարձրացա մարդկանց մի ծով շարժվումա դրա մեզ, բարձրակմի քարի վրա, ի՞նչ տեսնեմ. խալիսը կարմիր դրոշակներով, կարմիր բանակայինները իրենց հրացաններով, թնդանոթներով, պուլիմետներով. պատկոմները, պրոֆսայուզի անդամները, չոնը իր ատրիադով, դուրս մուգիկաներով, ուռոտ կանչելով, յերգելով գալիս եյին, նրանց հետևիցն ել ավտոմոբիլներն ու յեղան արարաներով, կանաչ խոտերով ու ծաղիկներով զարդարված, բանվորները իրենց գործի շորերով նրանց մեջ նստոտած աշխատում եյին:

ԲՈՂՈՐԸ.— Վճնց եյին աշխատում:

Ա. ԲԱՆԴ.— Ի՞նչ էյին շինում.

Ա. ՊԱՀ.— Որինակի համար, տպարանի բանվորները գրուզավի-
կի մեջ որինավոր տպարան էյին սարքել, թխթի վրա
տպում էյին ու գցում խալխի մեջ: Կաշվի զավոդի
բանվորները, կռները վեր քաշած, կաշվի գոգնոցները
առաջներովը կապել, կաշի էյին սրում, կաշի էյին
քերում: Մապոժնիկների արտելի բանվորները դադ-
գահների կողքին նստած, սապոկներ էյին կարում,
շպիլկա խփում: Մեխանիչսկի զավոդի բանվորները՝
փուքս էյին փշում, զնդանի վրա յերկաթ ձեծում: Ա-
րարատ զավոդի բանվորները բուլբուկաների մեջ գի-
նի, կանյակ էյին լցնում: Ջուհլահները՝ կտավ էյին
գործում: Պարտնոներն ու շվեյնիկները մաշինով կալ-
էյին անում: Ամենավերջի ավտոմոբիլի վրա էլ Հայաս-
տանն էյին ցույց տալիս, դաշնակների ժամանակ:

ԲՈՂՈՐԸ.— Այ, եդ հետաքրքիրա...

Գ. ՊԱՀ.— Եդ վճնց էյին շինել...

Ա. ՊԱՀ.— Ըսենց մի կրուկ տեղ դաշնակցական միւստրը կանդ-
նած, յերկու խմբապետ ու յերկու մավզերիստ մի-
նիստրների հրամանով մի գյուղացու գցել են վոտի
տակը, մավզերիստները մատգերները հանել կանդ-
նել են, իսկ խմբապետներն էլ դամշին վերցրել, մի
վոտը դրել գյուղացու դռին, նրան ձեծում են: Ես մի
ավտոմոբիլի մեջ: Մյոն ալտոմոբիլն էլ բալշիվիկնե-
րը նստած, պոպոզ գլխարկը գլխներին, կարմիր աս-
տղը ճակատներին, թվանգը ձեռքներին չոքել նշան
էյին բռնել, դաշնակցականներին խփելու համար:

ԲՈՂՈՐԸ.— Թող խփեն ե... հա, հա, հա...

Ա. ԲԱՆԸ.— Դրանց կոտորելու տեղնա. կոտորելու...

Գ. ՊԱՀ.— Լավ, թողեք ես մարդը իր խոսքը շարունակի.

Ա. ՊԱՀ.— Հա, ենեյի ասում. ըսենց իրար հետեից յեկան ջեր-
գով շարվեցին պրոֆսայուզի առաջ... մի քիչ սպասե-
ցին, վերջապես միտինգը բաց արին, ամենից առա-
ջուրս յեկավ Հայաստանի Գործադիր կոմիտեյի նա-

խագահը խոսաց, հետո Սոցիալարկոմի նախագահը, Յե-
րևանի կոմիտեյի քարտուղարը, հետո Հողժողկոմը,
Լուսժողկոմը, Պրոֆմիուլթյունների խորհրդի նախագա-
հը, Աշխատանքի կոմիտարը, Կարմիր Բանակի հրամա-
նատարը, կոլլեկտիվ թատրոնի ղեկավարը, պրոլետ գը-
րողների միուլթյան նախագահը, հետո մի քանի բան-
վորներ... Դրանք ամենքն էլ իրանց հերթին որվա
նշանակուլթյան համար ճառեր խոսացին. հետո ի՞նչ
ճառեր... Յեդ ձեզ ասեմ, յեթե են խոսքերը նրանք
Նիկալայի կամ դաշնակցականների ժամանակ ասեյին
եդ ասողներին նրանք տեղն ու տեղը կապանէյին կամ
թե չե հարուր տարով նրանց Սիբիր կքշէյին...

ԲՈՂՈՐԸ.— Նրանք կանէյին... Ի՞նչ տղերք էյին վոր չանեն...

Ա. ՊԱՀ.— Հա, են էյի ասում. ամեն ճառախոս իր ճառը վեր-
ջացնելուց հետո դուխավոյ մուզիկով «Ինտերնացիո-
նալ»-ը անում էյին, ամենքը գլխարկները վերցրած
կանգնած լսում էյին.

Գ. ԲԱՆԴ.— Կաց, էլ գլխարկները ի՞նչի էյին վերցնում.

ԲՈՂՈՐԸ.— Դրուստա ասում, ժամումը հո չեի՞ն.

Ա. ՊԱՀ.— Եդ «Ինտերնացիոնալը» ընենց մի յեղանակա, վոր
նրա ձենը լսելուն պես, հայ, թուրք, ջնուդ, ուսա,
վրացի, քուրդ, ասորի... թեկուզ ու՛ ուզումա ըլի, պի-
տի անպատճառ վոտքի կանգնի ու գլխարկը վերցնի.
յեթե չի էլ վերցնում, պտի ըսենց չնստ բռնի.

ԲՈՂՈՐԸ.— Ախր ի՞նչ բանի համար.

Գ. ՊԱՀ.— Եդ «Ինտերնացիոնալը» յեղանակը, կամ եդ չեստ
բռնելը ի՞նչ նշանակուլթյուն ունի, վոր ըտենց ամեն
ազգ դրան հարգումա...

Ա. ՊԱՀ.— Դրա նշանակուլթյունը, իսկական բացատրուլթյունը
իրանք կոմունիստներն են իմանում ուրիշ ոչով...

Ա. ԲԱՆԴ.— Յես կարծում եմ, վոր դրա նշանակուլթյունը Ղա-
զարն էլ կիմանա.

ԲՈՂՈՐԸ.— Նա ընենց շուննա, վոր կիմանա.

Գ. ՊԱՀ.— Մտներս ըլի, նա վոր կգա, հարցնենք.

Ա. ԲԱՆԴ.— Յես զարմանում եմ, ետքան բան դա վոր սովորե-
լա, եդ վոնցա, վոր կոմունիստ չի դառել:

ԲՈՂՈՐԸ.— Ի՞նչ գիտեք, բալքի դառելա...

Ա. ՊԱՀ.— Կոմունիստական կուսակցության դռները խոջի բաղ-
նիսի դռները չի, վոր ո՞վ ուզենա գնա բաց անի ու
ներս մտնի. կոմունիստ լինելու համար յերկար ժա-
մանակ պատրաստվել ե հարկավոր.

Ա. ԲԱՆԴ.— Դրուստա ասում, հեշտ վոր ըլեր, ամենքը հմի կո-
մունիստ դառած կլինեյին...

Ա. ՊԱՀ.— Են առաջ եր, վոր կուսակցության մեջ մտնելը հեշտ
եր, հմի սարդի յեն, բացի բանվորերից ուրիշին նը-
րանք ներս չեն թողնում: Առաջներում միմի անգամ
դռան ճեղքից կամ չորնի խողից մարդիկ կարողանում
եյին թաքուն ներս մտնել կուսակցության տոմսը գո-
ղանալ դնել շիքները ու դուրս գալ... հմի եդ ել չկա:
Տարին յերկու անգամ, նրանց կանտրոլի կամիսթան
պրավերկաա անում...

ԲՈՂՈՐԸ.— Վճնց են պրավերկա անում,

Գ. ՊԱՀ.— Յես վոր նրանց տոմսը շիբումս ունենամ, նրանք
վճնց պտի իմանան, վոր յես կոմունիստ չեմ...

Ա. ՊԱՀ.— Կոմունիստը ճշմարտախոսա, պարտաճանաչա, նա
ազնիվ սիրտ ունի, մաքուր հոգի, համեստ բնավորու-
թյուն. հազար տարի մնա, նա վատություն չի
անի, ուրիշին ֆնաս չի տա... ես տեսակ հազար ու
մի առավելություն. ես առավելությունը ում մոտ
վոր չելավ, նրանք իմանում են, վոր նա գողացած
տոմսով ու յառլիկով կոմունիստ, բռնում են իրենց
շարքերից հեռացնում...

Գ. ՊԱՀ.— Ուրիշ ել ի՞նչ տեսակ մարդկանց կուսակցության մեջ
չեն ընդունում:

Ա. ՊԱՀ.— Ով վոր տուն ունի, տեղ ունի, բաղ ունի, բաղչա
ունի, հող ունի, փող ունի.

Ա. ԲԱՆԴ.— Եդ հաշվով նրանք մեզ կնդունեն. մենք վոնչ տուն
ուսենք, վոնչ տեղ ունենք, վոնչ հող ունենք վոնչ

փող ունենք... զավորատեր կամ ֆարրիկանտներ
չենք, վոր գնանք բանվորներին շահագործենք, սպե-
կուլյանտներ չենք՝ մուշտարիներին խարենք, կաշի-
ները պլոկենք. մենք ունեւորներին ենք թալանում և
թալանածը մեր մեջ բերում հավասար կերպով բաժա-
նում: Մենք իրար չենք խափում, իրար չենք զրկում.
կարծում եմ, վոր կոմունիստներն ել ըսենց են ա-
սում.

ԲՈՂՈՐԸ.— Ըտենց վոր ըլի, նշանակումա վոր մենք լավ կոմու-
նիստներ ենք. հա, հա, հա...

Ա. ԲԱՆԴ.— Յեթե մենք դիմում տանք, յես կարծում եմ, վոր
նրանք մեզ կուսակցության մեջ կնդունեն:

Ա. ՊԱՀ.— Կնդունեն, համա չիտակի ժամանակ պոչներիցդ կը
բռնեն սատկած կատվի նման դուրս կշպրտեն...

Ա. ԲԱՆԴ.— Դրանք դիժ դարդակ բաներա. Ղազարը շուտ գար
հաց բերեր, հաց ուտեյինք...

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՒՅՆՔ, ՅԵՂԻՇ ՅԵՎ Բ. ՊԱՀԱԿ.

(Հեռվից լսվում ե սրեգի ձայն)

ՅԵՂԻՇ.— Ես կանաչ սարերն ու ձորերը յերբ նորից յես տես-
նում եմ, հանդից վերադարձող հոտաղների շվիի են
քաղցր ձենը յերբ նորից յես լսում եմ, յես իմ անց-
յալս եմ հիշում ու իմ մանկության ազատ և ուրախ
որերը մտաբերում... Նրանց պես փոքր ժամանակս
հանդում յես ել տավար եմ արածացրել, յես ել նը-
րանց պես տուն վերադառնալիս յերգ եմ ասել, շվի
փչել... հմի եդ բոլորը յես մոռացել եմ... միայն են
յերկու տուննա, վոր չեմ մոռանում և իմ աչքիցս յեր-
բեք չի հեռանում... (Մի ձեռք ցրա ուսից դրած ցույց

ե տարիս) գեղի են մեծ չինարին հո տեսնում ես: Նը-
րա են կողքի բաղչեն առաջին բարկոնով տունը Զի-
լավխանենց Յեգորի տուննա, իմ սիրած Մանիշակը
եզ տնումնա ապրում... նշանդրեքի գիշերը Ռստամ
բեգին եզ տնումը սպանեցի ու են որվանից դաչաղ
ընկա... (սեղը փոխում ե) դե հմի քիչ դեսն արի: Են
տնից մի քիչ դեսը են քանդված չարդախը առաջին
տունն ել հո տեսնում ես... դա ել մեր տուննա... Իմ
հալեոր հերս, իմ դարդից սիրտը մաշված ու դաղված,
մերս ու քիրս յերկու տարի սրանից առաջ եզ տնումն
եմ թողել-հեռացել... յերկու տարիս յես նրանց յերեսը
չեմ տեսել... յերկու տարիս յես նրանց ձենը չեմ լը-
սել... (Յտում ե կտրված ծառի կոնդի վրա, գլուխը
առնում ափերի մեջ ու լաց լինում):

Տ Ե Ս Ի Լ 3.

ՆՈՒՅՆՔ, ՂԱԶԱՐ ՅԵՎ ԲԱԴԱԼ

(Ղազարի ուսին խուրջին, Բադալի ձեռին փայտ)

ՂԱԶԱՐ.— Արի Բադալ ամի, արի. դու ընենց իմանում ես թե
յես հանաք եմ անում... Յեղիշ, գլուխդ մի բարձրա-
ցու՝ տես հմն եմ բերել...

(Յեղիթը նայում ե յեվ ընդառաջ վազում)
Ափու ջան...

ԲԱԴԱԼ.— Յեղիշ ջան. իմ կորած բալա... (իբար գրկում են ու
համբուրվում: Յերկար ժամանակ իբար գրկած արտա-
վում են. Ղազարն ու Բ. պահակը մոտենում են իմբին)

ՂԱԶԱՐ.— Քաղցած գելերի նման հանկարծ իրար չուտեք: Նըս-
տեք, ամենքիդ ել փայ կհասնի: Թողեք նրանք հեր
ու վորդի քիչ դարդաշմիշ ըլին, իրար կարոտ առնեն,
իսկ դուք վերցրեք գաթա կերեք, փորներդ կշտա-

ցըրեք... Թոնրից տաք-տաք հանել եմ տվել լցրել
խուրջինը. կասես քիչ փշրվելա. (Խուրջինից հանում ե
ու բաժանում: Խումբը քշան կազմած նստել ուտում են)
Գալուս բա դու նրան չտեսար. իմ մասին նա ինչ եր
ասում. իմ հեռանալուց հետո նա մեր տուն գալիս եր,
իմ անունը սկի տալիս եր... Ա հեր, ինչի չես խո-
սում...

ՅԵՂԻՇ.—

ԲԱԴԱԼ.—

Յեղիշ ջան, ինչ խոսամ. քու տեսնելով ինչքան դու
ինձ ուրախացրիր, ենքան ել տխրացրիր. յես հմի ը-
նենց խոսք չեմ գտնում՝ քեզ ասեմ, վոր քու եզ կա-
րոտով վառված սիրտդ հովացնեմ... քու դարդից սիր-
տս սառելա, միտքս չորացել... յերանի աստված իմ
հոգին առներ, քու սիրտդ խորտակող խոսքեր դու իմ
բերանից չի լսելիր...

ՅԵՂԻՇ.—

Եդ խոսքերով դու ինձ վախեցնում ես, ս հեր. դե
ասա տեսնեմ, ինձ համար ինչ լուր ես բերել Մանի-
շակիցը...

ԲԱԴԱԼ.—

Մանիշակը...

ՅԵՂԻՇ.—

Ինչ. Մանիշակը ուրիշ մարդուս գնացել.

ԲԱԴԱԼ.—

Մանիշակը. Մանիշակը ել. ել... չ՛չ՛...

ՅԵՂԻՇ.—

Մի ասա. ս հեր, մի ասա... յես արդեն իմանում
եմ... իմ սիրտս արդեն զգումա, թե ինչ ես ուզում
ասել... (Յեղիթն ու Բադալը լաց են լինում).

ԲՈՂՈՐԸ.—

Յեղիշը ինչիս լաց ըլում...

ՂԱԶԱՐ.—

Սրանից մի տարի առաջ Մանիշակը մահացելա.
խեղճը հմի իմացել՝ նստել լացա ըլում.

ԲԱԴԱԼ.—

Դարդ մի արա, Յեղիշ ջան. քեզ սիրող աղջկերք
մեր գեղում շատ կա. նրանց մեկի հետ կյանքդ կկա-
պես, տխուր որերդ կամաց-կամաց կանցնի և դու կը
մոռանաս ամեն ինչ... դու դեռ ջահել ես, լավ որեր
դու դեռ շատ կտեսնես... Ղազարն ու Մհակը յեկան
գնացին գեղի խորհրդի նախագահի մոտ և նա խոս-
տացա՞վ միջամտի ուր հարկնա և ձեզ բոլորիդ ազա-
տի... վեր կաց գնանք տուն...

Յեղիշ.— Յես մեր տնից ընենց դուրս չեմ յեկել, վոր նորից կարողանամ գալ... յես իմ ավագակային խմբով հարյուրավոր մարդ եմ թալանել, հազար ու մի մեղք գործել... յես մարդասպան եմ, ա հեր, դու ինձ հետ մի խոսա, յես քու պահած, մեծացրած ել են Յեղիշը չեմ... յես իմ հալալ աշխատանքով ապրող ել են դարբինը չեմ. իմ ձեռքերս արնոտա... յես մեղապարտ եմ, յես հանցագործ եմ... սրանից հետո գյուղը գալ մեր տուն մտնել՝ յես չեմ կարող. բանդիտ Յեղիշը իր հորն ու մոր կարոտն առնելուց հետո, ել եստեղ չի մնա... նա ընդմիշտ կհեռանա և հավիտյան կկորչի... (Կուլսր ավերի մեջ առած լաց ե լինում).

ԲԱԴԱԼ.— Դու մեղապարտ չես, դու հանցագործ չես... դուր ես դու ըտենց մտածում, Յեղիշ ջան, Խորհրդային Իշխանությունը առաջվա կառավարության նման չի, վոր հախը-նհախին գա պատժի. դու վոր գնաս քու կամքով գեներերդ հանձնես, արածներիդ համար զըղջաս, ներողություն խնդրես, մեղքերդ ինչքան ել վոր ծանր ըլի, Խորհրդային Իշխանությունը քեզ կնեբի...

ՂԱԶԱՐ.— Բաղալ ամին ճիշտա ասում. բանվորա-գյուղացիական իշխանությունը քու կատարած մեղքերի ու հանցանքների տեղն ու պայմանները հաշվի կառնի... խաբված ու մոլորված բանվորներին և գյուղացիներին նա անմեղ տեղը չի պատժի. անցյալիդ համար նա քեզանից յերբեք վրեժ չի լուծի... (լսվում ե հրացանի պայթյուն):

ԲՈՂՈՐԸ.— Մենք շրջապատված ենք... (բոլոր սարսափած վոսֆի յեն կանգնում յել հրացաններ վեցնում):

ՂԱԶԱՐ.— Միք շփոթվի, գնացեք ձեզ համար զիրքեր բռնեք, բայց չկրակեք, կսպասեք մինչեվ իմ գալուն: Ձեր կողմից յես վորպես պատգամավոր կգնամ և նրանց հետ խաղաղությամբ ամեն ինչ կվերջացնեմ...

ԲՈՂՈՐԸ.— Բա Յեղիշը...
ՂԱԶԱՐ.— Թող նա մնումա մնա... (զնում ե):
Ա. ՊԱՀ.— Լավա ասում. գնանք մեզ համար զիրքեր բռնենք,

յեթե նրանք հաշտվելու կլինեն՝ կհաշտվենք, յեթե կռվելու կլինեն՝ կըկռվենք...

ԲՈՂՈՐԸ.— Գնանք... (զնում են):

Տ Ե Ս Ի Լ 4

ՅԵՂԻՇ ՅԵՎ ԲԱԴԱԼ.

ԲԱԴԱԼ.— Վեր կաց, Յեղիշ ջան, մենք ել գնանք: Հերիքա ինչքան տնից-տեղից դադարգյուն ընկած, հալածական ու թափառական կյանք վարեցիր... Յերկու տարիա քեզ համար դարդ անելով սրտներս մաշվեց... Յերկու տարիա քու ճամփին մտիկ տալով աչքներս ջուր կըտրեց... խեղձ մերդ ու քիրտ արտասուքը աչքներին անհամբեր սրտով քեզ են սպասում, վերկաց գնանք... (Յերկու կողմից սկսվում ե հրացանաձգություն: Յեղիշը իր նսած սեղից իսկույն վեռ ե կենում յել հրացանը վեցնում):

ՅԵՂԻՇ.— Կռիվը սկսվեց, յես գնում եմ... (ուզում ե գնալ Բադալը բռնում ե):

ԲԱԴԱԼ.— Ո՛ւր ես գնում, Յեղիշ ջան...

ՅԵՂԻՇ.— Կուվում յես նրանց մենակ չեմ թողնի. իմ կողմից դա նամարդություն-անազնվություն կլնի... Նրանց հետ յես յերկու տարի ապրել եմ, նրանց հետ կռվել, նըրանց հետ ել թող մեռնեմ... (ուզում ե գնալ, նորից Բադալը բռնում ե):

ԲԱԴԱԼ.— Կաց, Յեղիշ ջան, մի գնա. մեր ոջախի կրակն ու ծուխը դու նորից մի հանգցրու... Ձեռքերդ դու նորից արյունոտ մի արա... աստված մի արասցե, գլխիդ մի փորձանք յեկած տեղը, մենք կորած ենք... դու մեզ սաղ-սաղ գերեզման կտանես... մտածիր, մտածիր թե ի՞նչ ես անում...

ՅԵՂԻՇ.— Մտածելու ժամանակը չի ա հեր. հրեն լսում ես են տրաք-տրաքոցը, ենտեղ իմ ընկերների կյանքի ու

մահու կռիվնա սկսել, դու ինձ ասում ես մտածի...
Ինչի մասին մտածեմ... Մի տեղ, վոր հրացանի գըն-
դակներն են խոսում, ենտեղ մարդու միտքն ու լեզուն
ել չի գործում... Գնդակները արդեն դեսնեն գալի, ես
տեղ կանգնելը վտանգավորա... ես անտառից դու
դուրս գնա, են հեռուներում մի ապահով տեղ գտիր,
նստիր ինձ սպասիր, մինչեւ յես իմ գործը եստեղ կը
վերջացնեմ—կգամ...

ԲԱԴԱԼ.— Եդ արյունոտ գործից դու հեռու կաց... Եդ ճանա-
պարհով դու քեզ համար լավ որ ու կյանք չես ստեղ-
ծի... գնանք տուն, կապվիր քու հալալ աշխատանքին,
քու արդար քրտինքովդ քեզ համար հանգիստ ու ա-
զատ ապրիր:

ՅԵՂԻՇ.— Յես կապված եյի իմ հալալ աշխատանքին: Յես սո-
վոր եյի իմ արդար քրտինքով ազատ ու հանգիստ
ապրելուն... Ինչի ինձ կտրեցին իմ հալալ աշխատան-
քից... Ինչի իմ ձեռքից իմ չաքունչն ու գնդանը խլե-
ցին ու նրա տեղը ես հրացանը տվին: Յես իմ տանը
իմ հարազատներին հետ, իմ ռճախում, ազատ ու հան-
գիստ ապրում եյի, ինչի համար ինձ դուրս արին իմ
տնից ու գցեցին ինձ ես չոլերը... Իսկ ես չոլերում
իրենց կյանքն ու գոյությունը պաշտպանելու համար
են ամենեղ թոչուններն իրար միս են ուտում, իրար
արյուն են խմում... ո՞... յես իմ գործը վերջացրի ա
հեր... (գնդակը հանկարծ գալիս կպչում ե Յեղիթին,
Յիթը կուրծք բռնում ե յեյ ճեսում ծառի կոնդի վրա):

Տ Ե Ս Ի Լ 5

ՆՈՒՅԵՔ, ՂԱԶԱՐ, ՀԵՏՈ ԽՈՒՄԲԸ ԶԵՎ ԶԵԿԻՍՏՆԵՐ.

Չեկիսները զինված յեյ կարմիր դրոշակով, իսկ խում-
բը զինաբափ յեյ օրջապասված չեկիսներով:

ՂԱԶԱՐ.— Յեղիշ ջան, մինչև իմ գնալ-նրանց ներկայանալս,
հրացանաձուլությունը արդեն սկսվել էր, բայց նրանց
հետ խոսելուց և ամեն բան պարզելուց հետո, անմի-
ջապես կռիվը դադարեցրվեց: Տղերքը անձնատուր
յեղան և հրես նրանց հետ գալիս են... (Յեղիթը վոս-
քի յե կանգնում)

ԶԵԿԻՍ.— Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-
պետության հայտարարած դեկրետի համաձայն, նե-
րուսն ե շնորհվում այն անձանց, վորոնք կամովին
կերպով անձնատուր են լինում և խոստովանվում ի-
րենց մեղքերը և ընդմիշտ խաչ դնում ու մոռացու-
թյան տալիս իրանց հանցավոր անցյալը... ներկա
թյան տալիս իրանց հանցավոր անցյալը... ներկա
դեպքում ձեզ վրա նույնպես տարածվում ե այս որեն-
քը... ուրեմն, դուք համապատասխան հիմնարկությու-
նը ներկայանալուց և պատշաճ հարցաքննությունն
ու ցուցակագրությունը կազմելուց հետո, դուք վոր-
պես ազատ քաղաքացիներ անմիջապես ազատ կար-
ձակվեք...
(Յեղիթը իր վրա ունեցած զենքը դնում ե գեսնին)

ՅԵՂԻՇ.— Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-
պետության ցույց տված մեծահոգության և ներողա-
մտության համար հայտնում ենք մեր շնորհակալու-
թյունն ու գոհունակությունը... մենք մեր գլուխը խո-
նարում ենք բանվորների ու գյուղացիների արյու-
նով ներկված եղ կարմիր դրոշակի առաջ... մենք
մեզ հանցավոր ու մեղավոր ենք զգում. տարեք մեզ
և հանձնեք դատարանին և թող մեզ դատեն... ես
կարմիր դրոշակի առաջ մենք յերդվում ենք, վոր մենք
Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-
պետությանը միշտ հավատարիմ կմնանք... ես
կարմիր դրոշակի առաջ մենք ազնիվ խոսք ենք տա-
լիս, վոր մեր ես տանջված սրտի ու հոգու խորքում
կատարված ատելության ու վրեժառության բոլոր
զգացումները կգոհնչացնենք մեր մեջ և մաքուր սըր-
տով կմտնենք ձեր շարքերը և կծառայենք են գաղա-
փարներին, են նպատակներին վորին դուք եք ծառա-
յում... հեղափոխության կրակը թող մեր սրտերն ել
վառի մեր խավար միտքն ել լուսավորի, վոր այսու-

հետև մենք ել ձեզ պես մտածենք, մենք ել ձեզ պես գործենք... (ուճաբափ վայր ե ընկնում),

(ամենքը շփոթվում են)

ՂԱԶԱՐ.— Ի՞նչ պատահեց, Յեղիշ ջան...

ՉԵԿԻՍՏ.— Նա վերավորված ե. նրանից արյուն ե հոսում...

ԲԱԴԱԼ.— Վայ ինձ տունս քանդվեց... եղ գլուխս ի՞նչի ինձ չկապվ... Յեղիշ ջան, իմ կորած բալա. դու եղ ի՞նչ որի ընկար... դու եղ ի՞նչ կրակ թափեց իր մեր գլխին... գնամ մորդ ու քվորդ յես ի՞նչ ասեմ... գնամ նրանց ի՞նչ շուղար տամ...

(Ա. Բ. պահակները Բազալին են բռնում հանգստացնում, Չեկիստն ու Ղազարը Յեղիթի կուրծքն են բաց արել յեվ վերքը կապում, Իսկ Յեղիթը իր ընկած սեղում սկսում ե զառանցել: Պրածեկտորի լույսի օակ յերեվում ե Մանիօակը սպիտակ Եորերը հագած, սպիտակ ծաղիկների փուկօքը ձեռքին բռնած, մազերը քափված ուսերին)

ՅԵՂԻՇ.— Դենը կացեք. ճանապարհ տվեք. Մանիշակը գալիսա. նրա սև սաթի նման փայլող մազերը փռվելա ուսերին... Տեսեք տեսեք թե ինչպես կամար ունքերի տակ նրա սև ու կլոր աչերը կրակի պես վառվումա... նրա սիրուն յերեսը տեսեք թե ինչպես լուսնի նման փայլումա... դենը կացեք. թողեք տեսնեմ են ովա դժողքի դոները նրա առաջ բաց անում... թողեք տեսնեմ Ռստամ բեգը են սլամ համարա թուր ու թըվանգ պատրաստում... Եյ Ջիլավիխանենց Յեգոր, ի՞նչ ես մեջքդ դեմ տվել դոան առաջ կանգնել. դենը կաց. Մանիշակին յես տանում եմ մեր տունը... Նշանդրեքս ձեր տանը արի իսկ հարսանիքս յես մեր տանը պտի անեմ... թող. թող... (ընկնում ե մեռնում)

ԲԱԴԱԼ.— Յեղիշ ջան. իմ կորած բալա... (լաց ե լինում)

ՂԱԶԱՐ.— Յեղիշ ջան. իմ ազիզ ընկեր... (լաց ե լինում)
խումբը յեվ չեկիստները վրա չեն գցում, են յեվ լուռ կանգնում.

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ ՆԵՂԻՆԱԿԻ ՆԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՆԱՐԽԻՍՏ—վողեվիլ 1 գործ. սպառված
2. ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐ կամ ՍՈՒՆԴՈՒԿԵՆՅ ԳԱՐՈՅԻ ՏԱՆԸ—պարոդիա 2 գործ. սպառված:
3. ԳՈՐԾԱԴՈՒԼ կամ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ՁՈՂԵՐ:
4. ԲԱՆԴԻՏՆԵՐ—դրամա 3 գործ. 2 պատկ:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՐ

1. ՆԱԽՈՐՅԱԿԻՆ—դրամա 4 գործ. 3 պատկ.

ՎԱՐՄ-ՈՒՅԻ



ԳԻՆՆ Ե 1 ՌՈՒՆԼԻ

4

« Ազգային գրադարան



NL0365868

56.927